

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

**Ձեռնարկ**

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

### Ձեռնարկ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. - Եր.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2018.- 150 էջ

Սույն ձեռնարկի նպատակը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետների կողմից իրականացվող երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացին աջակցելն է:

unicef

յուրաքանչյուր երեխայի համար

Սույն ձեռնարկը տպագրվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը երեխայի իրավունքների գծով համաշխարհային առաջատարն է, որի գործունեության նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար ամենուրեք ապահովել հավասար հնարավորություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենակարիքավոր և խոցելի երեխաներին:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեության մասին ավելին իմանալու համար կարող եք այցելել www.unicef.am և www.unicef.org կայքերը կամ հետևել մեզ հետևյալ սոցիալական հարթակներում՝

Facebook.com/UNICEFArmenia

Instagram.com/UNICEF_Armenia

**«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում»**

մեթոդական ուղեցույց

**Մշակել են՝**

Լիլիթ Ասրյան

Վարդուհի Կատինյան

Հայկուհի Ադամյան

Լուսինե Հակոբյան

Անի Գարեգինյան

Հեղինե Մարգարյան

Լիանա Մարգարյան

Ռուզաննա Մուրադյան

Գայանե Հարությունյան

Ռուզաննա Պետրոսյան

Լիլիթ Զաքարյան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

Հասկացությունների և եզրույթների բառարան 5

**ՄԱՍ 1**

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում 6

**ՄԱՍ 2**

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում. Տարածքային մակարդակ 8

**ՄԱՍ 3**

Հավելվածներ /փաստաթղթեր/ 12

Հավելվածներ /գնահատման գործիքներ/ 31

**ՄԱՍ 4**

Գրականություն 119



©UNICEF Armenia/2018/Osipova

# ՆԱԽԱԲԱՆ

«Կրթության մասին»[1] Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի թիվ ՀՕ-297 օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ու ներառական կրթության հիմնադրման, որի հիմքում յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն է, կրթության կազմակերպումն իր համայնքում՝ առանց ընտանիքից մեկուսացնելու, և կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման սկզբունքների ապահովումը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հասարակության մեջ ներառման գործընթացը կախված է այդ երեխաների նկատմամբ հասարակության վերաբերմունքից, նրանց կյանքի և առանձնահատկությունների մասին շրջապատողների տեղեկացվածությունից: Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած յուրաքանչյուր աշակերտի համար ապահովվում, որ այդ նա ստանա իր կարողություններին և կարիքներին համապատասխան որակյալ կրթություն: Իսկ որակյալ կրթության ապահովման համար անհրաժեշտ է ուսումնական գործընթացում երեխային դիտել և գնահատել որպես անհատ՝ իր ընդունակություններով, կարողություններով, հետաքրքրություններով և դժվարություններով:



[1]«Կրթության մասին», ՀՀ օրենք, 6-րդ հոդված, մաս 6:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը երեխայի զարգացման տարբեր փուլերում նրա մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքագրման ու տվյալների համակարգման գործընթաց է, որն իրականացվում է երեխայի բնականոն միջավայրում՝ ապահովելու երեխայի ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորումը, անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների և միջավայրային հարմարեցումների տրամադրումը[2]:

Սույն ձեռնարկով մենք ձգտել ենք օգնել տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության խմբերին գնահատել և աջակցել երեխաներին, որոնք ունեն ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորման, միջավայրային հարմարեցումների և անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների տրամադրման կարիք:

## Հասկացությունների և եզրույթների բառարան

**Կրթության առանձնահատուկ պայմաններ -**
երեխայի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև՝ մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն:

**Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա -**
ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող երեխա, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ:

**Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ -**
ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին:

**Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն -**
երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, կրթությանն աջակցող մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող ծառայություններ մատուցող կազմակերպություն:

**Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում -**
երեխայի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկման, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտման և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանման գործընթացների անհրաժեշտությունը:

**Ֆինանսավորման բարձրացված չափաքանակ -**
Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանված ֆինանսավորման չափ, որն անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման համար:

**Անհատական ուսուցման պլան (ԱՈւՊ) -**
հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է երեխայի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները):

**Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլան (ՄԱԾԱՊ) -**
երեխայի կրթության առանձահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է երեխային տրադրվող մանկավարժահոգեբանական ծառայությունների ժամանակահատվածը, տեսակը, տևողությունն ու ծավալները:



[2]«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04. 2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, 32-րդ կետ:



©UNICEF Armenia/2016/Pirozzi

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ



«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ընդունված փոփոխությունների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սկսեց գործել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը՝ հիմնված Առողջապահության Միջազգային Կազմակերպության Ֆունկցիոնալության, Հաշմանդամության և Առողջության Միջազգային **Դասակարգման վրա: Դրանով իսկ հաշմանդամության ընկալման բժշկական մոդելից անցում կատարվեց կենսահոգեբանասոցիալական մոդելին**, որը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա և

կոչ է անում ստեղծել լիարժեք մասնակցության հնարավորություններ հասարակության բոլոր անդամների համար: Երեխաների և երիտասարդների Ֆունկցիոնալության, Հաշմանդամության և Առողջության Միջազգային Դասակարգումը (ՖՄԴ-ԵԵ) իրենից ներկայացնում է մի համակարգ և դասակարգման կառուցվածք, որը թույլ է տալիս նկարագրել անձի մարմնի կառուցվածքը, ֆունկցիաները, գործունեությունն ու մասնակցությունը՝ պայմանավորված դպրոցի, տան և համայնքի միջավայրային գործոններով: Այն թույլ է տալիս նկարագրել ոչ միայն անձի արձագանքները միջավայրային պահանջների հանդեպ, այլ նաև հակառակը՝ անձի կարիքների հանդեպ միջավայրային արձագանքները: Բացի այդ, ՖՄԴ-ԵԵ-ի կիրառման արդյունքում ստացված երեխայի ֆունկցիոնալության նկարագիրը (գիտակցելով միջավայրային խթանիչների և արգելքների ազդեցությունը) խոստումնալից միջոց է առավել հարմար կրթական լուծումների կամ միջոցների սահմանման համար, որոնք կբավարարեն երեխայի կարիքները:

2013 թվականից ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի անմիջական մասնակցությամբ, միջազգային փորձագետների խմբի հետ համատեղ (Մանուելա Սանչես Ֆերեիրայի ղեկավարությամբ), Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնում առանձնացվեց և ադապտացվեց ՖՄԴ-ԵԵ վրա հիմնված գնահատման գործիքակազմ, որը այլ երկրներում արդեն իսկ հաստատված և վալիդացված էր (Պորտուգալիա, Իտալիա, Շվեյցարիա, Ճապոնիա) և որի հիման վրա նույն տարվա ընթացքում գնահատման կենտրոնի մասնագետների կողմից սկսեցին իրականացվել ՖՄԴ-ի վրա հիմնված փորձնական գնահատումներ:

Գնահատման գործիքների ընտրությունը պայմանավորված է եղել նրանով, թե կենսագործունեության որ ոլորտներում են առկա խնդիրները, որքանով են դրանք խանգարում կամ խոչընդոտում անձի լիարժեք գործունեությանն ու մասնակցությանը: Ֆունկցիոնալ գնահատման նպատակով կիրառվեցին հարցաշարեր՝ ուղղված ծնողներին և ուսուցիչներին, երեխայի խաղային և ուսումնական գործունեությունը գնահատող թեստեր, զարգացման և ինքնագնահատման, ինչպես նաև անհրաժեշտ աջակցման հաճախականությունը և ինտենսիվությունը գնահատող սանդղակներ: Այս գործիքների կիրառման արդյունքում կազմվեցին երեխաների ֆունկցիոնալության մասին նկարագրերը:

Վերոնշյալ փորձի հիման վրա՝ սկսած 2015 թվականից Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնը (այսուհետ՝ Հանրապետական մանկավարժա-հոգեբանական կենտրոն) Հայաստանի Հանրապետությունում հաջողությամբ իրականացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝ հիմնված Առողջապահության Միջազգային Կազմակերպության ՖՄԴ-ԵԵ միջազգային դասակարգման վրա:


©UNICEF Armenia/2018/Osipova

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ



Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և վկայագրման գործընթացը, ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2014 թվականի դեկտեմբերի 1-ի Հայաստանի Հանրապետության 200-Ն օրենքի համաձայն, իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում (առաջին, հինգերորդ և տասներորդ դասարաններում), ինչպես նաև՝ երբ երեխայի մոտ ուսումնառության ընթացքում, արտակարգ իրավիճակներով պայմանավորված, նկատվում են կայուն դժվարություններ: Գնահատումն իրականացվում է երկու փուլով.

1. դպրոցական մակարդակի գնահատում, որն իրականացվում է ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝ բացահայտելու կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումները, դրանք առաջացնող միջավայրային խոչընդոտող գործոնները և դրանց հաղթահարման խթանիչ գործոնները[3]:

2. տարածքային մակարդակի գնահատում, որն իրականացվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից՝ որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը և դրանով (կամ դրանցով) պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը[4]:

Վկայագրված երեխայի առաջընթացը կամ հետընթացը գնահատելու համար յուրաքանչյուր տարի իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերագնահատում՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝ դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի հետ համատեղ:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման նպատակն է.

- ապահովել ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ,
- ՀՀ օրենքով սահմանված կարգով տրամադրել ֆինանսավորման բարձրացված չափաքանակ,
- սահմանել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը մասնակցային գործընթաց է, իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան, որին մասնակցում են երեխան, նրա ծնողը/օրինական խնամակալը, դպրոցի և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության խումբը, այդ թվում նաև ուսուցիչները, ուսուցչի օգնականները: Այն իրականացվում է երեխայի բնական միջավայրում՝ դպրոցում, մանկապարտեզում, ընտանիքում: Առանց ծնողի գրավոր համաձայնության, կրթական հաստատությունն իրավասու չէ դիմելու Տարածքային կենտրոն՝ երեխայի տարածքային մակարդակի գնահատումն իրականացնելու:

Տարածքային կենտրոնի կողմից երեխայի տարածքային մակարդակի գնահատման գործընթացը համակարգում է Տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը[5]: Փաստաթղթերը ստանալուց հետո Տարածքային կենտրոնը նշանակում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը սկսելու օրը՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում, որի մասին տեղեկացնում է դպրոցի տնօրինությանը: Տարածքային մակարդակի գնահատումը տևում է նվազագույնը մեկ շաբաթ[6]:

**Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման երկրորդ՝ տարածքային մակարդակի ընթացակարգ**

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի երկրորդ մակարդակի գնահատում իրականացնելու նպատակով Տարածքային կենտրոնի տնօրենի հրամանով ձևավորվում է գնահատող մասնագետների խումբ / սոց. մանկավարժ, հոգեբան, հատուկ մանկավարժ/, և սկսվում է գնահատման գործընթացը՝ ըստ հետևյալ քայլերի.

1. Դպրոցը ներկայացնում է երեխային կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի տարածքային մակարդակի գնահատման ներկայացնելու դիմումը՝ ծնողի համաձայնության առկայությամբ՝ կից փաստաթղթերով[7].

- երեխայի ծննդյան վկայականի և ծնողի անձնագրի պատճենները,
- երեխայի անձնական գործի պատճենը,
- երեխայի առողջական վիճակի մասին փաստաթուղթը,
- դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկը:
- կանխարգելիչ միջամտությունների պլանը՝ առկայության դեպքում:



[3]«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04. 2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, -րդ 3-րդ, 4-րդ կետեր:

[4]«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, 40-րդ կետ:

[6]«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, 41-րդ կետ:

[5]«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, 44-րդ կետ:

[7]Տե՛ս «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում» մեթոդական ձեռնարկի հավելվածներ բաժինը:

**2.** Տարածքային կենտրոնի սոցիալական մանկավարժը ծնողի հետ զրույցի ընթացքում ներկայացնում է գնահատման նպատակները և պայմանները, կիրառում է «Երեխայի և ընտանիքի սոցիալական պատմության վերաբերյալ հարցաշարը»՝ տեղեկություններ հավաքելով երեխայի ընտանիքի կազմի, սոցիալական վիճակի, զարգացման առանձնահատկությունների և առկա առողջական վիճակի մասին: Հարցաշարի արդյունքներն ամփոփվում են համապատասխան ձևաթղթում /հավելված 1/:

**3.** Տարածքային կենտրոնի հատուկ մանկավարժի և հոգեբանի կողմից սկսվում է երեխայի դիտարկման գործընթացը տարբեր միջավայրերում /դասարան, ճաշարան, խաղահրապարակ, բակ/, ինչպես նաև զրույցի միջոցով հավաքագրվում է տեղեկատվություն՝ դիտարկվող երեխայի ծնողներից, դասավանդող ուսուցիչներից, համադասարանցիներից և ուսումնական հաստատության այլ մասնագետներից /հավելված 2/[8]:

**4.** Ստանալով բավարար տեղեկատվություն՝ գնահատող մասնագետների խումբը /այսուհետ՝ Թիմ/ իրականացնում է գնահատող **Թիմի առաջին հանդիպումը**, որի ընթացքում ամփոփվում են երեխայի զարգացման և ֆունկցիոնալության վերաբերյալ ստացված տեղեկությունները, այն է՝ առաջին մակարդակի գնահատման արդյունքները, ծնողին ուղղված հարցաշարերի գրանցման թերթիկները, բժշկական փաստաթղթերը: Քննարկման արդյունքում թիմը նախանշում է երեխայի ակտիվության և մասնակցության այն ոլորտները, որոնք պահանջում են լրացուցիչ հետազոտություն /հավելված 3/: Առաջին հանդիպման ժամանակ Թիմը որոշում է գնահատման հետագա քայլերը՝ ընտրելով համապատասխան գործիքներ, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում գնահատման գործընթացում ներառելով այլ մասնագետներ: Գործիքների ընտրությունը պայմանավորված է նրանով, թե զարգացման ո՞ր ոլորտներում են խնդիրները՝ կապված ուսումնական գործունեության մեջ երեխայի լիարժեք մասնակցություն ունենալու հետ, և նպատակ ունի լիարժեք բացահայտել խնդրի առկայությունը տվյալ ոլորտում և խնդրի խորության աստիճանը[9]: Գործիքակազմը ներկայացված է դասակարգված՝ ըստ հետևյալ չափանիշների՝ տարիքային խմբեր, զարգացման ոլորտներ և ՖՄԴ բաղադրիչներ /հավելված 4, 5/: Պահպանելով հավելված 5-ում նշված չափանիշները՝ գնահատողն ազատ է գործիքի ընտրության հարցում:

**6.** Ընտրված գործիքակազմը կիրառելուց և լիարժեք տեղեկություններ հավաքագրելուց հետո Թիմի կողմից լրացվում են գնահատման արդյունքների ամփոփաթերթերը /հավելված 6,7,8/, որոնք ներկայացվում են **Թիմի երկրորդ հանդիպմանը**:

Թիմի 2-րդ հանդիպումը իրականացվում է ուսումնական հաստատությունում՝ տվյալ հաստատության ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի և ծնողների հետ միասին:

Այս հանդիպման ընթացքում Թիմը՝

- Քննարկում և ամփոփում է ստացված տեղեկատվությունը՝ լսելով և համադրելով բոլորի կարծիքները:
- Կայացնում է որոշումներ երեխայի կարիքների, աջակցության աստիճանի և ոլորտների վերաբերյալ, որը արձանագրվում է Թիմի 2-րդ հանդիպման ձևաթղթում /հավելված 9/:

Երկրորդ հանդիպման արդյունքում Թիմը կազմում է երեխայի «Ֆունկցիոնալության նկարագիրը», «Եզրակացությունը» և «Արձանագրությունը», որտեղ նկարագրում է երեխայի կարողությունները, դժվարությունները, ինչպես նաև խթանող անհրաժեշտ միջավայրային գործոնները և պայմանները՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման չափանիշներին» համապատասխան /հավելված 10,11,12/:

«Ֆունկցիոնալության նկարագիրը»,«Եզրակացությունը» և «Արձանագրությունը» ներկայացվում են Տարածքային կենտրոնի տնօրենի հաստատմանը գնահատումն իրականացնելուց հետո՝ 11-րդ աշխատանքային օրը: Նշված փաստաթղթերի մեկ օրինակը պահվում է Տարածքային կենտրոնում, իսկ մեկ օրինակը տրվում է երեխայի ծնողին, ով իր հերթին այն ներկայացնում է իր երեխայի կրթության վայր հանդիսացող հանրակրթական ուսումնական հաստատություն: Ուսումնական հաստատության տնօրենը առավելագույնը 5-օրյա



[8]«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04. 2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, 43-րդ կետ:

[9]Գնահատման այս փուլի նպատակն է ոչ միայն լիարժեք բացահայտել ուսումնական գործընթացին երեխայի մասնակցությունը սահմանափակող խնդիրները, այլև որոշել դրանց խորությունը, ինչպես նաև գտնել անհրաժեշտ աջակցության միջոցներ և որոշել դրանց չափը:

ժամկետում դիմում է Տարածքային կառավարման պետական մարմին՝ վկայագրելու երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

**7. Երրորդ հանդիպման** ընթացքում Թիմը և գնահատման գործընթացում ներգրավված բոլոր անձինք կազմում են կրթության կազմակերպման **Անհատական ուսուցման պլանը /ԱՈՒՊ/՝ իր մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասով /ՄԱԾԱՊ/**, իսկ ԱՈՒՊ-ը՝ առարկայական ծրագրերի հարմարեցումներով՝ ըստ անհրաժեշտության /1 տարվա համար/:

Եթե ծնողը համաձայն չէ Տարածքային կենտրոնի կողմից իր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի երկրորդ մակարդակի գնահատման արդյունքների հետ, ապա նա կարող է բողոքարկել գնահատման արդյունքները և իր երեխային ներկայացնել Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն[10]: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը ընթացք է տալիս երեխայի ծնողի գրավոր բողոքին՝ կապված Տարածքային կենտրոնի կողմից իր երեխայի երկրորդ մակարդակի գնահատման արդյունքների հետ ունեցած իր անհամաձայնության /հավելված 13/, այն ստանալու օրվանից առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերագնահատման գործընթացին չեն մասնակցում դպրոցական և տարածքային մակարդակների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասնագետները և ուսուցիչները:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 17.1-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը կշարունակի իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը այն մարզերում, որտեղ դեռևս չեն ստեղծվել տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ: Գնահատումը կիրականացվի համաձայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման նոր կարգի, որի արդյունքում վկայագիր ունեցող երեխայի կրթության կազմակերպման համար կտրամադրվեն համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3.1-րդ կետով սահմանված դեպքում կտրվի ֆինանսավորման բարձրացված չափաքանակ:



[10]«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04. 2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, 50-րդ կետ:



©UNICEF Armenia/2018/Osipova

# ՀԱՎԵԼՎԱԾ (փաստաթղթեր)

## Գրանցման թերթիկ

(երեխայի և ընտանիքի սոցիալական պատմության 3-5, 6-12, 13-17)

**Անուն, հայրանուն, ազգանուն՝** ______________________________

**Ծննդյան օր, ամիս, տարի՝** ____________ **ծննդյան վկայական N** ____________

**Ուսումնական հաստատություն՝** ____________________ **Դասարան՝** ________

**Արձանագրության ամսաթիվ՝** ____/_____/________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________



Սոցիալական մանկավարժ՝ ______________________________

/ստորագրություն, անուն, ազգանուն/

# ԴԻՏԱՐԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

**Գրանցման ամսաթիվ՝** ____/_____/_________

**Անուն, հայրանուն, ազգանուն՝** ________________________________

**Ծննդյան օր, ամիս, տարի ՝** ________________________________

**Ուսումնական հաստատություն՝** ________________________________

**Դասարան՝** ____________________

*Իմացական ոլորտ* ________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

*Հաղորդակցություն* ________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

Շարժունակություն ________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

*Միջանձնային շփում և հարաբերություններ* ________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

*Ինքնասպասարկում* ________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________

________________________________________________



Դիտարկողներ՝ ______________ ________________________

______________ ________________________

ստորագրություն անուն, ազգանուն

# Արձանագրություն

(գնահատման թիմի առաջին հանդիպման)

**Արձանագրության ամսաթիվ՝** ____/_____/________

**Անուն, հայրանուն, ազգանուն՝** ________________________________________

**Ծննդյան օր, ամիս, տարի՝** ____________________ **ծննդյան վկայական՝ N** ________________________

**Ուսումնական հաստատություն՝** ____________________________________ **Դասարան՝** _______________

**Առաջին մակարդակի գնահատման փաստաթղթեր.**

☐ Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկ
☐ Կանխարգելիչ միջամտությունների պլան
☐ Անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ)
☐ Բժշկական փաստաթուղթ

***Նախնական գնահատման արդյունքում որոշվեց.***

- ***Կատարել լրացուցիչ հետազոտություն հետևյալ ոլորտներում.***

☐ Սովորել և գիտելիքը կիրառել
☐ Ընդհանուր առաջադրանքներ և պահանջներ
☐ Հաղորդակցում
☐ Շարժունակություն
☐ Կյանքի հիմնական բնագավառներ
☐ Համայնքային, սոցիալական և քաղաքացիական կյանք
☐ Ինքնասպասարկում
☐ Կենցաղ
☐ Միջանձնային շփում և հարաբերություններ
☐ Կյանքի հիմնական բնագավառներ

- ***Գնահատման գործընթացին կցել հետևյալ մասնագետներին.***

☐ հոգեբան
☐ լոգոպեդ
☐ հատուկ մանկավարժ
☐ բժիշկ
☐ սոցիալական մանկավարժ
այլ՝____________________

- ***Կիրառել հետևյալ գործիքները.***

| | | |
|---|---|---|
| Երեխայի և ընտանիքի սոցիալական պատմություն | | Վաղ մանկական աուտիզմի գնահատման սանդղակ |
| Երեխայի և ընտանիքի հետազոտություն | | ARC-ի ինքնորոշման գնահատման սանդղակ |
| Երեխայի զբաղվածության ինքնագնահատում | | Երեխայի հոգեկան զարգացումը գնահատող փաթեթ |
| Ամեն ինչ իմ մասին | | Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ |
| Երեխաների աջակցության ինտենսիվության սանդղակ | | Խաղի վրա հիմնված բազմաոլորտ գնահատում |
| Դպրոցական ֆունկցիայի գնահատում | | |

Գնահատման թիմի մասնակիցներ՝ ________________ ________________________
________________ ________________________
________________ ________________________

# Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի Տարածքային մակարդակի գնահատման հիմնական գործիքակազմ

| | |
|---|---|
| **1.** | **«Երեխայի և ընտանիքի սոցիալական պատմություն»** - Լրացվում է սոցիալական մանկավարժի կողմից ծնողին ուղղված հարցերի պատասխանների արդյունքում, որի ընթացքում սոցիալական մանկավարժը ներկայացնում է գնահատման նպատակները և պայմանները, տեղեկություններ է հավաքում ընտանիքի կազմի, սոցիալական վիճակի մասին: Հարցաշարը մշակված է 3-5, 6-12, 13-17 տարիքային խմբերի համար: Այս հարցաշարում կան հարցեր ընտանիքի, երեխայի կարիքների և ծառայությունների, ինչպես նաև երեխայի ներկա գործունեության մասին: Հարցաշարը հիմնականում տեղեկություն է տալիս երեխայի Ինքնասպասարկման, Սոցիալ-հուզական ոլորտների մասին: |
| **2.** | **Երեխայի և ընտանիքի հետազոտություն** - Հարցաշարն ուղեցույց է գնահատման թիրախը, նպատակները սահմանելու համար /երեխայի ֆունկցիոնալության վերաբերյալ մտահոգությունների և ուժեղ կողմերի առաջնային հետազոտման համար/: Այն տեղեկություն է տալիս երեխայի ֆիզիկական և հոգեբանական զարգացման, ընթացիկ ծառայությունների և դրանց որակի վերաբերյալ, ինչպես նաև թույլ է տալիս գնահատել ընտանեկան, դպրոցական և համայնքային կյանքում երեխայի ակտիվության և մասնակցության մակարդակը: Գործիքը կազմված է 5 բաժիններից, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ ներառում է ենթաբաժիններ. 1. Ընդհանուր տեղեկություններ, 2. Մասնակցությունը համայնքային և ընտանեկան կյանքին, 3. Առօրյա կյանքի խնդիրներ, 4. Ընթացիկ ծառայություններ, 5. Առաջարկություններ և հավելյալ տեղեկություններ: Նախատեսված է 6-12 տարեկան երեխաների համար: |
| **3.** | **Երեխայի զբաղվածության ինքնագնահատում** - Սանդղակը տեղեկություն է տալիս երեխայի կամ երիտասարդի զգացողությունների, մասնագիտական կարողությունների և առօրյա գործունեության վերաբերյալ սեփական ընկալումների մասին: Սանդղակը ներառում է առաջադրանքներ՝ կապված դպրոցում, տանը, համայնքում իրականացվող գործունեության հետ: Նախատեսված է 6-17 տարեկան երեխաների համար: |
| **4.** | **Երեխաների աջակցության ինտենսիվության սանդղակ** - Նախատեսված է 5-15 տարեկան երեխաների համար: Այն տեղեկություն է տալիս երեխայի գործունեության 7 ոլորտների վերաբերյալ՝ կենցաղ, համայնքային գործունեություն, առօրյա կենսագործունեություն, դպրոցում մասնակցություն, դպրոցում սովորելու գործունեություն, առողջություն և ապահովություն, սոցիալական գործունեություն, ինքնավարություն: |
| **5.** | **Ամեն ինչ իմ մասին** - Գործիքը երեխայի ֆունկցիոնալության ընտանեկան գնահատում է և տեղեկություն է տալիս երեխայի զարգացման 4 ոլորտների մասին՝ Սոցիալական, Իմացական, Զգայաշարժողական, Խոսք և Հաղորդակցում: Հարցաշարը տեղեկություն է տալիս նաև երեխայի ներկա գործունեության, կարիքների և ծառայությունների մասին: Նախատեսված է 6-12 տարեկան երեխաների համար: |
| **6.** | **Դպրոցական ֆունկցիայի գնահատում** - Այն չափում է աշակերտի ֆունկցիոնալ առաջադրանքների կատարման ֆունկցիոնալությունը, որը խթանում է նրա մասնակցությունը դպրոցական ծրագրի ակադեմիական և սոցիալական բնագավառներում: Այն նախատեսված է հեշտացնելու միասնական ծրագրի պլանավորումը հաշմանդամության տարբեր տեսակի խնդիրներով աշակերտների համար: Նախատեսված է 6-17 տարեկան երեխաների համար: |
| **7.** | **Վաղ մանկական աուտիզմի գնահատման սանդղակ** - Սանդղակը նախատեսված է հոգեբանական զարգացման խնդիրներ ունեցող 2 տարեկանից բարձր երեխաների գնահատման համար: Սանդղակը կազմված է 15 բաժիններից: Յուրաքանչյուր բաժին ներառում է իրավիճակների չորս տարբերակ՝ ըստ երեխայի խնդրի խորության աստիճանի: Բաժինները հետևյալն են. 1. Փոխհարաբերությունները մարդկանց հետ 2. Նմանակում 3. Հուզական արձագանք 4. Մարմնի տիրապետում 5. Իրերի օգտագործում 6. Հարմարվողականությունը փոփոխություններին 7. Տեսողական արձագանք 8. Լսողական արձագանք 9. Համի, հոտառության, շոշափման, հպման արձագանք 10. Վախեր և տագնապայնություն 11. Խոսքային հաղորդակցում 12. Ոչ խոսքային հաղորդակցում 13. Ակտիվության մակարդակ 14. Մտավոր զարգացման մակարդակ 15. Ամփոփում |

| | |
|---|---|
| **8.** | **ARC-ի ինքնորոշման գնահատման սանդղակ** - Arc-ի ինքնորոշման գնահատման սանդղակը նախատեսված է 13-17 տարեկան երեխաների համար: Գործիքի կիրառումը պահանջում է ուսուցողական միջավայր: Սանդղակը բաղկացած է 3 բաժիններից՝ ինքնավարություն, հոգեբանական հասունացում, ինքնագիտակցում: Այդ բաժինները վեր են հանում կյանքի տարբեր իրավիճակներում երեխայի ինքնուրույն գործելու կարողությունը, ինչպես նաև նրա հետաքրքրությունները, համոզմունքները և նախընտրությունները: |
| **9.** | **Երեխայի հոգեկան զարգացումը գնահատող փաթեթ, Ա. Բեջանյան, Վ. Պապոյան, Ա. Գալստյան, Երևան, 2009**[1]: Այն տեղեկություն է տալիս զարգացման 5 ոլորտների մասին՝ Իմացական, Հաղորդակցում և հույզ, Խոսքի զարգացում, Շարժողական: Հարցաշարը նախատեսված է 3-14 տարեկան երեխաների համար: Հարցաշարում առկա առաջադրանքները և անցկացման պայմանները համապատասխանեցված են երեխայի տարիքային զարգացման փուլերին: |
| **10.** | **Խաղի վրա հիմնված բազմաոլորտ գնահատում /Թոնի Լինդեր/**[2] - Իրականացվում է խաղային միջավայրում: Այն տեղեկություն է տալիս երեխայի զարգացման 4 ոլորտների մասին՝ Իմացական, Սոցիալ-հուզական, Հաղորդակցում և խոսք, Զգայաշարժողական: Նախատեսված է 0-6 տարեկան երեխաների համար: |
| **11.** | **Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ**[3]- Չափորոշիչները նկարագրում են, թե ինչ պետք է իմանա և ինչ պետք է կարողանա անել երեխան որոշակի տարիքում՝ հաշվի առնելով տարիքային բնականոն զարգացման օրինաչափությունները և ազգային-մշակութային առանձնահատկությունները: Այն տեղեկություն է տալիս զարգացման մի քանի ոլորտների վերաբերյալ՝ Շարժողական, Ինքնասպասարկման, Առողջության պահպանման և անվտանգության, Սոցիալական, Հուզական և անձնային, Սովորելու նկատմամբ վերաբերմունք, Իմացական, Խոսք և հաղորդակցում: Այս չափորոշիչները թույլ են տալիս սահմանելու զարգացման նպատակները, որոնց երեխաները պետք է հասնեն ծննդից մինչև վեց տարեկան հասակը, բարելավելու ուսումնական միջավայրը, ապահովելու ուսումնառության շարունակական գործընթացը: |



[1]Երեխայի հոգեկան զարգացումը գնահատող դիագնոստիկ փաթեթ, Մեթոդական ուղեցույց, Բեջանյան Ա., Պապոյան Վ., Գալստյան Ա., Հեղինակային հրատարակություն, 2009, 134 էջ

[2]TPBA 2 - Transdisciplinary Play-Based Assessment, https://portfolio.du.edu/pc/port.detail?id=50272
Ձեռնարկում գործիքը տեղադրված չէ՝ պայմանավորված ծավալի մեծությամբ:

[3]«Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ» գործիքի էլեկտրոնային տարբերակը կարող եք տեսնել՝ անցնելով հետևյալ հղումով՝
https://ninazaqeyan.files.wordpress.com/2017/12/erexaneri-zargacman-ev-krtakan-chaporoshichner1.pdf

| Հոգեբանական հետազոտության գործիքակազմ | | | |
|---|---|---|---|
| **Հետազոտության գործիք** | **Նկարագրություն** | **Ոլորտ** | **Տարիք** |
| Թեմմլ, Դորկի, Ամենի «Տագնապայնության թեստ» մեթոդիկա | Թեմմլ, Դորկի, Ամենի «Տագնապայնության թեստ» մեթոդիկայի նպատակն է բացահայտել երեխաների տագնապայնության արտահայտման մակարդակը, հուզական հարմարողականությունը սոցիալական իրավիճակներին, հուզական վերաբերմունքը այս կամ այն սոցիալական իրավիճակներում: Այն անուղղակի տեղեկատվություն է տալիս նաև երեխայի միջանձնային փոխհարաբերությունների մասին: | Հուզակամային ոլորտ | 4-10տ. |
| Ռենե Ժիլի «Ֆիլմ-թեստ» մեթոդիկա | Ռենե Ժիլի «Ֆիլմ-թեստ» մեթոդիկայի նպատակն է ուսումնասիրել երեխայի սոցիալական հարմարողականությունը, միջանձնային հարաբերությունների ոլորտն ու նրա առանձնահատկությունները, ներընտանեկան հարաբերությունների ընկալումը, երեխայի վարքաձևերը տարբեր սոցիալական միջավայրերում: Այս տեսողական-խոսքային մեթոդիկան հնարավորություն է տալիս բացահայտել երեխայի միջանձնային հարաբերությունների կոնֆլիկտային ոլորտները: | Միջանձնային փոխհարաբերություններ, շփում և հաղորդակցում | 4-12տ. |
| Ռոզենցվեյգի «Նկարային ֆրուստրացիա» մեթոդիկա | Ռոզենցվեյգի «Նկարային ֆրուստրացիա» մեթոդիկան ուսումնասիրում է երեխայի սոցիալական հարմարման մակարդակը, վարքային դրսևորումները: Թեստի նպատակն է բացահայտել երեխաների վարքային հակազդումները անհաջողությունների հանդիպելիս, ինչպես նաև հետազոտել անձի գործունեությանն ու պահանջմունքների բավարարմանը խոչընդոտող իրավիճակներից դուրս գալու հավանական ելքերը, ինքնապաշտպանական հմտությունների արտահայտվածության մակարդակը: Նշված մեթոդիկայի օգնությամբ հետազոտվում են ուժեղ ազդակների նկատմամբ այնպիսի հակազդումներն ու պաշտպանական մեխանիզմները, ինչպիսիք են՝ ագրեսիան, տեղափոխումը, նույնականացումը, պրոյեկցիան, ֆանտազիան, ռեգրեսիան, ապատիան, ճնշումը, փոխհատուցումը, ֆիքսացիան, ռացիոնալիզացիան և այլն: | Վարքային ոլորտ, սոցիալական հարմարում | 5-14տ. |
| Ինքնագնահատականը ուսումնասիրող «Աստիճան» մեթոդիկա | Այս պրոյեկտիվ մեթոդիկան ուսումնասիրում է երեխայի ինքնաընկալման ոլորտը, ինքնագնահատականի համարժեքությունը, պատկերացումները իր մասին, ինչպես նաև՝ այլ մարդկանց կողմից իրեն տրվող գնահատականները: Մեթոդիկայի միջոցով բացահայտվում է երեխայի և այլ մարդկանց պատկերացումների համապատասխանությունը: Այն պարզում է նաև իրական «ես»-ի՝ «ինչպիսի՞ն եմ ես» և իդեալական «ես»-ի՝ «ինչպիսի՞ն եմ ցանկանում լինել», համապատասխանությունը:<br>«Աստիճան» մեթոդիկայի օգնությամբ հնարավոր է նաև բացահայտել այս կամ այն ինքնագնահատականի ձևավորման պատճառները: | Ինքնաընկալման ոլորտ | 4-10տ. |

| | | | |
|---|---|---|---|
| Մ. Պանֆիլովայի «Վախեր տնակում» մեթոդիկա | «Վախեր տնակում» մեթոդիկան վեր է հանում և մասնավորեցնում երեխաների մոտ գերակայող վախերի տեսակները: Տարբերակվում է վախերի 29 տեսակ, որոնք իրենց հերթին բաժանվում են մի քանի խմբի.<br>• Բժշկական վախեր՝ ցավ, ներարկումներ, բժիշկներ, հիվանդություններ,<br>• Վախեր՝ կապված ֆիզիկական վնաս կրելու հետ՝ երթևեկության միջոցներ, անսպասելի ձայներ, հրդեհ, պատերազմ, բնական աղետներ,<br>• Մահվան վախեր,<br>• Վախ կենդանիներից և հեքիաթային հերոսներից,<br>• Մթության վախ և վախ՝ սարսափ երազներից,<br>• Տարածական վախեր՝ վախ բարձրությունից, խորությունից, փակ տարածություններից,<br>• Սոցիալ-միջնորդավորված վախեր՝ վախ մարդկանցից, երեխաներից, պատիժներից, մենակ մնալուց, սխալվելուց, ուշանալուց: | Վախեր, հուզակամային ոլորտ | 3-10տ. |
| «Շուլտեի աղյուսակներ» մեթոդիկա | Այս մեթոդիկան հետազոտում է ուշադրության կայունության և կենտրոնացվածության որակը, աշխատունակության մակարդակը, ինչպես նաև աշխատանքի արդյունավետությունն ու հոգեկան կայունությունը: | Ճանաչողական ոլորտ, իմացական գործընթացներ | 6-12տ. |
| «Պիկտոգրամմա» մեթոդիկա (Ա. Լուրիա) | «Պիկտոգրամմա» մեթոդիկան ուղղված է հիշողության գործընթացների՝ մասնավորապես միջնորդավորված մտապահման առանձնահատկությունների և նրա արդյունավետության ուսումնասիրմանը: | Ճանաչողական ոլորտ, իմացական գործընթացներ | 6-15տ. |
| Ռավենի «Գունավոր պրոգրեսիվ մատրիցաներ» մեթոդիկա | «Գունավոր պրոգրեսիվ մատրիցաներ» մեթոդիկայի նպատակն է ուսումնասիրել մտածողության տրամաբանությունը, ինտելեկտի զարգացման մակարդակը: | Ճանաչողական ոլորտ, իմացական գործընթացներ | 6-9տ. |
| Ռավենի «Պրոգրեսիվ մատրիցաներ» (սև-սպիտակ տարբերակ) | Մեթոդիկայի նպատակն է ուսումնասիրել մտածողության տրամաբանությունը, ինտելեկտի զարգացման մակարդակը: | Ճանաչողական ոլորտ, իմացական գործընթացներ | 8տ. և բարձր |

# Հոգեբանական հետազոտման քարտ Հ/հ

**Անուն, հայրանուն, ազգանուն՝** ____________________

**Ծննդյան օր, ամիս, տարի՝** ____________________

**Գրանցման համար՝** ____________________

**Ուսումնական հաստատություն՝** ____________________

**Արձանագրության ամսաթիվ՝** _____/______/_________

_________________________ի հոգեբանական առանձնահատկությունների հետազոտության տվյալների վերլուծությունը հնարավորություն տվեց կատարել հետևյալ եզրակացությունները.

| | |
|---|---|
| **Զգայություն և ընկալում**<br>Զգայարանների ակտիվություն, զգայունակություն, Ընկալման իմաստավորվածություն, ամբողջականություն, առարկայականություն, ռեպրեզենտատիվ համակարգ | |
| **Ուշադրություն**<br>Ուշադրության կենտրոնացվածություն, կայունություն, բաշխում, տեղափոխելիություն, կամածին և ոչ կամածին ուշադրություն | |
| **Հիշողություն**<br>Կարճատև հիշողության ծավալ, Մտապահման և վերարտադրման գործընթացներ, հիշողության տեսակ, ոչ համարժեք զուգորդություններ | |
| **Մտածողություն և երևակայություն**<br>Մտքի ճկունություն, արագություն, մտածողության տեսակ, գործողությունների պատճառահետևանքային կապերի գիտակցում, վերլուծահամադրական գործընթացներ, ստեղծարար մտածողություն, երևակայության մեխանիզմներ | |
| **Հուզակամային ոլորտ**<br>Հուզական դրսևորումներ, տագնապայնություն, վախեր, ֆոբիաներ, տրամադրության ֆոն, հուզական հակազդումներ, կամային որակներ | |
| **Ինքնաընկալում**<br>ինքնագնահատական | |

| | |
|---|---|
| **Շփման և հաղորդակցման ոլորտ**<br>Շփման հմտություններ, աֆֆիլյացիայի դրդապատճառներ, միջանձնային փոխհարաբերություններ փոքրերի, հասակակիցների և մեծահասակների հետ, ներընտանեկան փոխհարաբերություններ, դաստիարակության ոճ | |
| **Սոցիալական հարմարում** | |
| **Վարքային ոլորտ**<br>Ագրեսիայի արտահայտման մակարդակ, վարքի վերահսկողություն, վարքային դրսևորումների ադեկվատություն, ինքնապաշտպանական հմտություններ, վարքային սովորույթներ, շեղվող վարքային հակումներ, կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարման մեխանիզմները, սեռադերային վարքի առանձնահատկություններ, ակտիվության մակարդակ | |
| **Ուսման նկատմամբ վերաբերմունք**<br>Հետաքրքրություններ, կրթական դրդապատճառներ, հմտություններ, մասնագիտական կողմնորոշում | |
| **Զրույց**<br>խոսքային հաղորդակցման առանձնահատկություններ, զրույցի ենթատեքստի ընկալում, փոխաբերական իմաստների ընկալում, զրույցի ընթացքում սահմանի և տարածության զգացում, զրույցի բովանդակային ադեկվատություն | |

**Կիրառված գործիքներ՝** ____________________

**Աջակցության ոլորտներ՝** ____________________

____________________

____________________

Հոգեբան՝ ____________________

/ստորագրություն, անուն, ազգանուն/

__________տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն՝ ____________________

/ստորագրություն, անուն, ազգանուն/ Կ. Տ.

# Խոսքի հետազոտման քարտ Դ/հ

**Անուն, հայրանուն, ազգանուն՝** ____________________________________________

**Ծննդյան օր, ամիս, տարի՝** ______________________ **ծննդյան վկայական N** ____________________

**Ուսումնական հաստատություն՝** ________________________________ **Դասարան՝** ______________

**Արձանագրության ամսաթիվ՝** _____/______/_________

**Արձանագրություն** /նշել հաղորդակցման ընթացքում խոսքի ընկալման, ինքնուրույն խոսքի, ոչ խոսքային հաղորդակցման առանձնահատկությունները, սովորողի խոսքի, բառապաշարի, հնչյունահնչույթային, քերականական և շարահյուսական կառույցների, արտաբերական ապարատի, գրավոր խոսքի դեպքում՝ ընդհանուր և մանր շարժողական ունակությունների առանձնահատկությունները/:

____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________
____________________________________________________________________________



Լոգոպեդ՝ ____________________________________________

/ստորագրություն, անուն, ազգանուն/

__________տարածքային մանկավարժահոգեբանական

կենտրոնի տնօրեն՝ ____________________________________

/ստորագրություն, անուն, ազգանուն/ Կ. Տ.

## Կիրառված գործիքի ամփոփաթերթ

**Անուն, հայրանուն, ազգանուն՝ ____________________________________________**

**Ծննդյան օր, ամիս, տարի՝ ____________________ ծննդյան վկայական՝ N ____________________**

**Կիրառելով ____________________________________________**

**գնահատման գործիքը՝ ստացել ենք հետևյալ արդյունքները.**

Գնահատողներ՝ ____________________________________________

____________________________________________

/ստորագրություն, անուն, ազգանուն/

## Արձանագրություն

(գնահատման թիմի 2-րդ հանդիպման)

**Անուն, հայրանուն, ազգանուն՝** ______________________________

**Ծննդյան օր, ամիս, տարի՝** ______________________________

1.Նշել կենսագործունեության և մասնակցության այն ոլորտները, որտեղ նկատվել են խնդիրներ /d կոդեր/.

- ☐ Սովորել և գիտելիքը կիրառել
- ☐ Ընդհանուր առաջադրանքներ և պահանջներ
- ☐ Հաղորդակցում
- ☐ Շարժունակություն
- ☐ Ինքնասպասարկում
- ☐ Կենցաղ
- ☐ Միջանձնային շփում և հարաբերություններ
- ☐ Կյանքի հիմնական բնագավառներ
- ☐ Համայնքային, սոցիալական և  քաղաքացիական կյանք

2. Նշել ֆունկցիաների խանգարման աստիճանները՝ մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան.

| **Ֆունկցիաներ** | **Ենթակատեգորիաներ** | **թեթև** | **միջին** | **ծանր** | **խորը** |
|---|---|---|---|---|---|
| **Ձայնի և խոսքի ֆունկցիաներ** | Ձայնի ֆունկցիա | | | | |
| | Արտաբերման/արտասանական ֆունկցիաներ | | | | |
| | Խոսքի սահունության և ռիթմի ֆունկցիա | | | | |
| **Լսողության ֆունկցիաներ** | | | | | |
| **Տեսողության ֆունկցիաներ** | | | | | |
| **Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ** | Բարձրագույն ճանաչողական ֆունկցիաներ | | | | |
| | Հիմնական ճանաչողական ֆունկցիաներ | | | | |
| | Հաշվելու ֆունկցիաներ | | | | |
| | Մտածողության ֆունկցիաներ | | | | |
| | Ուշադրության ֆունկցիաներ | | | | |
| | Լեզվի հոգեկան ֆունկցիաներ | | | | |
| | Հիշողության ֆունկցիաներ | | | | |
| | Հոգեշարժողական ֆունկցիաներ | | | | |
| | Ընկալման ֆունկցիաներ | | | | |
| **Շարժողական ֆունկցիաներ** | Խոշոր շարժունակության ֆունկցիաներ | | | | |
| | Մանր շարժունակության ֆունկցիաներ | | | | |

**Գնահատման թիմի մասնակիցներ՝** ստորագրություն պաշտոն, անուն, ազգանուն

______________ ______________________________

______________ ______________________________

______________ ______________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ամիս, ամսաթիվ՝ ________________

Անուն, հայրանուն, ազգանուն՝ ____________________________________________

Ծննդյան օր, ամիս, տարի՝ ________________, ծննդյան վկայական՝ ______________________________

Գնահատման սկիզբ՝____________________, Գնահատման ավարտ՝______________________________

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրենի ____________________ հրամանով ձևավորված գնահատման մասնագետների խումբը՝ ______________________________________

__________________________________________________

__________________________________________________

__________________________________________________

արձանագրել է հետևյալ տեղեկատվությունը և արել հետևյալ առաջարկությունները՝

☐ ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ պայմանավորված ֆունկցիայի (ձայնի և խոսքի, լսողության, տեսողության, ինտելեկտուալ (մտավոր), շարժողական (թեթև, միջին, ծանր, խորը) խանգարումով:

| **Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք** | **թեթև** | **միջին** | **ծանր** | **խորը** |
|---|---|---|---|---|
| Ձայնի և խոսքի ֆունկցիաներ | | | | |
| Լսողության ֆունկցիաներ | | | | |
| Տեսողության ֆունկցիաներ | | | | |
| Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ | | | | |
| Շարժողական ֆունկցիաներ | | | | |

☐ չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

*Արձանագրված ֆունկցիաների խանգարումները նկարագրվում են ըստ տվյալ ֆունկցիայի ենթակատեգորիաների՝

| **Ֆունկցիաներ** | **Ենթակատեգորիաներ** | **Խանգարումների նկարագրություն** |
|---|---|---|
| **Ձայնի և խոսքի ֆունկցիաներ** | **Ձայնի ֆունկցիա** (ձայնի արտաբերում և ձայնի որակ) | ----------- |
| | **Արտաբերման/արտասանական ֆունկցիաներ** (խոսքի հնչյունների արտաբերման ֆունկցիաներ՝ ներառյալ առոգանության ֆունկցիաներ, հնչյունների արտասանության ֆունկցիաներ) | ----------- |
| | **Խոսքի սահունության և ռիթմի ֆունկցիա** (խոսքի սահունություն, խոսքի ռիթմ և խոսքի մեղեդայնություն, արագախոսություն, դանդաղախոսություն) | ----------- |

| | | |
|---|---|---|
| **Լսողության ֆունկցիաներ** | | ----------- |
| **Տեսողության ֆունկցիաներ** | | ----------- |
| 8. Ինչպիսի՞ հարաբերություններ եմ հաստատում և պահպանում ընտանիքիս անդամների և մերձավոր ազգականներիս հետ: | 1. Իմ հարաբերությունները շատ ջերմ են:<br>2. Ես ջերմ եմ ծնողներիցս միայն մեկի հետ (հայր, մայր):<br>3. Ես ջերմ հարաբերություններ ունեմ մերձավոր ազգականներիս հետ: |
| 9. Ինչպե՞ս եմ արձագանքում և հարմարվում այն իրավիճակին, երբ ծնողներս թողնում են ինձ մեկ ուրիշի հետ: | 1. Ես հարմարվում եմ հեշտությամբ:<br>2. Ես ունենում եմ որոշ դժվարություններ:<br>3. Ես ունենում եմ դժվարություններ: |
| 10. Ի՞նչ եմ անում, երբ խաղում եմ ընկերներիս հետ: | 1. Ես սիրում եմ խաղալ ընկերներիս կողքին, բայց ոչ՝ նրանց հետ:<br>2. Ես սիրում եմ խաղալ միայնակ:<br>3. Ես սիրում եմ հետևել իմ ընկերների խաղին: |

| Իմացական ոլորտ | Պատասխաններ |
|---|---|
| 1. Ինչպե՞ս եմ տեսնում և օգտագործում իմ տեսողությունը: | 1. Ես կարող եմ տեսնել մեծ և փոքր իրերը, որոնք մոտ են, հեռու են և ամենուրեք:<br>2. Ես կարող եմ տեսնել միայն մեծ իրերը:<br>3. Շատ իրեր կան, որ ես չեմ տեսնում: |
| 2. Ինչքա՞ն լավ եմ լսում: | 1. Ես լսում եմ ամեն տեսակի հնչյուններ:<br>2. Ես լսում եմ, բայց ունեմ դժվարություններ հնչյունների և բառերի իմաստը հասկանալու ժամանակ:<br>3. Ես ամեն ինչ չէ, որ լսում եմ: |
| 3. Ինչպե՞ս եմ կարողանում մեկ կամ երկու առարկաներով գործողություններ կատարելու միջոցով սովորել: | 1. Ես կարողանում եմ կատարել հեշտությամբ:<br>2. Գործողություններ կատարելիս ինձ անհրաժեշտ է աջակցություն:<br>3. Ես կատարում եմ դժվարությամբ: |
| 4. Ինչպե՞ս եմ ընկալում և յուրացնում հիմնական հասկացությունները: | 1. Ես ընկալելու խնդիր չունեմ:<br>2. Ես կարողանում եմ ընկալել, բայց վերարտադրելիս ունեմ խնդիր:<br>3. Ես ամբողջ ուշադրությունս կենտրոնացնում եմ, որպեսզի ընկալեմ նյութը, բայց ինձ մոտ չի ստացվում: |
| 5. Ինչպե՞ս եմ կարողանում ընթերցել: | 1. Ինձ համար խնդիր չէ ծանոթ և անծանոթ նյութերը սահուն կարդալը:<br>2. Ես կարողանում եմ ընթերցել միայն վանկերով:<br>3. Ես չեմ ճանաչում տառերը, որ կարողանամ կարդալ: |
| 6 . Որքանո՞վ են զարգացած ինձ մոտ մաթեմատիկական հմտությունները: | 1. Ես կարողանում եմ կատարել մաթեմատիկական առաջադրանքներ միայն մեծահասակի աջակցությամբ:<br>2. Ես դժվարանում եմ լուծել մաթեմատիկական որևէ առաջադրանք:<br>3. Ես կարողանում եմ միայն հաշվել և հետ հաշվարկ անել: |
| 7. Ինչպե՞ս եմ կենտրոնացնում ուշադրությունս դասերի ընթացքում: | 1. Ես հեշտությամբ եմ կենտրոնացնում ուշադրությունս բոլոր դասաժամերին:<br>2. Ես ունեմ մի փոքր դժվարություն՝ ուշադրությունս կենտրոնացնելու գործում:<br>3. Ես ուշադրություն եմ դարձնում միայն ինձ հետաքրքրող առարկաներին, նյութերին և գործողություններին: |
| 8. Որքանո՞վ եմ կարողանում տրամաբանել և վերլուծել շուրջս կատարվող իրադարձությունները: | 1. Ինձ մոտ լավ է ստացվում տրամաբանելը և վերլուծելը:<br>2. Ես լավ եմ տրամաբանում, բայց չեմ կարողանում վերլուծել իրադարձությունները:<br>3. Ինձ համար խնդիր է՝ տրամաբանելը և վերլուծելը: |
| 9. Ինչպե՞ս եմ գրում: | 1. Ես սիրում եմ գրել տառեր և թվեր:<br>2. Ես սիրում եմ փորձել գրել տողերի վրա՝ պահպանելով էջի սահմանները:<br>3. Ես դժվարությամբ եմ գրում:<br>4. Ես սիրում եմ խզբզել: |
| 10.Ինչպե՞ս եմ կարողանում ընտրություն կատարել և իրագործել այն: | 1. Ես կարողանում եմ ընտրություն կատարել և այն ինքնուրույն իրագործել /օրինակ՝ ընտրել որևէ իր և գնել այն/:<br>2. Կատարելիս ինձ անհրաժեշտ է աջակցություն:<br>3. Ես կատարում եմ դժվարությամբ: |
| **Շարժունակության ոլորտ** | **Պատասխաններ** |
| 1. Որքա՞ն սահուն եմ տեղափոխում դիրքս: | 1. Ես փոխում եմ դիրքս հեշտությամբ:<br>2. Ես պայքարում եմ և փորձում եմ անսովոր ձևեր՝ մի դիրքից մյուսին փոխվելու ժամանակ:<br>3. Ես ունեմ օգնության կարիք դիրքս փոխելու ժամանակ: |
| 2. Ի՞նչ տեսակի իրեր կարող եմ բարձրացնել, հրել և քաշել: | 1. Ես կարող եմ բարձրացնել, հրել և քաշել շատ ծանր իրեր:<br>2. Ես կարող եմ բարձրացնել, հրել և քաշել իրերը, երբ նրանք ծանր չեն:<br>3. Ես դժվարությամբ եմ բարձրացնում, հրում և քաշում իրերը: |

| | |
|---|---|
| 3. Ինչպե՞ս եմ վերցնում և օգտագործում մանր իրերը: | 1. Ես կարող եմ բարձրացնել մանր իրերը բութ մատով և ցուցամատով:<br>2. Ինձ պետք են շատ մատեր՝ բարձրացնելու մանր իրերը:<br>3. Ես դժվարանում եմ բարձրացնել մանր իրերը: |
| 4.Ինչպե՞ս եմ կարողանում տեղաշարժվել ոտքով: | 1. Ես կարողանում եմ քայլել ինքնուրույն:<br>2. Ես քայլում եմ դժվարությամբ:<br>3. Քայլելիս ինձ պետք է աջակցություն: |
| 5. Ինչպե՞ս եմ շարժվում ֆիզիկական գործողությունների ժամանակ (վազել, խաղալ գնդակով և անել տարբեր գործողություններ, որոնք ներառում են ֆիզիկական շարժումներ): | 1. Ես ինձ լավ եմ դրսևորում ֆիզիկական խաղերում և գործողություններում:<br>2. Ես մի փոքր անփույթ եմ ֆիզիկական խաղերում և գործողություններում:<br>3. Ես ունենում եմ դժվարություններ ֆիզիկական խաղերում և գործողություններում: |
| 6.Ինչպե՞ս եմ քայլում և տեղաշարժվում տարբեր իրավիճակներում: | 1. Ես տեղաշարժվում եմ առանց խնդիրների:<br>2. Ես տեղաշարժվում եմ դժվարությամբ:<br>3. Տեղաշարժվելիս ինձ անհրաժեշտ է աջակցություն: |
| 7. Կարողանու՞մ եմ, արդյոք, օգտվել փոխադրամիջոցներից: | 1. Ես կարողանում եմ օգտվել ինքնուրույն:<br>2. Ես օգտվում եմ մեծահասակի օգնությամբ:<br>3. Ինձ համար դժվարություն է ներկայացնում տրանսպորտից օգտվելը: |
| 8. Ինչպե՞ս եմ ցանկացած այլ նստած վիճակից դիրքի փոխվում: | 1. Ես կարողանում եմ կատարել ինքնուրույն:<br>2. Ես կատարում եմ դժվարությամբ:<br>3. Ինձ անհրաժեշտ է աջակցություն: |
| 9.Ինչպե՞ս եմ կարողանում կառավարել իմ գլխի դիրքը: | 1. Ես ինքնուրույն կարողանում եմ կառավարել իմ գլխի դիրքը:<br>2. Ես դժվարությամբ եմ կառավարում իմ գլխի դիրքը:<br>3. Ինձ անհրաժեշտ է աջակցություն՝ գլխիս դիրքը պահելու համար: |
| 10. Ինչպե՞ս եմ օգտագործում ձեռքերս խաղի ժամանակ: | 1. Ես օգտագործում եմ ձեռքերս հեշտությամբ:<br>2. Ես հաճախ բաց եմ թողնում այն, ինչին ուզում եմ հասնել<br>3. Ես ունեմ հասնելու կամ բռնելու դժվարություններ: |

| **Խոսքի և հաղորդակցման ոլորտ** | **Պատասխաններ** |
|---|---|
| 1. Հաղորդակցվելիս ինձ ուղղված բանավոր խոսքը ես ընկալում եմ: | 1. Հեշտությամբ:<br>2. Դժվարությամբ:<br>3. Օգնության կարիք ունեմ բանավոր խոսքն ընկալելու համար: |
| 2. Ես խոսում եմ՝ | 1. Ինձ անհանգստացնող մի երևույթի, գործողության կամ առարկայի մասին /ֆիքսվածություն/:<br>2. Իմ կարիքների կամ ցանկությունների մասին:<br>3. Իմ առօրյայի և սովորածի մասին: |
| 3. Ի՞նչ շարժումներ կամ ժեստեր եմ օգտագործում հաղորդակցման ժամանակ / աչքի կոնտակտ, հնչյուններ, նշաններ, այլ խոսքային հնարներ/: | 1. Ես հասկանում և ընկալում եմ զրուցակցիս ցուցադրած շարժումներն ու ժեստերը:<br>2. Ես ուշադրություն եմ դարձնում դիմախաղին, աչքերի հայացքին /ինչին նայեց կամ անորոշ ցույց տվեց ինչ-որ շարժումով կամ դեմքի արտահայտությամբ:<br>3. Ես արձագանքում եմ ցանկացած ոչ խոսքային հնարներին: |
| 4. Ինչպե՞ս եմ հաղորդագրություններ ուղղարկում: | 1. Ես կարողանում եմ գրավոր հաղորդագրություններ ուղարկել:<br>2. Դժվարությամբ եմ գրավոր հաղորդագրություններուղարկում;<br>3. Գրավոր հաղորդագրություններ ուղարկելու համար ինձ օգնություն է հարկավոր: |
| 5. Ինչպե՞ս եմ ես հաղորդակցվում: | 1. Ես դժվարությամբ եմ մասնակցում խոսակցությանը:<br>2. Ես արտաբերում եմ հնչյուններ, արտաբերական մկանների կամային շարժումներ, ժեստեր:<br>3. Ես հաղորդակցվում եմ հստակ և կապակցված խոսքի միջոցով: |

| | |
|---|---|
| 6. Որքանո՞վ եմ կարողանում մասնակցել քննարկումներին: | 1. Ես կարողանում եմ ինքնուրույն սկսել և շարունակել քննարկումը:<br>2. Ես դժվարանում եմ սկսել կամ շարունակել քննարկումը:<br>3. Ես չեմ կարողանում մասնակցել քննարկումներին: |
| 7. Որքա՞ն հեշտությամբ եք դուք հասկանում իմ խոսքը: | 1. Իմ խոսքը դժվարությամբ է ընկալվում, քանի-որ ես ունեմ արտաբերական ապարատի լարվածություն, հնչյունները արտահայտում եմ ոչ պարզ:<br>2. Իմ խոսքը դժվարությամբ են ընկալում, քանի-որ ես ունեմ ձայնային խանգարումներ:<br>3. Իմ խոսքը պարզ է և հասկանալի: |
| 8. Հաղորդակցվելիս՝ | 1. Ես չեմ նայում մարդկանց, երբ խոսում են ինձ հետ:<br>2. Ես նայում եմ և օգտագործում եմ ժեստեր:<br>3. Ես նայում եմ և օգտագործում եմ ժեստեր, բառեր և նախադասություններ: |
| 9. Որքա՞ն հաճախ եմ ես հաղորդակցվում: | 1. Ես հաղորդակցվում եմ շատ հազվադեպ:<br>2. Ես հաղորդակցվում եմ, երբ ինձ հարց են տալիս կամ փորձում են ինձ հետ խոսել:<br>3. Ես միշտ հաղորդակցվում եմ: |
| 10. Որքանո՞վ եմ օգտվում հաղորդակցման սարքերից | 1. Ես օգտվում եմ համակարգչից և հեռախոսից:<br>2. Ես դժվարությամբ եմ օգտվում հեռահաղորդակցման սարքերից:<br>3. Ես չեմ օգտվում հեռահաղորդակցման սարքերից: |

## Առօրյա ռեժիմի գնահատում

| Առօրյա գործողություններ | Հեշտությամբ | Բարդությամբ | ԴԺՎԱՐՈՒԹՅԱՄԲ Որքանո՞վ է գործընթացը սթրեսածին կամ դժվար Ձեզ համար: (Ցածր) (Բարձր) | ԴԺՎԱՐՈՒԹՅԱՄԲ Որքանո՞վ է այս գործընթացը սթրեսածին երեխայի համար: (Ցածր) (Բարձր) | Ի՞նչ է տեղի ունենում օրվա այս պահին (ցանկության դեպքում կարող եք մեկնաբանել, թե ինչո՞ւ եք նման կերպ գնահատում) |
|---|---|---|---|---|---|
| Փոխել տակդիրը/օգտվել զուգարանից | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Կերակրել/ուտել | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Լողանալ/լվացվել | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Հագնվել | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Սանրել մազերը/լվանալ ատամները | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Երեխան խաղում է միայնակ | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Երեխան խաղում է ընտանիքի անդամների հետ | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Խաղում է այլ երեխաների հետ | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Միասին թերթում են գրքեր | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Քունը տանում է | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Գնում է քնելու/արթնանում է | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Հանդարտվում է անտրամադիր լինելուց հետո | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Սենյակային խաղեր | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Բակային խաղեր | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Գնում է դուրս մանկասայլակով /ավտոմեքենայով | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Մտնում է նպարեղենի խանութ/ կատարում է հանձնարարվածը | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Այցելում է ընկերներին | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Կրոնական գործունեություն | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Ընտանեկան տոներ | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Այլ՝ | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |

Նշված գործողություններից որո՞նք են Ձեզ մտահոգում, որոնց կուզենայիք առաջինն անդրադառնալ:

1. ______________________________________________

2. ______________________________________________

# Ամեն ինչ իմ մասին

/գրանցման թերթիկ/

Երեխայի անուն, հայրանուն, ազգանուն՝ ____________________

Ծննդյան օր, ամիս, տարի՝ ____________________

Հարցաշարը լրացնողի անուն, հայրանուն, ազգանուն՝ ____________________

Կապը երեխայի հետ՝ ____________________

Լրացման ամսաթիվը՝ ____________________

| Հարցի համար | **Սոցիալ-հուզական ոլորտ** | | | |
|---|---|---|---|---|
| | Պատասխանի տարբերակ | | | Նշումների համար |
| | **1** | **2** | **3** | |
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |
| 4. | | | | |
| 5. | | | | |
| 6. | | | | |
| 7. | | | | |
| 8. | | | | |
| 9. | | | | |
| 10. | | | | |

| Հարցի համար | **Իմացական ոլորտ** | | | |
|---|---|---|---|---|
| | Պատասխանի տարբերակ | | | Նշումների համար |
| | **1** | **2** | **3** | |
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |
| 4. | | | | |
| 5. | | | | |
| 6. | | | | |
| 7. | | | | |
| 8. | | | | |
| 9. | | | | |
| 10. | | | | |

| Հարցի համար | **Շարժունակության ոլորտ** | | | |
|---|---|---|---|---|
| | Պատասխանի տարբերակ | | | Նշումների համար |
| | **1** | **2** | **3** | |
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |
| 4. | | | | |
| 5. | | | | |
| 6. | | | | |
| 7. | | | | |
| 8. | | | | |
| 9. | | | | |
| 10. | | | | |

| Հարցի համար | **Խոսքի և հաղորդակցման ոլորտ** | | | |
|---|---|---|---|---|
| | Պատասխանի տարբերակ | | | Նշումների համար |
| | **1** | **2** | **3** | |
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |
| 4. | | | | |
| 5. | | | | |
| 6. | | | | |
| 7. | | | | |
| 8. | | | | |
| 9. | | | | |
| 10. | | | | |

## Առօրյա ռեժիմի գնահատում

| Առօրյա գործողություններ | Դեչաուհայ | Բավական | ԴԺՎԱՐՈՒԹՅԱՄԲ Որքանո՞վ է գործընթացը սթրեսածին կամ դժվար Ձեզ համար: (Ցածր) (Բարձր) | ԴԺՎԱՐՈՒԹՅԱՄԲ Որքանո՞վ է այս գործընթացը սթրեսածին երեխայի համար: (Ցածր) (Բարձր) | Ի՞նչ է տեղի ունենում օրվա այս պահին (ցանկության դեպքում կարող եք մեկնաբանել, թե ինչո՞ւ եք նման կերպ գնահատում) |
|---|---|---|---|---|---|
| Փոխել տակդիրը/օգտվել զուգարանից | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Կերակրել/ուտել | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Լողանալ/լվացվել | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Հագնվել | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Սանրել մազերը/լվանալ ատամները | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Երեխան խաղում է միայնակ | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Երեխան խաղում է ընտանիքի անդամների հետ | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Խաղում է այլ երեխաների հետ | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Միասին թերթում են գրքեր | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Քունը տանում է | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Գնում է քնելու/արթնանում է | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Հանդարտվում է անտրամադիր լինելուց հետո | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Սենյակային խաղեր | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Բակային խաղեր | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Գնում է դուրս մանկասայլակով /ավտոմեքենայով | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Մտնում է նպարեղենի խանութ/ կատարում է հանձնարարվածը | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Այցելում է ընկերներին | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Կրոնական գործունեություն | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Ընտանեկան տոներ | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |
| Այլ՝ | | | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 | |



Նշված գործողություններից որո՞նք են Ձեզ մտահոգում, որոնց կուզենայիք առաջինն անդրադառնալ:

1. ______________________________

2. ______________________________

## Դպրոցական գործունեության գնահատում[4]

**Նկարագրություն -** Դպրոցական գործունեության գնահատումը չափում է աշակերտի ֆունկցիոնալ առաջադրանքների կատարման ֆունկցիոնալությունը, որը խթանում է նրա մասնակցությունը տարրական դասարանների ծրագրի ակադեմիական և սոցիալական բնագավառներում: Այն նախատեսված է հեշտացնելու միասնական ծրագրի պլանավորումը հաշմանդամության տարբեր տեսակի խնդիրներով աշակերտների համար:

Դպրոցական գործունեության գնահատումը հիմնված է կատարման բազմամակարդակ, ֆունկցիոնալ մոդելի վրա: Գործիքը նաև արտացոլում է ներկայիս օրինագծի թիրախը, որն է՝ հասնել խնդիրներ ունեցող աշակերտի ամբողջական մասնակցությանը սովորական գործողություններում և միջավայրերում իրենց հասակակիցների հետ և դպրոցում տրամադրվող ծառայությունների պահանջին, որը պետք է զուգահեռ լինի կրթության հետ առնչվող արդյունքի հետ: Դպրոցական գործունեության գնահատման կետերը կենտրոնանում են այն վարքագծերի վրա, որոնք ունեն պարզ ֆունկցիոնալ առնչություն տարրական դպրոցի միջավայրի հետ:

Այս գործիքով գնահատման հիմքում ընկած են մեկ կամ ավելի մասնագետների անձնական դատողությունները, ովքեր լավ են ճանաչում աշակերտին և հետևել են նրա դպրոցական առաջադրանքների կատարմանը, ակտիվությանն ու մասնակցությանը:

Դպրոցական գործունեության գնահատում գործիքը բաղկացած է երեք մասից՝

**Մաս I. Մասնակցություն.** օգտագործվում է աշակերտի մասնակցությունը չափելու համար գործողության վեց հիմնական ասպարեզներում՝ ընդհանուր կամ աջակցության ծառայությունների տրամադրման դասարանում, խաղահրապարակում կամ ընդմիջմանը, դեպի դպրոց կամ դպրոցից վերադարձի ճանապարհին, զուգարանից օգտվելու գործողությունների ժամանակ, դասի գնալիս կամ դասից վերադառնալիս և ուտելու ժամին:

**Մաս II. Տրամադրվող աջակցություն.** օգտագործվում են՝ հետազոտելու աշակերտին տրամադրված աջակցությունները դպրոցի հետ կապված առաջադրանքների ֆունկցիոնալ կատարման ժամանակ, որոնք անհրաժեշտ են կրթական ծրագրում արդյունավետ մասնակցություն ունենալու համար: Առաջադրանքի աջակցությունների երկու տեսակները դիտարկվում են առանձին՝ աջակցություն (աջակցություն մեծահասակների կողմից) և հարմարեցում (միջավայրի կամ ծրագրի փոփոխություններ, ինչպիսիք են՝ հատուկ սարքավորումները և հարմարեցված նյութերը):

**Մաս III. Գործողության կատարում.** օգտագործվում է աշակերտի կողմից դպրոցի հետ առնչվող ֆունկցիոնալ գործողությունների կատարումն ուսումնասիրելու համար: Ամեն սանդղակ ներառում է փոխադարձ գործողությունների խումբ, որոնց մեջ առկա է նմանատիպ ֆունկցիոնալ պահանջ, ինչպիսիք են՝ դասարանում և դպրոցում տեղաշարժվելը, դպրոցական պարագաների օգտագործումը, ուրիշների հետ շփումը, դպրոցի կանոններին հետևելը և շփման կարիքները: Յուրաքանչյուր գործողության խումբ օգտագործում է Առաջադրանքի աջակցություններում նշված գործողությունները մանրամասնորեն ուսումնասիրելու համար:

**Դպրոցական գործունեության գնահատման բովանդակային մոդել**

Դպրոցական գործունեության գնահատումը նախագծվել է աշակերտի կարիքները և յուրահատուկ իրավիճակները հաշվի առնելով:

Դպրոցական գործունեության գնահատման (նախագիծն ընդգծող գործունեության) մոդելում ֆունկցիա բառը կարող է բացատրվել շատ տարբեր մակարդակներով՝ ընդհանուրից մասնակի: Յուրաքանչյուր մակարդակ վերաբերում է գործունեության կարևոր ոլորտներից մեկին: Չնայած գործունեության տարբեր ոլորտները փոխկապակցված են՝ յուրաքանչյուր ոլորտ ստանում է յուրահատուկ տեղեկատվություն: Անհատ աշակերտի ընդհանուր դպրոցական ֆունկցիան հասկանալու համար պահանջվում է բազմակողմանի գնահատում, որը հաշվի է առնում առնչվող ոլորտներից յուրաքանչյուրը:

Մոդելի չորս տարբեր մակարդակները ներկայացված են ստորև՝ վերից վար դասակարգմամբ, ընդհանուրից՝ մասնակի: Առաջին երեք մակարդակներն ուղղակիորեն հետազոտում են գործունեության սահմանները, որոնց անդրադառնում է Դպրոցական գործունեության գնահատումը: Չորրորդ մակարդակը հետազոտում է ֆունկցոնալ կատարումն ընդգծող հնարավորությունները, այլ ոչ թե հենց ֆունկցիան: Դպրոցական գործունեության գնահատումը չի անդրադառնում չորրորդ մակարդակին:

[4]SFA - School Function Assessment, https://www.pearsonassessments.com/HAIWEB/Cultures/en-us/Productdetail.htm?Pid=076-1615-709&Mode=summary

**Մակարդակ I - Սոցիալական մասնակցություն.** Ի՞նչ աստիճանի մասնակցություն կարող է ունենալ աշակերտն իր հասակակից նույն մշակույթին պատկանող երեխաներին տրված հնարավորություններից օգտվելիս, կամ ի՞նչ աստիճանի դժվարություններ է ունենում երեխան այնպիսի խոչընդոտների պատճառով, ինչպիսիք են՝ խտրական քաղաքականությունները, խարանող վերաբերմունքը կամ իր խնդրին վերաբերող հնարավորություններից օգտվելու սահմանափակումները:

**Մակարդակ II - Առաջադրանքի կատարում.** Ի՞նչ աստիճանի է աշակերտն ի զորու կատարել այն առաջադրանքները, որոնք պահանջվում կամ սպասվում են իր հասակակից նույն մշակույթին պատկանող երեխաներից: Առաջադրանքն այս համատեքստում նշանակում է նույն ֆունկցիոնալ նպատակը հետապնդող և իրար հետ առնչվող գործողությունների մի խումբ:

**Մակարդակ III - Գործողությունների կատարման ցուցանիշներ.** Աշակերտի օրական առաջադրանքների անհրաժեշտ կամ կարևոր մաս կազմող որոշակի գործողությունների կատարման կարողությունը:

**Մակարդակ IV - Հիմնական կառուցվածքներ և գործընթացներ.** Ֆունցիոնալ կատարման ցուցանիշներն արտահայտող հիմնական ֆիզիկական, զգայական և ճանաչողական գործընթացների զարգացվածության կամ օգտագործման մակարդակը (մոդելի այս մակարդակը չափվում է ավանդական մեթոդներով, ինչպիսիք են՝ IQ թեստերը, մոտորիկայի զարգացվածության սանդղակները, ընկալման ֆունկցիաներն ստուգող թեստերը): Այս մոդելի մի քանի կարևոր առանձնահատկությունները հաշվի են առնվել Դպրոցական գործունեության գնահատման զարգացման ընթացքում:

**Ամեն մի մակարդակ կենտրոնանում է գործունեության տարբեր ոլորտների վրա**

Քանի որ մոդելի ամեն մի մակարդակ ունի առանձին թիրախ, տրվում են մի քանի գնահատման հարցեր, որոնք առնչվում են տեղեկություն հավաքագրելու հետ: Մի մակարդակում ունեցած բացահայտումները չեն կարող օգտագործվել ուրիշ մակարդակում: Այն աշակերտը, ով չի կարող պատշաճ օգտագործել մատիտ, հնարավոր է, որ կարողանա հաջողությամբ կատարել իր դասերի հանձնարարությունները ձեռագրի կամ համակարգչի միջոցով:

**Ֆունկցիոնալ կատարման արդյունքներն արտացոլում են անհատական և համատեքստային գործոնները**

Այս տեսանկյունից, դիսֆունկցիան կամ խնդիրը ստեղծվում է միջավայրի և աշակերտի հնարավորության անհամապատասխանությունից: Այսպիսով, այն սահմանափակումները, որոնք հայտնաբերվում են գործունեության գնահատման ընթացքում, չպետք է հասկացվեն որպես աշակերտի ներքին խնդիրներ՝ օրինակ, երբ սայլակ օգտագործող աշակերտը չի կարողանում ազատ տեղաշարժվել դասարանում, խնդիր կարող է հանդիսանալ սայլակ կառավարելու հմտությունների պակասը աշակերտի մոտ, շարժման ազատությունը սահմանափակող կահույքի դասավորությունը, կամ նշված գործողություններից մի քանիսը: Միջավայրի և աշակերտի հմտությունների փոփոխությունների արդյունքում կարող են փոխվել նաև նրա ֆունկցիոնալ կատարման արդյունքները:

**Ֆունկցիոնալ կատարման արդյունքները յուրահատուկ են համատեքստին**

Աշակերտի կատարման արդյունքները տարբեր համատեքստերում պարտադիր չէ, որ համապատասխանեն միմյանց: Աշակերտի սոցիալական փոխազդեությունը դասարանի կառուցվածքային միջավայրում կարող է տարբերվել խաղահրապարակի ավելի քիչ կառուցվածքային միջավայրից: Գործունեության սահմանափակումը կարող է տարբերվել տարբեր համատեքստերում:

**Ֆունկցիոնալությունն առաջնայնորեն սահմանվում է կատարման արդյունքների, այլ ոչ թե օգտագործված միջոցների հիման վրա**

Կարևոր դպրոցական առաջադրանքները և գործողությունները կատարելու համար կարող են օգտագործվել շատ տարբեր միջոցներ: Աշակերտը կարող է տեղաշարժվել դասարանում քայլելով, օգտագործել սայլակ կամ ձեռնափայտեր: Դասարանային միջավայրում աշակերտի ֆունկցիոնալության գնահատման թիրախն է՝ աշակերտին անհրաժեշտ շարժման համապատասխանությունը, ինչպիսիք են՝ աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի ստացումը, գործողության ընթացքում տարբեր տեղերում լինելը կամ դասարանային գործողության բոլոր ոլորտներում ամբողջական մասնակցություն ունենալը:

**Միավորների հաշվում**

Դպրոցական գործունեության գնահատման համակարգը որոշվում է 0-4 բալային համակարգով:

**1-ին Մասի արդյունքների գնահատման բանալի**

**0-** ամբողջական մասնակցություն

**1-** մասնակցություն՝ բոլոր ոլորտներում՝ թեթև աջակցությամբ

**2-** մասնակցություն՝ բոլոր կամ մի քանի ոլորտներում՝ միջին աջակցությամբ

**3-** մասնակցություն՝ մի քանի ոլորտներում՝ մեծ հաճախականությամբ աջակցությամբ

4- մասնակցությունը խիստ սահմանափակ է՝ ամբողջական կամ մշտական աջակցությամբ:

**2-րդ մասի արդյունքների գնահատման բանալի**

**Աջակցության գնահատման բանալի**

**0-** աջակցության կարիք չկա

**1-** թեթև աջակցություն

**2-** մեծ հաճախականությամբ աջակցություն

**3-** զգալի օժանդակություն

**4-** ամբողջական կամ մշտական աջակցություն

**Հարմարեցումների գնահատման բանալի**

**0-** հարմարեցումների կարիք չկա

**1-** նվազագույն հարմարեցումներ

**2-** որոշակի հարմարեցումներ

**3-** զգալի հարմարեցումներ

**4-** ամբողջական (լայնածավալ) հարմարեցումներ

**3-րդ մասի արդյունքների գնահատման բանալի**

**0-** կատարում է կայուն կերպով

**1-** կատարում է՝ որոշակի հուշումներով

**2-** կատարում է մասնակի

**3-** կատարում է մասնակի՝ որոշակի հուշումներով

**4-** չի կատարում

# ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

**Տեղեկություն պատասխանողի մասին**

Գնահատման ամսաթիվ՝_______/_____/_____/

Անուն, ազգանուն՝ ________________________________ կապն աշակերտի հետ ____________

Անուն, ազգանուն՝ ________________________________ կապն աշակերտի հետ ____________

Անուն, ազգանուն՝ ________________________________ կապն աշակերտի հետ ____________

Անցկացնողի անուն, ազգանուն՝ ________________________________

**Տեղեկություններ աշակերտի մասին**

Երեխայի անուն, հայրանուն, ազգանուն՝ ________________________________

Սեռ՝ ☐ արական ☐ իգական Ծննդյան օր, ամիս, տարի՝ _______/_____/_____/

Դպրոց՝ ____________________ դասարան՝ __________ Տարիքը գնահատման պահին՝ __________

Դասվար՝ ________________________________

Աշակերտի կրթությունը կազմակերպված է՝

☐ հանրակրթական առարկայական ծրագրով

☐ հանրակրթական առարկայական ծրագրերի հարմարեցումներով

| | |
|---|---|
| **Հաղորդակցման առաջնային միջոցներ** (եթե օգտագործվում են մեկից ավելի միջոցներ՝ համարակալել ըստ կիրառման հաճախականության՝ համաձայն՝ 1 - ամենահաճախ, 2, 3….)<br><br>**Ընկալման Արտահայտման**<br>Բանավոր……………………………………☐……………☐<br>Գրավոր/նկարչական…………………….. ☐……………☐<br>Նշաններով/սիմվոլ…………………………☐……………☐<br>Ժեստերով/մարմնի շարժումներով……..☐……………☐<br>Համակարգչով/էլեկտրոնային…………..☐……………☐ | **Գրավոր աշխատանքի համար օգտագործվող առաջնային միջոցներ** (եթե օգտագործվում են մեկից ավելի միջոցներ՝ համարակալել ըստ կիրառման հաճախականության՝ համաձայն՝ 1 - ամենահաճախ, 2, 3….)<br><br>☐ ձեռագիր ☐ համակարգչով<br>☐ Բրայլի տառատեսակ ☐ այլ՝ ______________ |
| **Տեղաշարժման առաջնային միջոցներ** (եթե օգտագործվում են մեկից ավելի միջոցներ՝ համարակալել ըստ կիրառման հաճախականության՝ համաձայն՝ 1 - ամենահաճախ, 2, 3….)<br><br>☐ քայլում է ինքնուրույն<br>☐ քայլում է օրթեզներով<br>☐ հենակներ, քայլակ, ձեռնափայտ<br>☐ սայլակ (մեխանիկական/ էլեկտրական)<br>☐ այլ՝ ________________________ | **Դպրոցից և դեպի դպրոց տեղափոխման հիմնական միջոցներ**<br><br>☐ դպրոցական ավտոբուս<br>☐ հարմարեցված ավտոմեքենա<br>☐ մեքենա<br>☐ ոտքով<br>☐ այլ՝ ________________________ |

## Խնդիրներ, որոնք կարող են ազդել աշակերտի կատարողականի վրա

(Նշել բոլորը, որոնք առկա են և սեղմ նկարագրել)

☐ սովորելու և գիտելիքները կիրառելու ոլորտ

☐ ընդհանուր առաջադրանքների և պահանջների կատարման ոլորտ

☐ հաղորդակցման ոլորտ

☐ շարժունակության ոլորտ

☐ ինքնասպասարկման ոլորտ

☐ կենցաղի ոլորտ

☐ միջանձնային շփման և հարաբերությունների ոլորտ

☐ կյանքի հիմնական բնագավառների ոլորտ

☐ Համայնքային, սոցիալական և  քաղաքացիական կյանքի ոլորտ

☐ կյանքի հիմնական բնագավառների ոլորտ

☐ համայնքային, սոցիալական և  քաղաքացիական կյանքի ոլորտ

# Տեղեկություններ դպրոցի մասին

Արդյո՞ք աշակերտը ներկայումս գտնվում է դասարանի մակարդակում կամ դրան մոտ՝ ակադեմիական տեսանկյունից

☐ Այո ☐ Ոչ (նկարագրել ուժեղ կողմերը և սահմանափակումները)

________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________
________________________________________

**Դպրոցի տեսակը՝**

☐ հիմնական դպրոց
☐ ավագ դպրոց
☐ միջնակարգ դպրոց
☐ հատուկ դպրոց
☐ մասնավոր դպրոց
☐ հիվանդանոցային դպրոց
☐ այլ (նկարագրեք)__________________________

**Ծառայությունների մատուցումը դպրոցում՝**

☐ ուսուցչի օգնական
☐ հատուկ մանկավարժ (տիֆլոմանկավարժ, օլիգոգրենոմանկավարժ, սուրդոմանկավարժ, լոգոպեդ)
☐ հոգեբան
☐ բժիշկ
☐ այլ ___________________________________

**Դասարանում աշակերտների թիվը՝**

Լրացնել այս հատվածը, եթե ֆիզիկական միջավայրի առանձնահատկությունները հավանական է, որ կազդեն աշակերտի ակտիվության և մասնակցության վրա.

☐ մինչև 10 աշակերտ
☐ 10-25 աշակերտ
☐ 25-ից ավելի աշակերտ

**Դպրոցի ֆիզիկական առանձնահատկությունները**

☐ դպրոցը մեկ հարկանի է, չունի աստիճաններ
☐ դպրոցի ամբողջ տարածքը հասանելի է սայլակով, վերելակների կամ թեքահարթակների շնորհիվ
☐ դպրոցից դուրս ամբողջ տարածքը հասանելի է սայլակով (օրինակ՝ դաշտը, խաղահրապարակը)
☐ դպրոցի տարածքի մեծ մասը հասանելի է սայլակով, վերելակների կամ թեքահարթակների շնորհիվ
☐ հիմնական տարածքների միջև ճանապարհին ունի ուղեցույցներ, ուղենիշեր և նշաններ
☐ Բրայլի կամ ձայնային նշանների առկայություն
☐ դպրոցի այլ առանձնահատկություններ, որոնք կարող են առնչվել գնահատվող աշակերտի հետ

## ՄԱՍ I ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Ուղեցույց:** Կարդալ ստորև բերված յուրաքանչյուր միջավայրի նկարագրությունը: Այնուհետև անդրադառնալ գնահատման սանդղակի ուղեցույցում տրված առաջին մասի գնահատման չափանիշին՝ որոշելու համար միջավայրում աշակերտի տվյալ մակարդակը նկարագրող ամենալավ գնահատականը: Ապա շրջանակի մեջ վերցնել միջավայրի նկարագրի կողքի համապատասխան գնահատականը: Գնահատել վեց գործողության միջավայրեր՝ ընդհանուր դասասենյակ կամ աջակցության ծառայությունների տրամադրման դասասենյակ (կախված այն փաստից, թե որտեղ է աշակերտը ստանում իր ակադեմիական ցուցումների մեծ մասը) և մնացած բոլոր հինգ միջավայրերը: Յուրաքանչյուր գնահատական պիտի արտացոլի, թե ինչ աստճանի ակտիվ մասնակցություն ունի աշակերտը միջավայրի հետ առնչվող բոլոր գործողություններում, նույն համատեքստում, ինչ իր հասակակիցները, և պետք է հաշվի առնվի գործողությունների և առաջադրանքների բոլոր ոլորտները (ֆիզիկական, ճանաչողական, սոցիալական...): Գումարել բոլոր վեց գնահատականները՝ ստանալու համար սյան ընդհանուր գնահատականը և նշել այն համապատասխան քառակուսու մեջ՝ մասնակցության սյան գնահատական անվանումով:

| **Գնահատել հետևյալ միջավայրերից մեկը** | |
|---|---|
| **Ընդհանուր դասասենյակ.** (սահմանվում է այն դասարանը, որտեղ սովորաբար կրթություն են ստանում աշակերտների մեծ մասը): Ներառում է դասարանի միջավայրի հետ կապված առաջադրանքներն ու գործողությունները, ինչպիսիք են՝ տեղաշարժվելը դասարանում, նյութեր և պարագաներ օգտագործելը, դասին պատրաստվելու և հավաքվելու գործողությունները, անհատական և խմբային հանձնարարությունների կատարումը, կանոններին և ուղեցույցներին հետևելը և համապատասխան սոցիալական վարքագծի պահպանումը: ***Գնահատելիս հաշվի չառնել ակադեմիական ֆունկցիոնալությունը:*** | 0 1 2 3 4 |
| **Աջակցության ծառայությունների տրամադրման դասասենյակ.** (սահմանվում է որպես տեղանք՝ առանձին այն դասարանից, որտեղ սովորաբար կրթություն են ստանում աշակերտների մեծ մասը): Ներառում է դասարանի միջավայրի հետ կապված առաջադրանքներն ու գործողությունները, ինչպիսիք են՝ տեղաշարժվելը դասարանում, նյութեր և պարագաներ օգտագործելը, դասին պատրաստվելու և հավաքվելու գործողությունները, անհատական և խմբային հանձնարարությունների կատարումը, կանոններին և ուղեցույցներին հետևելը և համապատասխան սոցիալական վարքագծի պահպանումը՝ ըստ այդ դասասենյակի պահանջների: ***Գնահատելիս հաշվի չառնել ակադեմիական ֆունկցիոնալությունը:*** | 0 1 2 3 4 |
| **Գնահատել բոլոր հետևյալ կետերը** | |
| **Խաղահրապարակ/դասամիջոց.** Դասարանում, մարզասրահում կամ խաղահրապարակում (չհաշված ֆիզկուլտուրայի ծրագրային դասերը) անցկացրած ազատ ժամանակը՝ ներառյալ մասնակցության ֆիզիկական և հաղորդակցական-զգայական ոլորտները: Ներառում է ֆիզիկական գործողություն պարունակող խաղեր խաղալը, խաղահրապարակի պարագաների օգտագործումը, կանոններին հետևելը և հասակակիցների հետ համագործակցելով խաղալը: | 0 1 2 3 4 |
| **Տեղափոխում.** դպրոց գնալը և վերադառնալը բոլոր պայմաններում՝ (ինչպիսիք են՝ եղանակը և ճանապարհային ծանրաբեռնվածությունը) օգտագործելով մեկ կամ ավելի միջոց (ավտոբուս, ավտոմեքենա, հեծանիվ և հետիոտն): Ներառում է ավտոմեքենա, դպրոցի շենք մտնելը և դուրս գալը, համապատասխան սոցիալական վարքագծի պահպանումն ավտոմեքենայի մեջ, ինչպես նաև՝ շենք մտնելիս և դուրս գալիս: | 0 1 2 3 4 |
| **Լոգարան/զուգարան.** լոգարանի միջավայրում զուգարանային գործողությունների կատարումը՝ ներառյալ հագուստ հանել/հագնելը, զուգարանի ջուրը քաշելը, սեփական հիգիենային հետևելը (լվանալ ձեռքերը) և զուգարան մտնելու և դուրս գալու, ինչպես նաև զուգարանագոգից օգտվելու ֆիզիկական գործողությունները: Եթե աշակերտը ընդհանրապես չի օգտագործում լոգարանը, նրա մասնակցությունը պետք է գնահատվի 4՝ ***մասնակցությունը խիստ սահմանափակ է:*** | 0 1 2 3 4 |
| **Տեղաշարժ.** դպրոցի կամ սենյակի մի մասից մյուսը շարժվելը՝ ներառյալ շարք կանգնելը, մարդաշատ միջանցքներում շարժվելը, դռան համածայնեցված օգտագործումը, ուղեցույցներին և կանոններին հետևելը և համապատասխան սոցիալական վարքագիծ պահպանելը: | 0 1 2 3 4 |

| | | | |
|---|---|---|---|
| **Ճաշի ժամ.** առաջադրանքներ և գործողություններ՝ կապված դպրոցում ուտելու հետ, ինչպիսին է՝ ճաշը ստանալը և կազմակերպելը, ուտելը և հավաքվելը, համապատասխան տեսքի և վարքագծի պահպանումը ուտելու ընթացքում: Եթե աշակերտն ուտում է խողովակի միջոցով, ապա գնահատե՛ք նրա մասնակցությունը սովորական ճաշի ժամի միջավայրում: | | | 0 1 2 3 4 |
| | **Պատասխանողի անվան սկզբնատառերը** | **Մասնակցության սյան գնահատական** (յոթ գնահատականների գումարը) | |

**Հուշում.** Գնահատման սահմանումները և օրինակները կարող եք գտնել գնահատման սանդղակի ուղեցույցում:

| **Միջավայրերի գնահատման բանալի** |
|---|
| **0-** ամբողջական մասնակցություն<br>**1-** մասնակցություն՝ բոլոր ոլորտներում՝ թեթև աջակցությամբ<br>**2-** մասնակցություն՝ բոլոր կամ մի քանի ոլորտներում՝ միջին աջակցությամբ<br>**3-** մասնակցություն՝ մի քանի ոլորտներում՝ մեծ հաճախականությամբ աջակցությամբ<br>**4-** մասնակցությունը խիստ սահմանափակ է՝ ամբողջական կամ մշտական աջակցությամբ |

## ՄԱՍ II ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Ուղեցույց:** Կարդալ ստորև բերված յուրաքանչյուր առաջադրանքի նկարագրությունը: Այնուհետև անդրադառնալ գնահատման սանդղակի ուղեցույցում տրված երկրորդ մասի գնահատման չափանիշին՝ որոշելու համար աշակերտի հավելյալ աջակցության կամ դպրոցի հետ առնչվող ֆունկցիոնալ առաջադրանքների փոփոխությունների կարիքները նկարագրող ամենալավ գնահատականը: Շրջանակի մեջ վերցնել առաջադրանքին համապատասխան գնահատականը: Գումարել բոլոր գնահատականները՝ ստանալու համար սյան ընդհանուր գնահատականը և նշել այն համապատասխան քառակուսու մեջ:

| **Ֆիզիկական գործունեություն** | **Աջակցություն** | **Հարմարեցումներ** |
|---|---|---|
| **Տեղաշարժվել.** տեղաշարժվել ներսում և դրսում՝ ցանկացած մակերեսի վրա, շրջանցել արգելքները, անցնել մարդաշատ կամ նեղ տարածքներով կամ հերթի միջով, անցնել դպրոցի համար անհրաժեշտ ամբողջ ճանապարհը՝ ներառյալ դեպի կանգառ և հրապարակ և այդտեղից վերադառնալ, շարժվել հասակակիցների հետ նույն արագությամբ, դպրոցում ցանկացած դրության մեջ՝ ներառյալ շենքից տարհանման ընթացքում, երբ դա անհրաժեշտ է: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| **Պահել և փոխել մարմնի դիրքը.** ընդունել որոշ դիրքեր՝ ներառյալ աթոռի կամ սայլակի վրա, կանգնած ժամանակ, գետնին և զուգարանում, պահել աթոռի վրա նստած դիրքը կես ժամ տևողությամբ՝ դասի կամ նստած աշխատանքի ընթացքում, նստել և դուրս գալ բոլոր տեսակի ավտոմեքենաներից: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| **Համակարգված շարժումների կատարում.** խաղալ ֆիզիկական գործունեություն պարունակող խաղեր՝ներառյալ գնդակ նետելը և բռնելը խաղերի ընթացքում, գնդակով հարվածային խաղեր խաղալը, վազելը, թռչելը, մագլցելը, խաղալը մարզահրապարակի բարձր և ցածր պարագաներով: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| **Շարժումների կառավարում.** նյութերի և անձնական պարագաների տեղափոխում դեպի դասարան, ճաշարան և դրանց ներսում, փխրուն կամ ջրիկ պարունակությամբ տարաների տեղափոխում, մեծ և փոքր առարկաների բարձրացում և տեղադրում, սեղանի վրայից, պահեստից կամ գետնից առարկաներ վերցնելը, բոլոր տեսակի դռներ բացելը և փակելը: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |

| | | |
|---|---|---|
| **Պարագաների օգտագործում.** արդյունավետ օգտագործել բոլոր դասարանային պարագաները, ներառյալ՝ մատիտները, ռետինները, ֆլոմաստերները, մկրատները, կարիչները, ժապավենները և սոսինձը: Բացել /փակել գիրքը, թերթել էջերը, փաթաթել և ամրացնել թղթերը, օգտագործել նկարչական պարագաները և ճիշտ օգտագործել խաղերի փոքր մասնիկները/: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| **Պարագաների տեղափոխում.** Ստանալ, հավաքել և դասավորել պարագաները դասարանում և ճաշարանում, բացել ուտելիքի կամ դասարանային տարաները, պատրաստել սարքավորումները և նյութերը, թափել աղբը, հավաքել կամ կոկիկ տեսքի բերել սեղանը կամ գրասեղանը: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| **Սնվել.** Օգտագործել պահանջվող սպասքը, ուտել և խմել սովորական ուտելիքը՝ ներառյալ բաժակից զգուշորեն խմելը, անձեռոցիկ օգտագործելը՝ երեսը և ձեռքերը մաքրելու համար, ուտելու գործընթացը թույլատրելի ժամին վերջացնելը, աշակերտների համար նախատեսված ցայտաղբյուրից խմելը: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| **Հիգիենա.** ճիշտ օգտվել զուգարանից, կատարել զուգարանի գործողությունները՝ ներառյալ լվացվելը, ջուրը քաշելը և սարքավորումներից օգտվելը՝ ինչպես նաև ներառյալ ձեռքերը լվանալ և չորացնելը, վերջացնել գործողությունը թույլատրելի ժամանակում, քիթը մաքուր պահելը, հազալիս կամ փռշտալիս բերանը փակելը: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| **Հագուկապ.** Հանել և հագնել շորերը՝ համապատասխանեցնելով դրանք ներսի և դրսի պայմաններին՝ ներառյալ ձգանները (օրինակ՝ փոքր կոճակները և կայծակաճարմանդները) և կոշիկները, ճիշտ վարվել հագուստի հետ զուգարանային գործողությունների ընթացքում: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| **Պատասխանողի անվան սկզբնատառերը** / **Ֆիզիկական առաջադրանքներ** | | |
| | **Աջակցության սյան գնահատական** | **Հարմարեցումների սյան գնահատական** |

Լրացնել այս երեք առաջադրանքներից որևէ մեկը, որն առնչվում է աշակերտին դպրոցում: Գրանցել նոր գնահատականները ընդհանուր գնահատականների ձևի կամ ընտրական առաջադրանքների մասում: Չգումարել այս գնահատականները այս էջի ընդհանուր սյան գնահատականներին:

| ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | | |
|---|---|---|
| **Աստիճաններով բարձրանալ, իջնել.** Աստիճանները բարձրանալ մինչև վերջ և իջնել (նվազագույնը 12 աստիճան), աստիճաններով բարձրացնել և իջեցնել տարբեր առարկաներ, աստիճանների վրա պահպանել կայուն արագություն: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| **Գրավոր աշխատանք.** շարադրել շարահյուսորեն և քերականորեն ճիշտ կառուցվածք ունեցող գրավոր աշխատանք (տառեր, բառեր և թվեր), գրել՝ պահպանելով էջի և տողի սահմանները, արտագրել գրքից կամ գրատախտակից, պահել գրելու արագությունը հասակակիցներին զուգահեռ: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| **Համակարգչի և սարքավորումների օգտագործում.** օգտագործել անջատիչները, ստեղնաշարը կամ մկնիկը՝ հիմնական գործողություններ իրականացնելու համար, մտցնել և հանել կրիչները, ժամանակին վերջացնել աշխատանքը: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |

**Հուշում.** Գնահատման սահմանումները և օրինակները կարող եք գտնել գնահատման սանդղակի ուղեցույցում:

| Իմացական և վարքային գործունեություն | Աջակցություն | Հարմարեցումներ |
|---|---|---|
| Շփում և հաղորդակցում. մեծահասակների և հասակակիցների հետ ցանկացած տեղեկատվության կամ հաղորդագրությունների փոխանակումը, ներառյալ՝ սեփական կարիքների և նախընտրություններ վերաբերյալ տեղեկատվությունը: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| Մտապահում և ընկալում. հասկանալ և հիշել դպրոցական պարագաների տեղերը, օգտագործման ձևը և քայլերի հաջորդականությունը, երեք կամ ավելի փոխկապված ցուցումներին հետևելը: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| Խմբային կանոններին հետևելը. դասարանում, ճաշի ընթացքում և այլ իրադրություններում համապատասխան թույլտվություն խնդրել, հասկանալ, երբ է այն տրվում, ուտել քաղաքավարի, հարգել ուրիշի միայնակ մնալու ցանկությունը, սեփականությունը և պահպանել սոցիալական ու ֆիզիկական սահմանները, հետևել կանոններին, օգտագործել ընդունելի խոսելաձև: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| Մեծահասակների ցուցումներին և դպրոցի կանոններին հետևելը. բոլոր իրավիճակներում հետևել մեծահասակների հրահանգներին, պահպանել կանոնները խոսելիս, շարժվելիս, արգելված վայրերում կամ նյութերի հետ շփվելիս և սեփական պարագաները դասավորելիս, հետևել դասարանային, ճաշարանային և խաղահրապարակների օրակարգին: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| Առաջադրանքի կատարում. կենտրոնացնել և պահպանել ուշադրությունն անհատական կամ խմբային առաջադրանքներ կատարելիս, հայտնել տեղեկության կամ օժանդակության կարիքների անհրաժեշտությունը, համապատասխան ձևով փոփոխել մոտեցումներն առաջադրանքների կամ նյութերի նկատմամբ, գործել ճկուն՝ սեփական ձախողման դեպքում հաշվի առնելով ուրիշների դատողությունները: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| Դրական փոխհարաբերություններ. սկսել և մասնակցել հասակակիցների հետ շփումներին (սոցիալական առաջադրանքի հետ կապված), համագործակցել ուրիշների հետ աշխատանքի ընթացքում՝ ներառյալ նյութերի կիսումը, առարկումը և փոխզիջման գնալը, խոսակցական նորմերի պահպանումը, տոնայնության և ձայնի բարձրության փոփոխությունները, խոսակցության հերթականության պահպանումը և ուրիշներին լսելը: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| Վարքի կառավարում. օրակարգի մեջ կատարված փոփոխություններն ընդունելը, ուրիշներին սադրանքի չենթարկելը, կոնֆլիկտները լուծել ինքնուրույն կամ մեծահասակների աջակցությամբ՝ համապատասխան ձևով, պահպանել ինքնակառավարումը աշակերտների մեծ խմբերի միջավայրում, դուրս գալ լարված իրավիճակից, խուսափել ինքնաբուխ վարքագծից: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |
| Ապահովություն և անվտանգություն. համապատասխան նախազգուշություն կիրառել մեքենայի մեջ, մեծ ծանրաբեռնվածություն ունեցող վայրերում կա՛մ սարքավորումներ օգտագործելիս, կա՛մ դրանց մոտ գտնվելիս (ներառյալ՝ համակարգիչներ և հարմարեցվող սարքավորումներ), էլեկտրական ելքերի մոտ կամ սուր առարկաների առկայության դեպքում: Կառավարել ուտելը և կանխարգելել խեղդվելը, խուսափել բերանը ոչ ուտելի նյութեր դնելուց, խաղահրապարակում խուսափել վտանգավոր իրավիճակներից, վթարների և դժբախտ պատահարների դեպքում տեղեկություն հայտնել և գործել արտակարգ իրավիճակներում: | 0 1 2 3 4 | 0 1 2 3 4 |

| | Պատասխանողի անվան սկզբնատառերը | Իմացական և վարքային գործունեություն | | |
|---|---|---|---|---|
| | | | Աջակցության սյան գնահատական | Հարմարեցումների սյան գնահատական |

| Աջակցություն գնահատման բանալի |
|---|
| **0-** աջակցության կարիք չկա |
| **1-** թեթև աջակցություն |
| **2-** միջին աջակցություն |
| **3-** մեծ հաճախականությամբ աջակցություն |
| **4-** ամբողջական կամ մշտական աջակցություն |

| Հարմարեցումների գնահատման բանալի |
|---|
| **0-** հարմարեցումների կարիք չկա |
| **1-** նվազագույն հարմարեցումներ |
| **2-** որոշակի հարմարեցումներ |
| **3-** զգալի հարմարեցումներ |
| **4-** ամբողջական(լայնածավալ) հարմարեցումներ |

# ՄԱՍ III ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

/ֆիզիկական գործունեություն/

**Ուղեցույց:** Կարդալ ստորև բերված յուրաքանչյուր ֆունկցիոնալ գործողության նկարագրությունը: Այնուհետև անդրադառնալ գնահատման սանդղակի ուղեցույցում տրված երրորդ մասի գնահատման չափանիշին՝ որոշելու համար աշակերտի յուրաքանչյուր գործողության կատարողականության գնահատականը: Գումարել յուրաքանչյուր սանդղակի գնահատականները՝ ստանալու համար սյան ընդհանուր գնահատականը և նշել այն համապատասխան քառակուսու մեջ:

| **Տեղաշարժվել** | | | |
|---|---|---|---|
| 1. Շարժվում է հարթ մակերեսների՝ ներառյալ մայթերի, հատակի և մայթեզրերի վրայով | | | 0 1 2 3 4 |
| 2. Շարժվում է դասարանում | | | 0 1 2 3 4 |
| 3. Անցնում է դռների կամ նեղ բացվածքների միջով | | | 0 1 2 3 4 |
| 4. Շարժվում է միջին տարածություններ | | | 0 1 2 3 4 |
| 5. Շարժվում է դեպի հարակից դասարան | | | 0 1 2 3 4 |
| 6. Շարժվում է դեպի ցանկացած վայր, տարածք, շենքի ներսի նույն հարկում | | | 0 1 2 3 4 |
| 7. Շարժվում է միջանցքում | | | 0 1 2 3 4 |
| 8. Շարժվում է թեք մակերեսով՝ դեպի վեր և վար | | | 0 1 2 3 4 |
| 9. Առանց խոչընդոտների բախվելու ազատ շարժվում է սենյակում | | | 0 1 2 3 4 |
| 10. Կարճ տարածության վրա հասակակիցների հետ պահպանում է հեռավորություն | | | 0 1 2 3 4 |
| 11. Առանց մարդկանց կամ խոչընդոտների բախվելու մտնում է սենյակ և նստում | | | 0 1 2 3 4 |
| 12. Շարժվում է անհարթ մակերեսների վրա (օրինակ՝ սիզամարգեր, խոշոր ավազ և դռան շեմ) | | | 0 1 2 3 4 |
| 13. Շարքի մեջ շարժվում է դասարանցիների հետ | | | 0 1 2 3 4 |
| 14. Շրջանցում է փոսերը, ակոսները և այլ վտանգավոր մակերեսները | | | 0 1 2 3 4 |
| 15. Անցնում է մարդաշատ տարածությունների միջով (օրինակ՝ մարդաշատ միջանցքներ) առանց մարդկանց կամ առարկաներին բախվելու | | | 0 1 2 3 4 |
| 16. Դուրս է գալիս շենքից նախատեսված ելքով (տարհանման ընթացքում)՝ անհրաժեշտ ժամանակահատվածում | | | 0 1 2 3 4 |
| 17. Պահպանում է համապատասխան արագությունը (հասցնում է հասակակիցների հետևից) և կարիք եղած դեպքում համապատասխանեցնում է արագությունը տվյալ վայրին | | | 0 1 2 3 4 |
| 18. Շարժվում է դպրոցի շրջակայքով՝ ներառյալ ճանապարհային անցումները, (ավտոկանգառը, դպրոցի ավտոճանապարհը, խաղահրապարակը, դաշտը) | | | 0 1 2 3 4 |
| 19. Շարժվում է սայթաքուն մակերեսներով (թաց կամ նոր լվացած գետնի վրայով, սառցեպատ ճանապարհներով) | | | 0 1 2 3 4 |
| | Պատասխանողի անվան սկզբնատառերը | **Տեղաշարժվել** սյան գնահատական | |

| Պահել և փոխել դիրքը | |
|---|---|
| 1. Կայուն նստում է գետնին | 0 1 2 3 4 |
| 2. Հատակից նստում է աթոռի կամ սայլակի վրա<br>3. Հատակից վեր է կենում և պահում կանգնած դիրք | 0 1 2 3 4 |
| 4. Նստում է աթոռներին/սայլակներին և վեր է կենում դրանց վրայից | 0 1 2 3 4 |
| 5. Տեղափոխվում է աթոռից/սայլակից դեպի հատակ | 0 1 2 3 4 |
| 6. Աթոռից/սայլակից ինքնուրույն վեր է կենում և պահում կանգնած դիրք | 0 1 2 3 4 |
| 7. Պահպանում է համապատասխան դիրք, որպեսզի նստած աշխատանք կատարի պահանջված դասարանային գործողությունների ընթացքում | 0 1 2 3 4 |
| 8. Նստում և վեր է կենում զուգարանագոգից<br>9. Կայուն նստում է զուգարանագոգի վրա | 0 1 2 3 4 |
| 10. Նստում և դուրս է գալիս ամենաքիչը մեկ տեսակի ավտոմեքենայից | 0 1 2 3 4 |
| 11. Նստում և դուրս է գալիս բոլոր տեսակի ավտոմեքենաներից (օրինակ՝ մարդատար մեքենա, ավտոբուս կամ այլ ավտոմեքենա) | 0 1 2 3 4 |
| 12. Հատակից նստում է աթոռի կամ սայլակի վրա<br>13. Հատակից վեր է կենում և պահում կանգնած դիրք | 0 1 2 3 4 |
| 14. Նստում է աթոռներին/սայլակներին և վեր է կենում դրանց վրայից | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Պահել և փոխել դիրքը** սյան գնահատական | |

| Համակարգված շարժում | |
|---|---|
| 1. Խաղում է նվազագույնը մեկ տեսակի շարժական խաղալիքով (օրինակ՝ ճոճանակ) | 0 1 2 3 4 |
| 2. Բարձրանում կամ մագլցում է ցածր դիրքում գտնվող խաղային սարքավորումների վրա | 0 1 2 3 4 |
| 3. Բարձրանում կամ մագլցում է բարձր դիրքում գտնվող խաղային սարքավորումների վրա | 0 1 2 3 4 |
| 4. Նետում և բռնում է մեծ գնդակ | 0 1 2 3 4 |
| 5. Նետում և բռնում է փոքր գնդակ | 0 1 2 3 4 |
| 6. Վազում է նվազագույնը վեց մետր՝ առանց ընկնելու | 0 1 2 3 4 |
| 7. Վազում է՝ առանց ընկնելու, ուղղությունը և արագությունը փոխելու | 0 1 2 3 4 |
| 8. Կարող է անել հետևյալներից երկուսը կամ ավելին՝ ցատկել, ոստոստալ, թռչկոտել կամ վազել | 0 1 2 3 4 |
| 9. Խաղում է մեկ կամ ավելի խաղեր, որոնք պարունակում են հարված | 0 1 2 3 4 |
| 10. Խաղում է երկու կամ ավելի խաղեր, որոնք պարունակում են հարված թիրախին (օրինակ՝ բասկետբոլ, վոլեյբոլ, շրջանի մեջ միմյանց գնդակի փոխանցումներով խաղ) | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Համակարգված շարժման** սյան գնահատական | |

**Հուշում**. Գնահատման սահմանումները և օրինակները կարող եք գտնել գնահատման սանդղակի ուղեցույցում:

| Շարժումների կառավարում. | |
|---|---|
| 1. Տեղափոխում է փոքր իրեր, որոնք կարող են տեղավորվել մեկ ձեռքում | 0 1 2 3 4 |
| 2. Տանում է այն մեծության առարկաներ, որոնք պահանջում են երկու ձեռքի օգտագործում | 0 1 2 3 4 |
| 3. Բացում և փակում է դռներ, որոնք պահանջում են միայն հրում | 0 1 2 3 4 |
| 4. Բացում է դիմադրություն ունեցող դռներ | 0 1 2 3 4 |
| 5. Բացում և փակում է դռներ, որոնք ունեն դռան գլխիկ, բռնակ | 0 1 2 3 4 |
| 6. Շարժում է առարկաներ գետնի վրայով (օրինակ՝ հրում է աթոռն իր տեղը) | 0 1 2 3 4 |
| 7. Տեղավորում է նյութերն ազատ տեղերում, ծանրաբեռնված մակերեսի վրա (օրինակ՝ սկուտեղ, սեղան) | 0 1 2 3 4 |
| 8. Ապահով տեղավորում է թափվող /կոտրվող նյութերը սեղանի վրա (օրինակ՝ սկուտեղ, հյութով լի բաժակ, փխրուն նյութ) | 0 1 2 3 4 |
| 9. Տանում է սկուտեղը (կամ այլ նմանատիպ առարկա), մեկից ավելի նյութեր պարունակող՝ առանց դրանք թափելու կամ գցելու | 0 1 2 3 4 |
| 10. Գետնից վերցնում է փոքր կամ բարակ առարկաներ (օրինակ՝ մատիտ, թուղթ) | 0 1 2 3 4 |
| 11. Սեղանից վերցնում է նյութեր (օրինակ՝ ուտելիք, նկարչական պարագաներ) | 0 1 2 3 4 |
| 12. Անցնում է նեղ տարածություններով առարկաներ կրելիս (օրինակ՝ ճաշարանում սկուտեղը ձեռքին, սեղանների նեղ արանքով) | 0 1 2 3 4 |
| 13. Անցնում է հերթի միջով (օրինակ՝ ծառայությունների, նյութերի բաշխման հերթ)՝ ընդունելի ժամանակահատվածում | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Շարժումների կառավարման** սյան գնահատական | |

| Պարագաների օգտագործում | |
|---|---|
| 1. Բացում և փակում է գիրքը | 0 1 2 3 4 |
| 2. Նորմալ թերթում է մեծ գրքերի էջերը | 0 1 2 3 4 |
| 3. Նորմալ թերթում է փոքր գրքի էջերը | 0 1 2 3 4 |
| 4. Ներկում է վրձինով | 0 1 2 3 4 |
| 5. Օգտագործում է գրելու պարագաներ (մատիտներ, գրիչներ, ֆլոմաստերներ)՝ թղթի վրա գրելու/ նկարելու համար | 0 1 2 3 4 |
| 6. Հանում և փոխում է գրիչների և ֆլոմաստերների կափարիչները | 0 1 2 3 4 |
| 7. Սրում է մատիտը սրիչով | 0 1 2 3 4 |
| 8. Ջնջում է մատիտի գրածը՝ առանց թուղթը պատռելու | 0 1 2 3 4 |
| 9. Օգտագործում է նկարչական բոլոր պարագաները | 0 1 2 3 4 |
| 10. Ուղիղ ծալում է թուղթը | 0 1 2 3 4 |
| 11. Տարածում է մածուկը կամ սոսինձը թղթի վրա և տեղադրում է այլ թուղթ վերջինիս վրա՝ կպցնելու համար | 0 1 2 3 4 |
| 12. Ընդհանուրից առանձնացնում է մեկ թերթ՝ օգտագործման համար | 0 1 2 3 4 |
| 13. Դնում է թուղթը թղթապանակի մեջ | 0 1 2 3 4 |
| 14. Մկրատով կտրում է ուղիղ գծով | 0 1 2 3 4 |
| 15. Կտրում և օգտագործում է ժապավեն | 0 1 2 3 4 |
| 16. Կտրում և ձևում է հասարակ պատկերներ | 0 1 2 3 4 |
| 17. Ամրացնում է թուղթը ամրակի օգնությամբ | 0 1 2 3 4 |
| 18. Օգտագործում է կարիչ՝ երկու կամ ավելի թղթեր միմյանց փակցնելու համար | 0 1 2 3 4 |
| 19. Օգտագործում է միջին չափի խաղալիքները (օրինակ՝ մեքենաները, տիկնիկները) | 0 1 2 3 4 |
| 20. Օգտագործում է փոքր խաղային մասնիկները կամ խաղալիքները | 0 1 2 3 4 |
| 21. Ծրծում է կավը և իրի ձև տալիս դրան | 0 1 2 3 4 |
| 22. Հավաքում է մի քանի թերթեր՝ եզրերը համապատասխանեցնելով (օրինակ՝ ծակելու կամ դասավորելու համար) | 0 1 2 3 4 |
| 23. Փաթաթում է թուղթը և ստվարաթուղթը, ինչ-որ բան ստանում դրանցով | 0 1 2 3 4 |
| 24. Կառուցում է՝ օգտագործելով տարբեր նյութեր (օրինակ՝ թուղթ, փայտ, կտոր, կաշի, պարան, թել) | 0 1 2 3 4 |
| Պատասխանողիանվան սկզբնատառերը — **Պարագաների օգտագործման** սյան գնահատական | |

| Գործողության կատարման գնահատման բանալի |
|---|
| 0- կատարում է կայուն կերպով |
| 1- կատարում է ՝ որոշակի հուշումներով |
| 2- կատարում է մասնակի |
| 3- կատարում է մասնակի՝ որոշակի հուշումներով |
| 4- չի կատարում |

| Պարագաների տեղափոխում | |
|---|---|
| 1. Ձեռքով վերցնում և պահում է փոքր առարկաներ | 0 1 2 3 4 |
| 2. Դնում է առարկաները/նյութերը մեծ տարաների մեջ/վրա (օրինակ՝ աշխատասեղանի վրա, գրապահարանի և պահարանների մեջ) | 0 1 2 3 4 |
| 3. Հանում և տեղադրում է գիրքն աշխատասեղանի վրա | 0 1 2 3 4 |
| 4. Բացում է չամրացվող տոպրակը (օրինակ՝ թղթե տոպրակ) | 0 1 2 3 4 |
| 5. Բացում է տարաների կափարիչները | 0 1 2 3 4 |
| 6. Տեղադրում է առարկաները/նյութերը փոքր տարաների մեջ (օրինակ՝ բանկաների) | 0 1 2 3 4 |
| 7. Օգտագործում է սպունգ կամ կտոր հարթ մակերեսը (օրինակ՝աշխատասեղան/սեղան) կեղտից կամ թափված նյութից մաքրելու համար | 0 1 2 3 4 |
| 8. Հանում է նյութերը/ուտելիքը մեծ տարաներից (օրինակ՝ տուփերից, գրապահարաններից և պահոցներից) | 0 1 2 3 4 |
| 9. Հանում է նյութերը կամ ուտելիքը փոքր տարաներից (օրինակ՝ բանկաներից, ստավարաթղթե տուփերից) | 0 1 2 3 4 |
| 10. Փաթաթում/հավաքում է նյութերը (օրինակ՝ աշխատասեղանի, սկուտեղի վրա) | 0 1 2 3 4 |
| 11. Հանում է անձնական իրերը պայուսակից կամ գրպանից և տալիս ուրիշներին (օրինակ՝ տնային աշխատանք, գումար՝ ուտելու համար) | 0 1 2 3 4 |
| 12. Փոխանցում է առարկաներ կամ նյութեր | 0 1 2 3 4 |
| 13. Բացում է ստվարաթղթե տարաներ (օրինակ՝ կաթի տուփը) | 0 1 2 3 4 |
| 14. Բացում է փակված տուփեր (օրինակ՝ թխվածքաբլիթների) | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Պարագաների տեղափոխման** սյան գնահատական | |

| **Սնվել** | |
|---|---|
| **Եթե աշակերտը սնվում է միայն խողովակով, գնահատել բոլոր կետերը 4 և անցնել հաջորդ մասին** | |
| 1. Ուտում է սովորական ճաշի ժամի ուտելիքներ՝ առանց խեղդվելու | 0 1 2 3 4 |
| 2. Խմում է բաժակից | 0 1 2 3 4 |
| 3. Վերցնում և դնում է ուտելու պարագաները | 0 1 2 3 4 |
| 4. Տանում է ձեռքով ուտելու կերակուրը դեպի բերանը և կծում փոքր կտորներով | 0 1 2 3 4 |
| 5. Ափսեից/տարայից ուտելիքը բերում է դեպի բերանը գդալի կամ պատառաքաղի օգնությամբ | 0 1 2 3 4 |
| 6. Խմում է նվազագույնը մեկ տեսակի տարայից՝ առանց թափելու (օրինակ՝ բաժակից,ստվարաթղթե տարայից) | 0 1 2 3 4 |
| 7. Խառնում է ուտելիքը կամ խմիչքը գդալով | 0 1 2 3 4 |
| 8. Ուտում է առանց թուքը կաթեցնելու | 0 1 2 3 4 |
| 9. Ուտում է նախատեսված ժամանակի մեջ | 0 1 2 3 4 |
| 10. Խառնում է ուտելիքը պատառաքաղով | 0 1 2 3 4 |
| 11. Օգտագործում է անձեռոցիկ՝ երեսը մաքրելու համար | 0 1 2 3 4 |
| 12. Վերցնում է ուտելիքը պատառաքաղով | 0 1 2 3 4 |
| 13. Օգտագործում է անձեռոցիկ՝ ձեռքերը մաքրելու համար | 0 1 2 3 4 |
| 14. Խմում է աշակերտների համար նախատեսված ցայտաղբյուրից | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Սնվելու** սյան գնահատական | |

| **Հիգիենա** | |
|---|---|
| **Գնահատել կոնկրետ ֆիզիկական կատարումը, ճանաչողական և վարքագծային խնդիրներին անդրադարձվում է այլ մասում** | |
| 1. Բացում/փակում է ջուրը | 0 1 2 3 4 |
| 2. Լվանում է ձեռքերը | 0 1 2 3 4 |
| 3. Օգտագործում է  թղթից կամ կտորից սրբիչներ | 0 1 2 3 4 |
| 4. Չորացնում է ձեռքերը (օգտագործելով ցանկացած միջոց) | 0 1 2 3 4 |
| 5. Օգտագործում է հեղուկ օճառ՝ ցանկացած տարայից կամ բռնում և օգտագործում է պինդ օճառ | 0 1 2 3 4 |
| 6. Սրբում է քիթը | 0 1 2 3 4 |
| 7. Հոգում է զուգարանային կարիքները ժամանակին՝ խուսափելով թրջվելուց (օրինակ՝ գնում է զուգարան կամ փոխում է տակդիրը ժամանակին) | 0 1 2 3 4 |
| 8. Սեղմում է սեղմակը՝ ջուրը քաշելու համար | 0 1 2 3 4 |
| 9. Օգտագործում է զուգարանի թուղթ պտուտակից կամ ցանկացած համապատասխան տարայից | 0 1 2 3 4 |
| 10. Բարձրացնում կամ իջեցնում է զուգարանի կափարիչը՝ ըստ կարիքի | 0 1 2 3 4 |
| 11. Փակում և կողպում է զուգարանի  կամ տաղավարի դուռը | 0 1 2 3 4 |
| 12. Լվացվում և սրբվում է զուգարանային գործողություններից հետո (հաշվի առնել բոլոր տեսակի լվացումները՝ բացի ձեռքերից) | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Հիգիենայի** սյան գնահատական | |

**Հուշում.** Գնահատման սահմանումները և օրինակները կարող եք գտնել գնահատման սանդղակի ուղեցույցում:

| **Հագուկապ.** | |
|---|---|
| 1. Հանում է գլխարկը | 0 1 2 3 4 |
| 2. Հանում է դիմացից կոճկվող շապիկը (օրինակ՝ վերնաշապիկ, բաճկոն) | 0 1 2 3 4 |
| 3. Հագնում է գլխարկը | 0 1 2 3 4 |
| 4. Հագնում է դիմացից կոճկվող շապիկը (օրինակ՝ վերնաշապիկ, բաճկոն) | 0 1 2 3 4 |
| 5. Արձակում է շապիկի կոճակները վերից վար և կոճկում հակառակ ուղղությամբ | 0 1 2 3 4 |
| 6. Կոճկում և արձակում է հագուստը, չհաշված՝ կայծակաճարմանդը | 0 1 2 3 4 |
| 7. Հանում է չկոճկվող շապիկը (օրինակ՝ բամբակյա շապիկ, բլուզ) | 0 1 2 3 4 |
| 8. Հանում է կոշիկները/մարզակոշիկները | 0 1 2 3 4 |
| 9. Կախում է շորերը պահարանում կամ կախիչից | 0 1 2 3 4 |
| 10. Հագնում է չկոճկվող շապիկ ( օրինակ՝ բլուզ) | 0 1 2 3 4 |
| 11. Հանում և հագնում է գուլպաներ | 0 1 2 3 4 |
| 12. Հագնում է կոշիկներ/մարզակոշիկ (հաշվի չառնել կոճկելը) | 0 1 2 3 4 |
| 13. Կոճկում է կոշիկները քուղերով կամ այլ միջոցներով | 0 1 2 3 4 |
| 14. Կոճկում և արձակում է կայծակաճարմանդը | 0 1 2 3 4 |
| 15. Ճիշտ է կոճկում կոճակների շարքը | 0 1 2 3 4 |
| 16. Ամրացնում է գոտին | 0 1 2 3 4 |
| 17. Կոճկում է փոքր կոճակները (2,5 սմ-ից պակաս) | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Հագուկապի** սյան գնահատական | |

| Աստիճաններով բարձրանալ, իջնել | |
|---|---|
| **Լրացնել այս սանդղակը միայն այն դեպքում, երբ աշակերտը պետք է կանոնավոր կերպով օգտագործի աստիճանները դպրոցում** | |
| 1. Բարձրանում և իջնում է մեկ աստիճան (օրինակ՝ մայթեզրը) | 0 1 2 3 4 |
| 2. Անցնում/բարձրանում/իջնում է կարճ աստիճաններով (4-5 աստիճան) | 0 1 2 3 4 |
| 3. Անցնում/իջնում է երկար աստիճաններով (նվազագույնը 10 աստիճան) | 0 1 2 3 4 |
| 4. Անցնում/բարձրանում է երկար աստիճաններով (նվազագույնը 10 աստիճան) | 0 1 2 3 4 |
| 5. Անցնում/բարձրանում/իջնում է երկար աստիճաններով (նվազագույնը 10 աստիճան) կայուն արագությամբ | 0 1 2 3 4 |
| 6. Անցնում/ բարձրանում/իջնում է աստիճաններով կանոնավոր արագությամբ՝ միևնույն ժամանակ առարկաներ կրելով | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Աստիճաններով բարձրանալ/իջնելու** սյան գնահատական | |

| Գրավոր աշխատանք. | |
|---|---|
| **Լրացնել այս սանդղակը, եթե աշակերտը կանոնավոր կերպով օգտագործում է թուղթ և գրիչ դասարանային աշխատանքի համար** | |
| 1. Գրում է ձախից աջ | 0 1 2 3 4 |
| 2. Թղթի կամ տետրի վրա գրում է տողերի վրա կամ համապատասխան վայրում | 0 1 2 3 4 |
| 3. Գրում է համապատասխան թվերով ու տառերով | 0 1 2 3 4 |
| 4. Գրում է ընթեռնելի տառեր և թվեր | 0 1 2 3 4 |
| 5. Աշխատաթերթիկի վրա տեղավորում է բազմաթիվ կետեր (իմաստային)՝ կետերը չի գրում միմյանց վրա | 0 1 2 3 4 |
| 6. Արտագրում է նյութը կոկիկ և ընթեռնելի՝ մոտ գտնվող նյութից (օրինակ՝ գրքից) | 0 1 2 3 4 |
| 7. Բառերը գրում է համապատասխան հեռավորության վրա | 0 1 2 3 4 |
| 8. Դասավորում է թվերը և տառերն ըստ պահանջի (օրինակ՝ թվային խնդիրներ, ցուցանակներ) | 0 1 2 3 4 |
| 9. Գրավոր առաջադրանքները ,դասավորում էե էջի վրա (օրինակ՝ էջի վրա տեղավորում է մաթեմատիկական խնդիրները, անցնում է հաջորդ տողին, երբ անհրաժեշտ է) | 0 1 2 3 4 |
| 10. Հեռու տարածությունից արտագրում է նյութը կոկիկ/ընթեռնելի (օրինակ՝ գրատախտակից) | 0 1 2 3 4 |
| 11. Կատարում է գրավոր աշխատանք՝ հասակակիցներից ետ չմնալու համար անհրաժեշտ արագությամբ | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Գրավոր աշխատանքի** սյան գնահատական | |

| Համակարգչի և սարքավորումների օգտագործում. | |
|---|---|
| **Լրացնել այս սանդղակը միայն այն դեպքում, երբ աշակերտը կանոնավոր կերպով օգտագործում է համակարգիչ** | |
| 1.Օգտագործում է սարքավորումներ պարզ անջատիչի շնորհիվ (օրինակ՝ համակարգիչ/մագնիտոֆոն) | 0 1 2 3 4 |
| 2. Առանց հոգնածության աշխատում է համակարգչով կես ժամ | 0 1 2 3 4 |
| 3. Գտնում և սեղմում է մեկ կամ երկու կոճակ հերթականությամբ՝ իրականացնելու համար համակարգչի որոշ ֆունկցիաներ | 0 1 2 3 4 |
| 4. Գտնում և հերթականությամբ սեղմում է երեք կամ ավելի կոճակներ՝ իրականացնելու համար համակարգչի որոշ ֆունկցիաներ | 0 1 2 3 4 |
| 5. Օգտագործում է մկնիկ՝ իրականացնելու համար համակարգչի որոշ ֆունկցիաներ | 0 1 2 3 4 |
| 6. Դնում և հանում է սկավառակներ՝ համակարգչի կամ մագնիտոֆոնի մեջ | 0 1 2 3 4 |
| 7. Համակարգչով հավաքում է նախադասություն՝ ընդունելի ժամանակահատվածում | 0 1 2 3 4 |
| 8. Կատարում է դասարանային աշխատանք՝ օգտագործելով համակարգիչը հասակակիցներից ետ չմնալու համար անհրաժեշտ արագությամբ | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Համակարգչի և սարքավորումների օգտագործման** սյան գնահատական | |

# ՄԱՍ III ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Իմացական և վարքային գործունեություն

| **Շփում և հաղորդակցում** | |
|---|---|
| **Հաշվի առնել գոյություն ունեցող շփման ցանկացած ձև (օրինակ՝ խոսքով, ժեստերով, համակարգչով, գրավոր, շփման տախտակի միջոցով):** | |
| 1. Արտահայտում է այո/ոչ, կատարում է երկու կամ ավելի պարագաների միջև ընտրություն | 0 1 2 3 4 |
| 2. Արտահայտում է քաղցի կամ ծարավի զգացումը | 0 1 2 3 4 |
| 3. Արտահայտում է հիվանդ լինելը, ցավ զգալը կամ օգնության կարիքը | 0 1 2 3 4 |
| 4. Արտահայտում է առաջնային պահանջմունքները հոգալու (օրինակ՝ զուգարանային գործողության, համար պահանջվող օգնությունը | 0 1 2 3 4 |
| 5. Նշում է իր անունն ու ազգանունը | 0 1 2 3 4 |
| 6. Արտահայտում է, իր կարծիքը դասարանում կամ դպրոցում | 0 1 2 3 4 |
| 7. Փոխանցում է կարճ հաղորդագրություն այլ անձի | 0 1 2 3 4 |
| 8. Փոխանցում է կարճ հաղորդագրություններ մի անձից մյուսին (օրինակ՝ ուսուցչից տնօրենին) | 0 1 2 3 4 |
| 9. Հայտնում և ստանում է նոր տեղեկություններ | 0 1 2 3 4 |
| 10. Նկարագրում է առարկան կամ երևույթը բավականին ճշգրիտ և պատկերավոր | 0 1 2 3 4 |
| 11. Հայտնում է, թե նա ուր պիտի գնա կամ ինչ կանի կորչելու դեպքում (օրինակ՝ դպրոցական էքսկուրսիայի ժամանակ) | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Շփման և հաղորդակցման** սյան գնահատական | |

| **Մտապահում և ընկալում** | |
|---|---|
| 1. Ընկալում և կատարում է պարզ հրահանգները (օրինակ՝ ե՛կ այստեղ, կանգնի՛ր,շարունակի՛ր, վերցրու՛ գիրքը) | 0 1 2 3 4 |
| 2. Կարողանում է վերհիշել և կիրառել նյութերն ու պարագաներն ըստ դասավանդման (օրինակ՝ դասարանային պարագաներ, հարմարեցված սարքավորում, մասնագիտացված առարկաներ) | 0 1 2 3 4 |
| 3. Մտաբերում է ամենօրյա աշխատանքների հաջորդականությունը | 0 1 2 3 4 |
| 4. Վերհիշում է առարկաների դիրքը տարածության մեջ | 0 1 2 3 4 |
| 5. Վերհիշում և կողմնորոշվում է իրեն ծանոթ միջավայրում (օրինակ՝ չի կորչում դպրոցի շրջակայքում) | 0 1 2 3 4 |
| 6. Ընկալում է տարածական հասկացություններ (օրինակ՝ տուփի մեջ, աթոռի տակ) | 0 1 2 3 4 |
| 7. Ընկալում և կատարում է երկու գործողություն պարունակող առաջադրանքները | 0 1 2 3 4 |
| 8. Ընկալում է խաղի կանոնները և գործում է ըստ պահանջվող քայլերի հաջորդականության | 0 1 2 3 4 |
| 9. Դրսևորում է ժամանակի փոփոխության հետ կապված հասկացությունների իմացություն (օրինակ՝ հետո, ավելի ուշ) | 0 1 2 3 4 |
| 10. Ընկալում և կատարում է երեք և ավելի գործողություններից բաղկացած առաջադրանքները (օրինակ՝ մի կողմ դի՛ր իրերը, վերցրու՛ բաճկոնդ և շարք կանգնի՛ր) | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Մտապահման և ընկալման** սյան գնահատական | |

**Հուշում.** Գնահատման սահմանումները և օրինակները կարող եք գտնել գնահատման սանդղակի ուղեցույցում:

| **Խմբային կանոններին հետևելը** | |
|---|---|
| 1. Ուտում և խմում է միայն սեփական ուտելիքը, եթե մյուսները չեն առաջարկել | 0 1 2 3 4 |
| 2. Սեռական հարցերի շուրջ դրսևորում է համապատասխան վարքագիծ (օրինակ՝ իրեն ետ է պահում որոշակի սեռական խոսակցություններից/ակտերից, ցույց չի տալիս մարմնի սեռական մասերը) | 0 1 2 3 4 |
| 3. Ժպտում, գլխով է անում կամ ասում ,խնդրեմէ, երբ իրեն ասում են ,շնորհակալությունէ | 0 1 2 3 4 |
| 4. Պահպանում է հապատասխան սոցիալական/ֆիզիկական սահմաններ՝ չպարզելով ձեռքերը, նստելով/կանգնելով համապատասխան հեռավորության վրա | 0 1 2 3 4 |
| 5. Ունի լավ խոսելաձև՝ ներառյալ ,խնդրում եմէ, ,շնորհակալությունէ և ,ներեցեքէ բառերը համապտասխան իրավիճակում | 0 1 2 3 4 |
| 6. Ստանում է իրենից հեռու գտնվող առարկաները համապատասխան ձևով (օրինակ՝ խնդրում/մատնացույց է անում՝ գնալ և վերցնելու փոխարեն) | 0 1 2 3 4 |
| 7. Հետևում է շփման կանոններին խոսելիս՝ (օրինակ՝ ուտելու ընթացքում ախորժակը չփակող թեմաներ, զուգարանային թեմաներ) | 0 1 2 3 4 |
| 8. Թույլտվություն է խնդրում այն իրավիճակներում, որտեղ այն ակնկալվում է (օրինակ՝ սենյակը լքելիս, ուրիշի իրերը օգտագործելիս) | 0 1 2 3 4 |
| 9. Հարգում է ուրիշի մենակ մնալու ցանկությունը | 0 1 2 3 4 |
| 10. Ներողություն է խնդրում ոչ դիտավորյալ գործած սխալների համար (օրինակ՝ ուրիշ մարդու հետ ընդհարվելիս) | 0 1 2 3 4 |
| 11. Ցուցաբերում է հասկացողություն, թե ինչպես և երբ է պետք խոսել անձնական թեմաներով (օրինակ՝ զուգարանային գործողության որևէ դեպքի մասին) | 0 1 2 3 4 |
| 12. Հետևում է հաղորդակցման կանոններին (օրինակ՝ չի տալիս ոչ տեղին հարցեր և չի օգտագործում ուրիշներին շփոթեցնող կամ ցավ պատճառող արտահայտություններ) | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Խմբային կանոններին հետևելու** սյան գնահատական | |

| Մեծահասակների ցուցումներին և դպրոցի կանոններին հետևելը | |
|---|---|
| 1. Կատարում է առաջադրանքը, երբ իրեն ասում են ,այժե կամ ,սկսի՛րե | 0 1 2 3 4 |
| 2. Առաջնորդվում է արտադասարանական հրահանգներով՝ տրված ուսուցչի կամ այլ մեծահասակի կողմից | 0 1 2 3 4 |
| 3. Համագործակցում է, երբ իրեն խնդրում են օգնել մաքրության կամ այլ դասարանային թեթև աշխատանքների հարցում | 0 1 2 3 4 |
| 4. Պատասխանատվությամբ մասնակցում է ստուգարքներին | 0 1 2 3 4 |
| 5. Հետևում է դպրոցի կանոններին (օրինակ՝ չի մտնում արգելված տարածքներ) | 0 1 2 3 4 |
| 6. Դադարեցնում է գործողությունը անմիջապես, երբ ստանում է նման հրահանգ | 0 1 2 3 4 |
| 7. Հետևում է դասարանում տեղաշարժման կանոններին (օրինակ՝ շարք կանգնել, տեղը փոխել) | 0 1 2 3 4 |
| 8. Ուրիշի իրերին խնամքով է վերաբերվում | 0 1 2 3 4 |
| 9. Հետևում է զուգարանից օգտվելու կանոններին (օրինակ՝ օգտագործել ճիշտ քանակի զուգարանի թուղթ, աղբը նետել համապատասխան վայր) | 0 1 2 3 4 |
| 10. Հետևում է դպրոցում տեղաշարժման կանոններին (օրինակ՝ վազել, շարքով քայլել) | 0 1 2 3 4 |
| 11. Հետևում է խոսելաձևի վերաբերյալ կանոններին | 0 1 2 3 4 |
| 12. Մաքրում է նշանակված տարածքը և հավաքում իրերը պահանջվող ժամանակահատվածում | 0 1 2 3 4 |
| 13. Հետևում է մեծերի կողմից դրված ժամանակային սահմանափակումներին | 0 1 2 3 4 |
| 14. Բարձրացնում է ձեռքը՝ (կամ օգտագործում է այլ ժեստ) հարց տալիս կամ պատասխանելիս | 0 1 2 3 4 |
| 15. Պահում է իրերը դասավորված՝ համապատասխան վայրում | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Մեծահասակների ցուցումներին և դպրոցի կանոններին հետևելու** սյան գնահատական | |

| Առաջադրանքների կատարում | |
|---|---|
| 1. Լսում է/ներգրավված է լինում նվազագույնը 5 րոպե | 0 1 2 3 4 |
| 2. Մնում է որոշված խաղային կամ աշխատանքային տարածքում առանց հսկողության՝ որոշ ժամանակ | 0 1 2 3 4 |
| 3. Լուռ հետևում է/կենտրոնանում է՝ ձայնային կամ տեսողական ներկայացման ընթացքում նվազագույնը 20 րոպե | 0 1 2 3 4 |
| 4. Ուշադիր է լինում խմբային աշխատանքների ընթացքում տրվող ցուցումներին | 0 1 2 3 4 |
| 5. Ուշադիր է լինում պատմություն լսելու կամ ուսուցչի կողմից բացատրվող դասի ընթացքում 15 րոպեից ավելի | 0 1 2 3 4 |
| 6. Կատարում է առաջադրանքը ինքնուրույն աշխատանքի կամ խաղի ընթացքում՝ նվազագույնը 15 րոպե | 0 1 2 3 4 |
| 7. Լսում է/ուշադիր է լինում ամբողջական դասի, ներկայացման կամ դասախոսության ընթացքում | 0 1 2 3 4 |
| 8. Պահպանում է կատարման ընդունելի մակարդակ՝ ինքնուրույն աշխատելու ընթացքում | 0 1 2 3 4 |
| 9. Փորձում է բարելավել առաջադրանքի կատարումը՝ ուսուցչի առաջարկությունների կամ դիտողությունների հիման վրա | 0 1 2 3 4 |
| 10. Վերականգնվում է ձախողումից հետո (օրինակ՝ չի հանձնվում կամ կորցնում ինքնակառավարումը) | 0 1 2 3 4 |
| 11. Արագորեն սկսում է աշխատանքը՝ ուղղություններ ստանալուց հետո | 0 1 2 3 4 |
| 12. Գտնում է առաջադրանքի համար անհրաժեշտ նյութերը | 0 1 2 3 4 |
| 13. Ուսուցչին տեղյակ է պահում, երբ ունի առաջադրանքին վերաբերող տեղեկության կամ հատուկ ուղղորդման կարիք | 0 1 2 3 4 |
| 14. Կատարում է մի քանի օր տևողությամբ նախագծեր | 0 1 2 3 4 |
| 15. Օգնություն է խնդրում, երբ կանոնները կամ ցուցումները պարզ չեն բացատրվում | 0 1 2 3 4 |
| 16. Փորձում է ինքնուրույն լուծել խնդրը օգնություն խնդրելուց առաջ | 0 1 2 3 4 |
| 17. Կատարում է իր աշխատանքն արդյունավետ, նույնիսկ երբ մոտ է նստած ուրիշներին (օրինակ՝ անտեսում է խանգարող հանգամանքները) | 0 1 2 3 4 |
| 18. Համապատասխան կերպով փոփոխում է առաջադրանքը կամ նյութերն՝ իր պահանջները բավարարելու համար (օրինակ՝ վերադասավորում է աշխատասեղանը ավելի շատ տեղ ունենալու համար, գրավում է ավելի հարմար դիրք, վերցնում է գրելու այլ միջոց) | 0 1 2 3 4 |
| 19. Ունի ճիշտ, անկախ աշխատելաձև և արդյունավետ է օգտագործում դասաժամը | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Առաջադրանքների** կատարման սյան գնահատական | |

| **Դրական փոխհարաբերություններ** | |
|---|---|
| 1. Դրսևորում է համապատասխան հույզեր մեծահասակի հետ շփման ընթացքում | 0 1 2 3 4 |
| 2. Դրսևորում է համապատասխան հույզեր հասակակցի հետ շփման ընթացքում | 0 1 2 3 4 |
| 3. Սպասում է իր հերթին խմբային աշխատանքի ընթացքում | 0 1 2 3 4 |
| 4. Աշխատում/խաղում է խմբի մեջ՝ առանց աշխատանքը կամ խաղը ընդհատելու | 0 1 2 3 4 |
| 5. Դրսևորում է ինքնուրույնություն՝ սոցիալական շփումների ընթացքում (օրինակ՝ չի կառչում ուրիշներից) | 0 1 2 3 4 |
| 6. Լսում/ուշադրություն է դարձնում ուրիշներին, երբ նրանք խոսում են | 0 1 2 3 4 |
| 7. Կիսվում է իր նյութերով՝ առանց հուշում ստանալու | 0 1 2 3 4 |
| 8. Թույլտվություն է խնդրում ուրիշի կողմից օգտագործվող նյութերը կամ իրերը օգտագործելու համար | 0 1 2 3 4 |
| 9. Սպասում է իր հերթին՝ խոսելու համար | 0 1 2 3 4 |
| 10. Սկսում է զրույցը համապատասխան ձևով | 0 1 2 3 4 |
| 11. Պահում է զրույցը մի քանի մտքերի փոխանակման շնորհիվ | 0 1 2 3 4 |
| 12. Այլ անձանց առաջարկում է օգնություն | 0 1 2 3 4 |
| 13. Համապատասխանեցնում է ձայնի բարձրությունը և տոնայնությունն՝ ըստ իրավիճակի | 0 1 2 3 4 |
| 14. Դրական մեկնաբանություններ է անում հասակակիցների վերաբերյալ (օրինակ՝ հաջող կատարման վերաբերյալ) | 0 1 2 3 4 |
| 15. Համապատասխան կերպով վերջացնում է զրույցը | 0 1 2 3 4 |
| 16. Խնդրում է միանալ խաղին կամ աշխատող խմբին | 0 1 2 3 4 |
| 17. Համագործակցում է այլ աշակերտների հետ՝ աշխատելով գործունեության բոլոր ոլորտներում | 0 1 2 3 4 |
| 18. Ուրիշների հետ նախաձեռնում է զրույց՝ ընդհանուր հետաքրքրության շրջանակում | 0 1 2 3 4 |
| 19. Լսում է ուրիշներին և արտահայտում սեփական կարծիքը | 0 1 2 3 4 |
| 20. Բանակցում է կայացրած որոշումների վերաբերյալ և փոխհամաձայնության է գալիս մյուսների հետ | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Դրական փոխհարաբերությունների** սյան գնահատական | |

**Հուշում.** Գնահատման սահմանումները և օրինակները կարող եք գտնել գնահատման սանդղակի ուղեցույցում:

| **Վարքի կառավարում** | |
|---|---|
| 1. Ցուցաբերում է համապատասխան ինքնակառավարում | 0 1 2 3 4 |
| 2. Ընդունում է օրակարգում կատարված անսպասելի փոփոխությունները | 0 1 2 3 4 |
| 3. Չի փորձում ազդեցություն ունենալ մյուսների վրա | 0 1 2 3 4 |
| 4. Օգտագործում է բարեկիրթ բառեր | 0 1 2 3 4 |
| 5. Պահպանում է ինքնակառավարումը մեծ խմբերի մեջ (ճաշարանում, հավաքույթների ընթացքում) | 0 1 2 3 4 |
| 6. Լսում է արդարացի քննադատությունն՝ առանց ինքնատիրապետումը կորցնելու | 0 1 2 3 4 |
| 7. Օգտագործում է բառեր, այլ ոչ թե ֆիզիկական գործողություններ՝ սադրանքին պատասխանելու համար կամ ուրիշների վրա զայրացած լինելու ժամանակ | 0 1 2 3 4 |
| 8. Դիմում է մեծահասակների օգնությանը, եթե այն անհրաժեշտ է, հասակակիցների հետ կոնֆլիկտ ունենալու ժամանակ | 0 1 2 3 4 |
| 9. Կարողանում է տիրապետել իրեն լարված իրավիճակներում | 0 1 2 3 4 |
| 10. Հաղթահարում է հուսախաբությունը դպրոցական առաջադրանքներում/գործողություններում դժվարություններ ունենալիս | 0 1 2 3 4 |
| 11. Ողջախոհ է իր բառերում և գործողություններում՝ կռվարար անձանց, կամ անծանոթների շրջապատում | 0 1 2 3 4 |
| 12. Ինքնուրույն և խոհեմ լուծում է առօրյա կոնֆլիկտները կամ խնդիրները հասակակիցների հետ՝ առանց խնդրելու ուսուցչի օգնությունը | 0 1 2 3 4 |
| Պատասխանողի անվան սկզբնատառերը — **Վարքի կառավարման** սյան գնահատական | |

| Ապահովություն և անվտանգություն | |
|---|---|
| 1. Վտանգավոր առարկաները չի մոտեցնում բերանին | 0 1 2 3 4 |
| 2. Մեծահասակներին հայտնում է հիվանդության/վնասվածքի մասին | 0 1 2 3 4 |
| 3. Ցուցաբերում է զգուշություն էլեկտրական սարքավորումների, հոսանքի կցորդիչների նկատմամբ | 0 1 2 3 4 |
| 4. Ցուցաբերում է համապատասխան զգուշություն՝ ընկնելու հավանականություն ունեցող իրավիճակներում (օրինակ՝ աստիճանների վրա, խաղային կառույցներ մագլցելիս) | 0 1 2 3 4 |
| 5. Ցուցաբերում է համապատասխան զգուշություն տաք առարկաների նկատմամբ՝ ներառյալ ջրի ջերմաստիճանը | 0 1 2 3 4 |
| 6. Ճանաչում է վտանգավոր տարածքները և իրավիճակները և խուսափում է դրանցից (օրինակ՝ կոտրված ապակի) | 0 1 2 3 4 |
| 7. Արտակարգ ազդանշանի դեպքում գործում է ըստ հաստատված կանոնների | 0 1 2 3 4 |
| 8. Ճանաչում է վթարային կամ արտակարգ իրադրությունները և հայտնում է դրանց մասին ուսուցչին կամ որևէ մեծահասակի | 0 1 2 3 4 |
| 9. Զգուշություն է ցուցաբերում այն անծանոթ անձանց նկատմամբ, որոնք չեն ներկայացվել իրեն պատասխանատու մեծահասակի կողմից | 0 1 2 3 4 |
| 10. Փողոցն անցնելիս հետևում է անվտանգությանը՝ նույնիսկ այլ անձի հետ լինելիս (օրինակ՝ նայում/լսում է ազդանշանը փողոցն անցնելիս) | 0 1 2 3 4 |

| | Պատասխանողի անվան սկզբնատառերը | **Ապահովության և անվտանգության** սյան գնահատական | |
|---|---|---|---|

| Գործողության կատարման գնահատման բանալի |
|---|
| 0 - կատարում է կայուն կերպով<br>1 - կատարում է ՝ որոշակի հուշումներով<br>2 - կատարում է մասնակի<br>3 - կատարում է մասնակի՝ որոշակի հուշումներով<br>4 - չի կատարում |

# Դպրոցական գործունեության գնահատում

/գրանցման թերթիկ/

**Տեղեկություն պատասխանողի մասին**

Գնահատման ամսաթիվ՝______/____/____/

Անուն, ազգանուն՝ ______________________ կապն աշակերտի հետ __________

Անուն, ազգանուն՝ ______________________ կապն աշակերտի հետ __________

Անուն, ազգանուն՝ ______________________ կապն աշակերտի հետ __________

Անցկացնողի անուն, ազգանուն՝ ______________________

**Տեղեկություններ աշակերտի մասին**

Երեխայի անուն, հայրանուն, ազգանուն՝ ______________________

Սեռ՝ ☐ արական ☐ իգական Ծննդյան օր, ամիս, տարի՝ ______/____/____/

Դպրոց՝ ______________ դասարան՝ __________ Տարիքը գնահատման պահին՝ __________

Դասվար՝ ______________________

Աշակերտի կրթությունը կազմակերպված է՝

☐ հանրակրթական առարկայական ծրագրով

☐ հանրակրթական առարկայական ծրագրերի հարմարեցումներով

<table>
<tr>
<td>Հաղորդակցման առաջնային միջոցներ (եթե օգտագործվում են մեկից ավելի միջոցներ՝ համարակալել ըստ կիրառման հաճախականության՝ համաձայն՝ 1 - ամենահաճախ, 2, 3….)<br><br>Ընկալման Արտահայտման<br>Բանավոր……………………………………☐……………☐<br>Գրավոր/նկարչական……………………… ☐……………☐<br>Նշաններով/սիմվոլ………………………..☐……………☐<br>Ժեստերով/մարմնի շարժումներով……..☐……………☐<br>Համակարգչով/ էլեկտրոնային………….☐……………☐</td>
<td>Գրավոր աշխատանքի համար օգտագործվող առաջնային միջոցներ (եթե օգտագործվում են մեկից ավելի միջոցներ՝ համարակալել ըստ կիրառման հաճախականության՝ համաձայն՝ 1 - ամենահաճախ, 2, 3….)<br><br>☐ ձեռագիր ☐ համակարգչով<br>☐ Բրայլի տառատեսակ ☐ այլ՝ ______________</td>
</tr>
<tr>
<td>Տեղաշարժման առաջնային միջոցներ (եթե օգտագործվում են մեկից ավելի միջոցներ՝ համարակալել ըստ կիրառման հաճախականության՝ համաձայն՝ 1 - ամենահաճախ, 2, 3….)<br>☐ քայլում է ինքնուրույն<br>☐ քայլում է օրթեզներով<br>☐ հենակներ, քայլակ, ձեռնափայտ<br>☐ սայլակ (մեխանիկական/ էլեկտրական)<br>☐ այլ՝ ______________</td>
<td>Դպրոցից և դեպի դպրոց տեղափոխման հիմնական միջոցներ<br>☐ դպրոցական ավտոբուս<br>☐ հարմարեցված ավտոմեքենա<br>☐ մեքենա<br>☐ ոտքով<br>☐ այլ՝ ______________</td>
</tr>
</table>

## Խնդիրներ, որոնք կարող են ազդել աշակերտի կատարողականի վրա

(Նշել բոլորը, որոնք առկա են և սեղմ նկարագրել)

☐ սովորելու և գիտելիքները կիրառելու ոլորտ ____________________

☐ ընդհանուր առաջադրանքների և պահանջների կատարման ոլորտ ____________________

☐ հաղորդակցության ոլորտ ____________________

☐ շարժունակության ոլորտ ____________________

☐ ինքնասպասարկման ոլորտ ____________________

☐ կենցաղի ոլորտ ____________________

☐ միջանձնային շփման և հարաբերությունների ոլորտ ____________________

☐ կյանքի հիմնական բնագավառների ոլորտ ____________________

☐ Համայնքային, սոցիալական և  քաղաքացիական կյանքի ոլորտ ____________________

# Տեղեկություններ դպրոցի մասին

Արդյո՞ք աշակերտը ներկայումս գտնվում է դասարանի մակարդակում կամ դրան մոտ՝ ակադեմիական տեսանկյունից

☐ Այո ☐ Ոչ (նկարագրել ուժեղ կողմերը և սահմանափակումները)

____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________

**Դպրոցի տեսակը՝**

☐ հիմնական դպրոց
☐ ավագ դպրոց
☐ միջնակարգ դպրոց
☐ հատուկ դպրոց
☐ մասնավոր դպրոց
☐ հիվանդանոցային դպրոց
☐ այլ (նկարագրեք)__________________________

**Ծառայությունների մատուցումը դպրոցում՝**

☐ ուսուցչի օգնական
☐ հատուկ մանկավարժ (տիֆլոմանկավարժ, օլիգոգրենոմանկավարժ, սուրդոմանկավարժ, լոգոպեդ)
☐ հոգեբան
☐ բժիշկ
☐ այլ ___________________________________

**Դասարանում աշակերտների թիվը՝**

Լրացնել այս հատվածը, եթե ֆիզիկական միջավայրի առանձնահատկությունները հավանական է, որ կազդեն աշակերտի ակտիվության և մասնակցության վրա.

☐ մինչև 10 աշակերտ
☐ 10-25 աշակերտ
☐ 25-ից ավելի աշակերտ

**Դպրոցի ֆիզիկական առանձնահատկությունները**

☐ դպրոցը մեկ հարկանի է, չունի աստիճաններ
☐ դպրոցի ամբողջ տարածքը հասանելի է սայլակով, վերելակների կամ թեքահարթակների շնորհիվ
☐ դպրոցից դուրս ամբողջ տարածքը հասանելի է սայլակով (օրինակ՝ դաշտը, խաղահրապարակը)
☐ դպրոցի տարածքի մեծ մասը հասանելի է սայլակով, վերելակների կամ թեքահարթակների շնորհիվ
☐ հիմնական տարածքների միջև ճանապարհին ունի ուղեցույցներ, ուղենիշեր և նշաններ
☐ Բրայլի կամ ձայնային նշանների առկայություն
☐ դպրոցի այլ առանձնահատկություններ, որոնք կարող են առնչվել գնահատվող աշակերտի հետ

## Գնահատման ամփոփագիր

| Մաս I Մասնակցություն | Ամբող-ջական մասնակ-ցություն /0/ | Թեթև աջակ-ցությամբ մասնակ-ցություն /1/ | Միջին աջակց-ությամբ մասնակ-ցություն /2/ | Մեծ հաճախա-կանութամբ աջակ-ցություն մասնակ-ցություն/ 3/ | Ամբողջական կամ մշտական աջակ-ցությամբ մասնակ-ցություն /4/ |
|---|---|---|---|---|---|
| 1. Ընդհանուր դասասենյակ | | | | | |
| 2. Աջակցության ծառայությունների տրամադրմանդասասենյակ | | | | | |
| 3. Խաղահրապարակ/դասամիջոց | | | | | |
| 4. Տեղափոխում | | | | | |
| 5. Լոգարան/զուգարան | | | | | |
| 6. Տեղաշարժ | | | | | |
| 7. Ճաշի ժամ | | | | | |
| **Մասնակցության սյան գնահատական /ընդհանուր գումարը/** | | | | | |

| Մաս II Տրամադրվող աջակցություն | Աջակցություն | | | | | Հարմարեցումներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 0 | 1 | 2 | 3 | 4 | 0 | 1 | 2 | 3 | 4 |
| 1. Տեղաշարժվել | | | | | | | | | | |
| 2. Պահել և փոխել դիրքը | | | | | | | | | | |
| 3. Համակարգված շարժումների կատարում | | | | | | | | | | |
| 4. Շարժումների կառավարում | | | | | | | | | | |
| 5. Պարագաների օգտագործում | | | | | | | | | | |
| 6. Պարագաների տեղափոխում | | | | | | | | | | |
| 7. Սնվել | | | | | | | | | | |
| 8. Հիգիենա | | | | | | | | | | |
| 9. Հագուկապ | | | | | | | | | | |
| 10. Աստիճաններով բարձրանալ, իջնել | | | | | | | | | | |
| 11. Գրավոր աշխատանք | | | | | | | | | | |
| 12. Համակարգչի և սարքավորումների օգտագործում | | | | | | | | | | |
| 13. Շփում և հաղորդակցում | | | | | | | | | | |
| 14. Մտապահում և ընկալում | | | | | | | | | | |
| 15. Խմբային կանոնորին հետևելը | | | | | | | | | | |
| 16. Մեծահասակների ցուցումներին և դպրոցի կանոններին հետևելը | | | | | | | | | | |
| 17. Առաջադրանքների կատարում | | | | | | | | | | |
| 18. Դրական փոխհարաբերություններ | | | | | | | | | | |
| 19. Վարքի կառավարում | | | | | | | | | | |
| 20. Ապահովություն և անվտանգություն | | | | | | | | | | |
| **Աջակցության սյան գնահատական /ընդհանուր գումարը/**<br><br>**Հարմարեցումների սյան գնահատական /ընդհանուր գումարը/** | | | | | | | | | | |

| **Մաս III Գործողությունների կատարում** | **Ընդհա-նուր սյան գնահա-տական** | **0 - կատա-րում է կայուն կերպով** | **1 - կատա-րում է՝ որոշակի հուշում-ներով** | **2 - կատա-րում է մաս-նակի** | **3 - կատա-րում է մաս-նակի՝ որոշակի հուշում ներով** | **4 - չի կատա-րում** |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Տեղաշարժվել | | | | | | |
| 2. Պահել և փոխել դիրքը | | | | | | |
| 3. Համակարգված շարժումների կատարում | | | | | | |
| 4. Շարժումների կառավարում | | | | | | |
| 5. Պարագաների օգտագործում | | | | | | |
| 6. Պարագաների տեղափոխում | | | | | | |
| 7. Սնվել | | | | | | |
| 8. Հիգիենա | | | | | | |
| 9. Հագուկապ | | | | | | |
| 10. Աստիճաններով բարձրանալ, իջնել | | | | | | |
| 11. Գրավոր աշխատանք | | | | | | |
| 12. Համակարգչի և սարքավորումների օգտագործում | | | | | | |
| 13. Շփում և հաղորդակցում | | | | | | |
| 14. Մտապահում և ընկալում | | | | | | |
| 15. Խմբային կանոններին հետևելը | | | | | | |
| 16. Մեծահասակների ցուցումներին և դպրոցի կանոններին հետևելը | | | | | | |
| 17. Առաջադրանքների կատարում | | | | | | |
| 18. Դրական փոխհարաբերություններ | | | | | | |
| 19. Վարքի կառավարում | | | | | | |
| 20. Ապահովություն և անվտանգություն | | | | | | |

## Վաղ մանկական աուտիզմի գնահատման սանդղակ[5]

**Նկարագիր-** «Վաղ մանկական աուտիզմի գնահատման սանդղակ» մեթոդիկան նախատեսված է հոգեբանական զարգացման խնդիրներ ունեցող 2 տարեկան և բարձր երեխաների գնահատման համար:

Հարցաշարը լայնորեն կիրառվում է բժշկական գնահատման մեջ՝ հնարավորություն տալով որոշել երեխայի մոտ խնդրի առկայությունն ու խորության աստիճանը: Հաջողությամբ կիրառվում է նաև հոգեբանամանկավարժական գնահատման ընթացքում:

Սանդղակը կազմված է 15 բաժիններից: Յուրաքանչյուր բաժին ներառում է տվյալ բաժնի սահմանումը, նկարագիրը և գնահատումը, և բաժին 15-ը՝ ամփոփում: Սահմանումը նկարագրում է յուրաքանչյուր բաժնի բովանդակությունը, նկարագիրը տալիս է ցուցումներ՝ գնահատելիս ինչն է անհրաժեշտ կարևորել և հաշվի առնել համապատասխան բաժնում, իսկ գնահատումն իր մեջ ներառում է իրավիճակների չորս տարբերակ՝ ըստ երեխայի խնդրի խորության աստիճանի: Բաժինները հետևյալն են.

1. Փոխհարաբերությունները մարդկանց հետ
2. Նմանակում
3. Հուզական արձագանք
4. Մարմնի տիրապետում
5. Իրերի օգտագործում
6. Հարմարողականությունը փոփոխություններին
7. Տեսողական արձագանք
8. Լսողական արձագանք
9. Համի, հոտի, շոշափման, հպման արձագանք
10. Վախեր և տագնապայնություն
11. Խոսքային հաղորդակցում
12. Ոչ խոսքային հաղորդակցում
13. Ակտիվության մակարդակ
14. Մտավոր զարգացման մակարդակ
15. Ամփոփում

**Կիրառման կարգ/տվյալների ամփոփում**

Վաղ մանկական աուտիզմի գնահատման սանդղակը կիրառվում է հարցազրույցի միջոցով: Հարցաշարը լրացնում է գնահատող մասնագետը երեխայի առանձնահատկություններին քաջատեղյակ անձանց՝ այդ թվում՝ ծնողների կամ ընտանիքի այլ անդամների, մանկավարժների և աջակցող անձնակազմի հետ: Մեթոդիկայում ներառված իրավիճակները գնահատվում են /1-4/ բալային համակարգով: Տարբերակներում կա ընտրության հնարավորություն, իսկ որոշ դեպքերում պետք է գրել այն պատասխանը, որը լավագույնն է նկարագրում երեխային: Միավորների գումարը հաշվելուց հետո ամփոփվում են ստացված արդյունքները:

Եթե միավորների գումարը գտնվում է 15-30 բալային միջակայքում, այն վկայում է այն մասին, որ երեխան չունի աուտիզմին բնորոշ համախտանիշներ, 30-37 բալային միջակայքը վկայում է աուտիզմի թեթև կամ չափավոր աստիճանը՝ երեխայի մոտ առկա են որոշակի համախտանիշներ, 37-60 բալային միջակայքը վկայում է աուտիզմի ծանր աստիճանի մասին՝ երեխան ցուցաբերում է բազմակի համախտանիշներ:

Գնահատող մասնագետը լրացնում է սանդղակի բոլոր 15 բաժինները՝ հաշվի առնելով երեխայի առանձնահատկությունները:

[5]Childhood Autism Rating Scale, https://www.special-learning.com/article/childhood_autism_rating_scale

# ՎԱՂ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՈՒՏԻԶՄԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

**I. Փոխհարաբերությունները մարդկանց հետ.**

**Սահմանում:** Գնահատել, թե ինչպես է երեխան իրեն դրսևորում տարբեր իրավիճակներում՝ ներգրավելով այլ մարդկանց:

**Նկարագիր:** Պատկերացրե՛ք մի իրավիճակ, երբ երեխան հնարավորություն ունի մեծահասակների, քույրերի ու եղբայրների կամ հասակակիցների հետ փոխգործակցման: Հաշվի առեք, թե որքան համառություն կամ համոզելու բարձր կարողություն պետք է ունենա մեծահասակը, որպեսզի արժանանա երեխայի ուշադրությանը: Նշե՛ք երեխայի արձագանքը ֆիզիկական մտերմության նշաններին, օրինակ՝ գրկախառնություն կամ շոյանք, գովասանք կամ քննադատություն: Հաշվի առե՛ք, թե որքան է երեխան կառչում ծնողներից կամ մեծահասակներից: Արդյո՞ք երեխան նախաձեռնում է շփումը մյուսների հետ: Արդյո՞ք երեխան ցուցաբերում է ամաչկոտություն անծանոթների նկատմամբ:

### Գնահատում

**1. Փոխհարաբերություններում չկան որևէ դժվարություններ:** Երեխայի պահվածքը համապատասխանում է տարիքին: Կարող է նկատվել ամաչկոտություն, ընկճվածություն, անհանգստություն այն դեպքերում, երբ երեխային դիմում կամ խնդրում են ինչ-որ բան անել, սակայն դա բնորոշ է այդ տարիքի երեխաներին:

1.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Փոխհարաբերությունների թեթև դժվարություններ:** Երեխան կարող է խուսափել մեծահասակների աչքերի մեջ նայել, կարող է խուսափել մեծերից կամ դառնալ անհանգիստ, եթե հարաբերությունը ստիպողական է, կարող է լինել չափազանց ամաչկոտ, ոչ այնքան արձագանքող, քան բնորոշ է իր տարիքի երեխային կամ կարող է կառչել ծնողից ավելի, քան իր տարիքի մյուս երեխաները:

2.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Փոխհարաբերությունների միջին դժվարություններ:** Երեխան անտարբեր է (ժամանակ առ ժամանակ թվում է, թե չի նկատում մեծահասակին): Երբեմն երեխայի ուշադրությունը գրավելու համար հարկավոր է մեծահասակի համառությունը և պարտադրանքը: Երեխայի նախաձեռնությամբ շփումը նվազագույն է:

3.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4. Փոխհարաբերությունների ծանր դժվարություններ:** Երեխան մշտապես անտարբեր է և չի նկատում, թե ինչ են անում մեծահասակները, երեխան գրեթե միշտ չի արձագանքում և չի նախաձեռնում շփում մեծահասակների հետ, երեխայի ուշադրությունը կարելի է գրավել միայն շատ համառ ջանքերի շնորհիվ:

**II. Նմանակում**

**Սահմանում:** Այս գնահատումը հիմնված է երեխայի նմանակմամբ գործելու խոսքային և ոչ խոսքային միջոցների վրա: Այս բաժինը նախատեսված է գնահատելու նմանակման կարողությունը, այլ ոչ՝ որոշակի առաջադրանքների կամ վերաբերմունքի/պահվածքի կատարումը: Հաճախ առավել նպատակահարմար է պահանջել պահվածքի կամ կարողության նմանակում, որը երեխան արդեն ինքնաբերաբար ցուցաբերել է:

**Նկարագիր:** Խոսքային նմանակումը ներառում է պարզ հնչյունների կամ երկար նախադասությունների կրկնություն: Ոչ խոսքային նմանակումը ներառում է պարզ հնչյունների կամ նախադասությունների կրկնություն: Ոչ խոսքային նմանակումը պետք է ներառի ձեռքերի կամ ամբողջ մարմնի շարժումը, մկրատով կտրելը, մատիտով ուրվագծեր անելը կամ խաղալիքներով խաղալը: Հաշվի առեք՝ երեխան հասկանում է, որ նմանակում է, և դա խաղի մի մասն է: Օրինակ՝ ուշադրություն դարձրեք, թե ինչպես է երեխան հրաժեշտ տալիս, նմանակում ծափահարելը կամ կրկնում մանկական բանաստեղծություններ ու երգեր: Տեսե՛ք, թե ինչպես է երեխան նմանակում պարզ և բարդ հնչյուններն ու շարժումները: Փորձեք նկատել, արդյոք երեխան ակամայի՞ց է ընդօրինակում, թե կարող է հասկանալ, որ մեծահասակն ուզում է, որ ինքը նմանակի, կամ արդյո՞ք կարող է արտաբերել հնչյունը կամ արտասանել բառ, թե՞ շարժումներ է անում, որոնք անհրաժեշտ են մեծահասակին ընդօրինակելու համար: Փորձեք հիշել որքան հնարավոր է շատ իրավիճակներ, երբ երեխան ընդօրինակում է: Հատկապես ուշադրություն դարձրեք, թե նմանակումը տեղի է ունենում անմիջապես, թե՝ զգալի ուշացումով:

### Գնահատում

**1. Երեխայի՝ մեծահասակին նմանակելը համապատասխանում է տարիքին:** Երեխան կարող է նմանակել ձայներ, բառեր, շարժումներ, որոնք համապատասխանում են իր կարողությունների զարգացման մակարդակին:

1.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Նմանակման թեթև դժվարություններ:** Երեխան կարող է նմանակել պարզ պահվածք, օրինակ՝ ծափ տալը կամ խոսքային ձայներ նմանակելը: Երեխան կարողանում է նմանակել աջակցությամբ կամ փոքր-ինչ ուշացումով:

2.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Նմանակման միջին դժվարություններ:** Երեխան հազվադեպ է նմանակում: Նմանակման համար մեծահասակից չափազանց մեծ համառություն և աջակցություն է պահանջվում երեխային օգնելու համար: Հաճախ նմանակում է ուշացումով:

3.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4. Նմանակման ծանր դժվարություններ:** Երեխան հազվադեպ կամ գրեթե երբեք չի նմանակում ձայները, բառերը, շարժումները, նույնիսկ մեծահասակի կողմից աջակցության դեպքում:

**III. Հուզական արձագանք**

**Սահմանում:** Այս բաժինը գնահատում է, թե ինչպես է երեխան արձագանքում իրեն հաճելի և տհաճ իրավիճակներում: Այստեղ ներառված է նաև այն իրողությունը, թե որքանով են երեխայի հույզերն ու զգացմունքները համապատասխանում իրավիճակին: Բաժնում հաշվի են առնվում արձագանքի արտահայտման և՛ տեսակը և՛ ինտենսիվությունը:

**Նկարագիր:** Պատկերացրե՛ք և գնահատե՛ք մի իրավիճակ, թե ինչպես է երեխան պատասխանում իրեն հաճելի ազդակներին, ինչպիսի արձագանք է ցուցաբերում մտերմությանը և գովասանքին, մեղմ խուտուտին, սիրելի ուտելիքին, խաղալիքներին և խաղին, ինչպիսի արձագանք է ցուցաբերում, երբ իրեն հանդիմանում են, քննադատում, բարկանում իր վրա, կամ տեղափոխում են իր սիրելի ուտելիքը կամ խաղալիքը, փոփոխում օրակարգը: Հուզական արձագանքը համարվում է ոչ համապատասխան, երբ երեխան, օրինակ, առանց որևէ ակնհայտ պատճառի ծիծաղում է պատժի կամ նախատինքի դեպքում: Հույզերի բացակայությունը նույնպես համարվում է ոչ համապատասխան այն դեպքում, երբ իր տարիքի երեխաները տվյալ իրավիճակում կցուցաբերեին որևէ հույզ:

### Գնահատում

**1. Երեխայի հուզական արձագանքը համապատասխանում է տարիքին և իրավիճակին:** Երեխան ցուցաբերում է իր տարիքին համապատասխան հուզական արձագանք, ինչն արտահայտվում է դեմքի, դիրքի և պահվածքի փոփոխությամբ:

1.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Հուզական արձագանքի թեթև դժվարություններ:** Երեխան երբեմն անսպասելի արտահայտում է հուզական արձագանք, որը չի համապատասխանում իր շուրջ տեղի ունեցող իրավիճակներին:

2.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Հուզական արձագանքի միջին դժվարություններ:** Երեխայի ցուցաբերած հուզական արձագանքը երբեմն կարող է չհամապատասխանել տեղի ունեցող իրադարձություններին: Հուզական արձագանքը կարող է լինել ուշացած կամ բացարձակ չհամապատասխանել իրավիճակին: Երեխան առանց պատճառի կարող է ծամածռվել, ծիծաղել կամ կոպիտ լինել:

3.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Հուզական արձագաքի ծանր դժվարություններ**: Արձագանքը հազվադեպ է համապատասխանում իրավիճակին, եթե երեխան գտնվում է որոշակի տրամադրության մեջ, ապա այն շատ դժվար է փոփոխել: Բացի այդ, երեխան կարող է ցուցաբերել հույզերի մեծ քանակություն այն դեպքում, երբ ոչինչ տեղի չի ունենում:

**IV. Մարմնի տիրապետում**

**Սահմանում:** Այս բաժինը ներկայացնում է մարմնի ճիշտ և տեղին շարժումները: Այստեղ գնահատվում է հենաշարժողական համակարգը, որը կարող է ներառել այնպիսի դժվարություններ, ինչպիսին են, օրինակ, ծեռքերով տկտկացնելը, մարմնով ճոճվելը, ինքնագրեսիան և այլն:

**Նկարագիր**: Պատկերացրեք այնպիսի գործողություններ, ինչպիսին են, օրինակ, մկրատով կտրելը, նկարելը կամ փազլ հավաքելը ՝ ակտիվ ֆիզիկական խաղերի փոխարեն: Գնահատեք մարմնի օգտագործման ինտենսիվությունն ու հաճախականությունը: Գնահատողը պետք է արգելի մարմի արտառոց շարժումները, որպեսզի կարողանա գնահատել կայունությունը:

### Գնահատում

**1. Երեխայի մարմնի տիրապետումը համապատասխանում է իր տարիքին:** Երեխան շարժվում է ազատ, ճկունությունն ու կոորդինացիան համապատասխանում է տարիքին:

1.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Մարմնի տիրապետման թեթև դժվարություններ:** Երեխան կարող է լինել թափթփված, առկա լինեն կրկնվող շարժումներ: Երեխան կարող է ունենալ վատ կոորդինացիա կամ պահվածքում կարող են արտահայտվել անսովոր շարժումներ:

2.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Մարմնի տիրապետման միջին դժվարություններ:** Երեխան իր տարիքի համեմատ դրսևորում է տարօրինակ կամ անսովոր վարքագիծ: Երեխան կարող է տարօրինակ կերպով շարժել մատները, ունենալ մարմնի և մատների տարօրինակ դիրք, «պլշած հայացք», նախընտրելի շարժումներ, ինքնագրեսիա: Երեխան կարող է ունենալ նաև կսմթելու, ճոճվելու, թռչկոտելու, պտտվելու, մատների վրա քայլելու հակումներ:

3.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4. Մարմնի տիրապետման ծանր դժվարություններ:** Վերոնշյալ պահվածքի առավել ակտիվ և հաճախակի կիրառումը երեխայի կողմից հանգեցնում է մարմինը տիրապետելու ծանր աստիճանի դժվարություններին: Պահվածքը կարող է շարունակվել անգամ այն դեպքում, երբ երեխային փորձում են ներգրավել այլ ակտիվության մեջ:

### V. Իրերի օգտագործում

**Սահմանում:** Այս բաժնում գնահատվում է երեխայի հետաքրքրվածությունը խաղալիքների կամ այլ առարկաների նկատմամբ, ինչպես նաև դրանց օգտագործումը:

**Նկարագիր:** Հաշվի առեք, ինչպես է երեխան խաղում խաղալիքներով, հատկապես չծրագրավորված իրավիճակներում, երբ երեխային հասանելի են շատ առարկաներ: Առարկաները պետք է համապատասխանեն երեխայի կարողություններին և հետաքրքրություններին: Նշե՛ք, թե երեխան ինչ աստիճանի հետաքրքրություն է ցուցաբերում: Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է երեխան օգտագործում խաղալիքների կախվող կամ պտտվող մասերը, օրինակ՝ պտտեցնում է խաղալիք բեռնատար մեքենայի անիվները՝ մեքենան վարելու փոխարեն: Ուշադրություն դարձրե՛ք, թե երեխան անընդհատ ինչ խաղալիքով է խաղում և ինչպես է այն օգտագործում, օրինակ՝ խաղում է լեգոներով և անընդհատ հավաքում է լեգոներից շարք՝ ինչ-որ կառույց ստանալու փոխարեն: Հաշվի առե՛ք, թե երեխան հատկապես ո՛ր առարկաների նկատմամբ է ցուցաբերում չափազանց ուշադրություն այն դեպքում, երբ այլ երեխաներ նույն կարողություններով չեն հետաքրքրվում այդ առարկաներով: Օրինակ՝ արդյո՞ք երեխան չափազանց երկար ժամանակ է անցկացնում լոգարանում լվացվելուց կամ երկար նայում է ծորակից թափվող ջրին: Արդյո՞ք երեխան օգտագործում է խաղալիքներն ու առարկաներն առավել համապատասխան եղանակով, թե՞ ցույց տալուց հետո է կարողանում օգտագործել դրանք սովորական եղանակով:

#### Գնահատում

**1. Խաղալիքների և այլ առարկաների համապատասխան օգտագործում:** Երեխան արտահայտում է իր տարիքին և կարողություններին համապատասխան հետաքրքրություն խաղալիքների և այլ առարկաների նկատմամբ, օգտագործում է դրանք ըստ նշանակության:

1.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Խաղալիքների և այլ առարկաների օգտագործման թեթև դժվարություններ:** Երեխան խաղալիքի հանդեպ կարող է ցուցաբերել անսովոր հետաքրքրություն, խաղալ անսովոր կամ առավել մանկական ձևերով, օրինակ՝ ծափ տա, ծծի խաղալիքը:

2.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Խաղալիքների և այլ առարկաների օգտագործման միջին դժվարություններ:** Երեխան կարող է ցուցաբերել շատ քիչ հետաքրքրություն խաղալիքների և այլ առարկաների նկատմամբ, կամ կարող է տարված լինել, որ խաղալիքները կամ այլ առարկաները օգտագործի անսովոր եղանակով: Նա կարող է կենտրոնացնել իր ուշադրությունը խաղալիքի ոչ կարևոր հատվածի վրա, կարող է տարվել խաղալիքի վրա ընկած լույսով, անընդհատ շարժել խաղալիքի/առարկայի մի հատվածը, կամ խաղալ միայն մեկ խաղալիքով և անտեսել մնացած բոլորը:

3.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4. Խաղալիքների և այլ առարկաների օգտագործման ծանր դժվարություններ:** Վերը նշված պահվածքի առավել ակտիվ և հաճախակի օգտագործումը երեխայի կողմից հանգեցնում է ծանր աստիճանի դժվարությունների: Երբ երեխան զբաղված է այսպիսի ակտիվությամբ, նրան շատ դժվար է շեղել:

### VI. Հարմարվողականությունը փոփոխություններին

**Սահմանում:** Այս բաժինը վերաբերում է արդեն սահմանված կանոնակարգի կամ ձևերի փոփոխման և մի գործունեությունից մյուսից անցնելու դժվարություններին:

**Նկարագիր:** Ուշադրություն դարձրե՛ք, թե երեխան ինչպես է արձագանքում, երբ մի գործունեությունը փոխում են մեկ այլ գործունեությամբ, հատկապես եթե երեխան ակտիվորեն ներգրավված էր նախորդ գործունեության մեջ: Օրինակ, երբ երեխան լեգոներով ինքնուրույն ինչ-որ բան է կառուցում, ինչպես կարձագանքի, եթե մեծահասակը փոփոխի այդ կառույցը:

#### Գնահատում

**1. Երեխայի արձագանքը փոփոխություններին համապատասխանում է տարիքին:** Երբ երեխան նկատում և մեկնաբանում է առօրյա փոփոխությունը, ապա նա ընդունում է այդ փոփոխությունը առանց որևէ սթրեսի:

1.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Փոփոխություններին արձագանքելու թեթև դժվարություններ**: Երբ մեծահասակը փորձում է փոփոխել առաջադրանքը, երեխան կարող է շարունակել նախորդ ակտիվությունը կամ օգտագործել նույն առարկան, բայց հեշտությամբ կարող է շեղվել: Օրինակ՝ երեխան կարող է սկզբում զարմանալ, եթե նրան տանեն մեկ այլ մթերային խանութ կամ նոր ճանապարհով տանեն դպրոց, սակայն հեշտությամբ հարմարվում է:

2.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Փոփոխություններին արձագանքելու միջին դժվարություններ:** Երեխան ակտիվորեն դիմադրում է առօրյա փոփոխություններին, փորձում է շարունակել նախորդ ակտիվությունը և նրան շատ դժվար է շեղել: Նա բարկանում է, եթե փոփոխվում է ծրագիրը: Օրինակ՝ երեխան կարող է պնդել, որ կահույքը վերադասավորեն հին ձևով:

3.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4. Փոփոխություններին արձագանքելու ծանր դժվարություններ:** Երեխան շատ կտրուկ է արձագանքում

փոփոխություններին: Եթե միջավայրը հարկադրաբար փոփոխվի, ապա երեխան կարտահայտի իր բարկությունը, հնարավոր են զայրույթի պոռթկումներ:

**VII. Տեսողական արձագանք**

**Սահմանում:** Այս բաժնի գնահատումը ներառում է երեխայի արձագանքը (հայացքով պատասխանը), երբ նա նայում է ինչ-որ առարկայի կամ երևույթի վրա:

**Նկարագիր:** Ուշադրություն դարձրե՛ք, արդյո՞ք երեխան օգտագործում է իր տեսողությունը/հայացքը առարկաներին նայելու կամ մարդկանց հետ շփվելու ժամանակ: Օրինակ՝ օգտագործում է անկյունային տեսողությունը, այսինքն՝ նայում է աչքերի ծայրով: Երբ երեխան շփվում է այլ մարդկանց հետ, արդյո՞ք նայում է դիմացինի աչքերի մեջ, թե՞ խուսափում է տեսողական շփումից: Որքա՞ն հաճախ պետք է երեխային ասել, որ նայի, երբ առաջադրանք է կատարում: Արդյո՞ք պետք է մեծահասակը թեքի երեխայի գլուխը, որպեսզի գրավի նրա ուշադրությունը: Այս բաժնի գնահատման մեջ ներառվում է երեխայի անսովոր հայացքով նայելը, օրինակ՝ երեխան աչքերը սառեցնում է իր շարժվող մատների վրա, կլանված նայում է շողքին կամ դրա շարժումներին:

### Գնահատում

**1. Երեխայի տեսողական արձագանքը համապատասխանում է տարիքին:** Երեխայի կողմից տեսողությունը կիրառվում է այլ զգայարանների՝ լսողության հետ միասին, որպեսզի երեխան կարողանա ուսումնասիրել նոր առարկան:

1.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Տեսողական արձագանքի թեթև դժվարություններ:** Երբեմն երեխան կարող է նայել այն առարկային, որի մասին հիշեցնում են: Ավելի հավանական է, որ երեխան կհետաքրքրվի իր արտացոլումով հայելու մեջ կամ լույսով, քան իր հասակակիցներով: Երեխան կարող է ժամերով «նայել տարածության մեջ», կարող է խուսափել նայել այլ մարդկանց աչքերի մեջ:

2.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Տեսողական արձագանքի միջին դժվարություններ:** Որպեսզի երեխան նայի որևէ առարկայի վրա, պետք է նրան անընդհատ հիշեցնել դրա մասին: Երեխան կարող է ,նայել տարածության մեջե, խուսափել նայել այլ մարդկանց աչքերի մեջ, նայել առարկաներին անսովոր անկյունից կամ շատ մոտեցնել աչքերին, չնայած որ չունի տեսողության խանգարում:

3.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4. Տեսողական արձագանքի ծանր դժվարություններ:** Երեխան անընդհատ խուսափում է նայել մարդկանց կամ առարկաների վրա, արտահայտում և ցուցաբերում է տեսողական արձագանքի ծայրահեղ դրսևորումներ, որոնք նկարագրված են վերևում:

**VIII. Լսողական արձագանք**

**Սահմանում:** Այս բաժնի գնահատումը ներառում է երեխայի լսողական արձագանքը ձայներին:

**Նկարագիր:** Նկատի ունեցեք օրվա ընթացքում հանդիպող ձայների (փոշեկուլ, լվացքի մեքենա կամ բեռնատար մեքենա) նկատմամբ տարօրինակ նախասիրություններ կամ վախ ունենալը: Նշե՛ք, արդյոք երեխան ցուցաբերու՞մ է ոչ համապատասխան արձագանք բարձր ձայների ժամանակ: Երեխան կարող է չարձագանքել շատ բարձր ձայներին, օրինակ՝ ազդանշանային ձայներին, իսկ շատ ցածր ձայներին, օրինակ՝ շշուկներին արձագանքել: Երեխան կարող է նույնիսկ չափազանց ագրեսիվ արձագանքել սովորական ձայներին՝ կծկվելով կամ ձեռքերը ականջներին տանելով: Որոշ երեխաներ կարող են լսել ձայները, երբ պարապ/անզբաղ են, իսկ մյուսները կարող են հետևել/արձագանքել ոչ կապակցված ձայներին՝ իրենց հիմնական գործունեությունից շեղվելու նպատակով: Մի՛ մոռացեք հաշվի առնել երեխայի հետաքրքրությունը ձայների նկատմամբ և համոզվեք՝ արդյոք, երեխայի հետաքրքրություննն ուղղված է հենց ձայնին, թե՞ դեպի ձայն առաջացնող առարկան:

### Գնահատում

**1. Երեխայի լսողական արձագանքը համապատասխանում է տարիքին:** Երեխայի արձագանքը ձայներին և խոսքին համապատասխանում է տարիքին: Երեխան լսողությունը օգտագործում է այլ զգայարանների հետ միասին:

1.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Լսողական արձագանքի թեթև դժվարություններ:** Կարող են նկատվել որոշակի ձայների նկատմամբ արձագանքի բացակայություն կամ կոնկրետ ձայների նկատմամբ որոշակի ագրեսիվ վարքագծի դրսևորում: Արձագանքը ձայնին կարող է լինել ուշացումով, կարող է անհրաժեշտություն լինել կրկնել ձայնը՝ երեխայի ուշադրությունը գրավելու համար: Արտաքին որոշ ձայներ կարող են անհանգստացնել երեխային:

2.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Լսողական արձագանքի միջին դժվարություններ:** Երեխայի արձագանքը ձայների նկատմամբ կարող է տարբեր լինել: Հաճախ երեխան անտեսում է առաջին մի քանի անգամ լսած ձայնը: Երեխան նաև կարող է վախենալ ամենօրյա ձայներից և ձեռքերով փակել ականջները:

3.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4. Լսողական արձագանքի ծանր դժվարություններ:** Երեխան որոշ ձայներ լսելով չափից ավելի բուռն է արձագանքում կամ չի արձագանքում ձայներին՝ անկախ ձայնի տեսակից: Երեխան կարող է ցուցաբերել գերզգայունություն և/կամ թերզգայունություն ձայների հանդեպ՝ կախված ձայնի տեսակից:

### XI. Համի, հոտառության, շոշափման, հպման արձագանք

**Սահմանում:** Այս բաժնում գնահատվում են երեխայի համի, հոտի և շոշափելիքի զգայարանները (ներառյալ՝ ցավը): Սա նաև զգայական մեթոդների ճիշտ օգտագործման գնահատումն է:

**Նկարագիր:** Ուշադրություն դարձրեք, արդյո՞ք երեխան ցուցաբերում է չափից շատ հետաքրքրություն կամ հակառակը՝ խուսափում է որոշակի հոտերից, սննդամթերքից, նյութերից, համերից կամ գործվածքներից: Արդյո՞ք երեխան կենտրոնացած է որևէ գործողության կատարման վրա, ինչպես, օրինակ գործվածքներով՝ մորթի կամ թել: Արդյո՞ք երեխան հոտ է քաշում սովորական/հասարակ առարկաներից՝ խաղալիքներից, լեգոյի մասնիկներից: Փորձու՞մ է ուտել ուտելու համար ոչ պիտանի նյութեր, օրինակ՝ հող կամ ավազ, տերև, թուղթ կամ պոլիէթիլեն: Երեխաների մոտ հաճախ առանձնանում են հետախուզական, ինֆանտիլային խոսակցություններ կամ յուրահատուկ ու ինտենսիվ վարքագիծ, որը կարծես առնչվում է կոնկրետ օբյեկտների /առարկաների հետ, օրինակ երեխան կարող է մենախոսել դիմելով ձեռքում պահած առարկային: Արդյո՞ք երեխան ունի ոչ սովորական ռեակցիա ցավի նկատմամբ: Արդյո՞ք նա չափազանց սուր է արձագանքում ցավին կամ բոլորովին անտարբեր է:

#### Գնահատում

**1. Համի, հոտառության, շոշափման և հպման արձագանքը համապատասխանում է տարիքին:** Երեխան իր տարիքին համապատասխան ուսումնասիրում է նոր առարկաները՝ հիմնականում դրանց նայելով և շոշափելով: Համի և հոտի օգտագործումը կարող է կիրառվել հարկ եղած ժամանակ, երբ տվյալ առարկան ուտելու է: Փոքր, աննշան ցավի դեպքում, որի պատճառը կարող է լինել հարվածը, ընկնելը, կսմթոցը, երեխան ցուցաբերում է անհանգստություն, բայց ոչ՝ բուռն արձագանք:

1.5 (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Համի, հոտառության, շոշափման, հպման արձագանքի թեթև աստիճանի դժվարություններ:** Երեխան կարող է համառորեն շարունակել առարկաները դնել բերանը, չնայած որ իր տարիքի երեխաների մեծամասնությունը վաղուց մեծացել է այդպիսի բաներից: Ժամանակ առ ժամանակ երեխան կարող է հոտ քաշել կամ համտեսել այն, ինչ ուտելու չէ: Երեխան կարող է անտեսել կամ չափից բուռն արձագանքել կսմթոցին կամ մեկ այլ թեթև ցավին, որն իր տարիքի երեխայի մոտ կարող է արտահայտվել թեթև անհանգստությամբ:

2.5. (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Համի, հոտառության, շոշափման, հպման արձագանքի միջին դժվարություններ:** Չափավոր է խաթարված արձագանքը համին, հոտին և հպմանը: Երեխան կարող է բավականին մտահոգված լինել որևէ մեկի հպումով, հոտոտել և համտեսել առարկաները և մարդկանց: Երեխան կարող է նույնպես չափազանց ուժեղ կամ թույլ արձագանքել:

3.5. (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4. Համի, հոտառության, շոշափման, հպման արձագանքի ծանր աստիճանի դժվարություններ:** Երեխան ավելի շատ հետաքրքրված է առարկաները համտեսելու, շոշափելու և հոտ քաշելու զգացողությամբ, առարկաների ուսումնասիրմամբ և օգտագործմամբ: Երեխան կարող է ամբողջովին անտեսել ցավը կամ ծայրահեղ բուռն արձագանքել մի փոքր անհարմարություն պատճառող ցավին:

### X. Վախեր և տագնապայնություն

**Սահմանում:** Սա անսովոր կամ անհասկանալի վախի գնահատումն է: Սակայն այն ներառում է վախի բացակայության գնահատումը այն պայմաններում, երբ իր տարիքի այլ երեխան նույն զարգացման մակարդակում կցուցաբերի վախ կամ տագնապայնություն:

**Նկարագիր:** Վախի դրսևորումը կարող է արտահայտվել լացով, գոռալով, թաքնվելով կամ որևէ առարկային տկտկացնելով: Այս գնահատումն անցկացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի արձագանքի հաճախականությունը, ծանրությունը/խստությունը և տևողությունը: Արդյո՞ք արտահայտված վախն ընդունելի է, թե՝ անհիմն: Ուշադրություն դարձրեք պատասխանի տարածվածության վրա: Այն սահմանափակվում է մի տեսակի կամ դասակարգի իրավիճակի՞ համար, թե՞ լայն տարածված է շատ կամ բոլոր իրավիճակների համար: Արդյո՞ք նույն տարիքի զարգացող երեխան նմանատիպ իրավիճակում նույն կերպ կարձագանքի: Պատասխանի ինտենսիվությամբ կարելի է գնահատել, թե որքան դժվար է երեխային հանգստացնելը: Այդ տեսակի արձագանքը առաջանում է ծնողներից բաժանելիս, խաղերի ժամանակ հատակից բարձրացնելիս՝ որպես ֆիզիկական մոտեցման պատասխան: Ոչ սովորական արձագանք կարող է առաջանել կոնկրետ երևույթների՝ անձրևի, տիկնիկի, ծեփամածիկի և այլ բաների նկատմամբ: Ոչ սովորական վախի արձագանքի մեկ այլ տեսակ կարող է լինել վախի արտահայտման բացակայումը, օրինակ՝ անծանոթ շների հանդիպելիս, որի դեպքում զարգացող երեխան արձագանքում է: Հիշե՛ք ուշադրություն դարձնել ոչ սովորական տագնապայնությանը: Արդյո՞ք երեխան դյուրագրգիռ է և զարմանալիորեն թեթև է արձագանքում նորմալ ձայներին ու շարժումներին:

#### Գնահատում

**1. Երեխայի մոտ վախերը և տագնապայնությունը արտահայտվում են տարիքին համապատասխան:** Երեխայի վարքագիծը համապատասխանում է ինչպես տարիքին, այնպես էլ՝ իրավիճակին:

1.5. (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Երեխան ունի վախերի և տագնապայնության արտահայտման թեթև աստիճանի դժվարություններ:** Համեմատած իր հասակակիցների հետ՝ նույն իրավիճակում երեխան երբեմն կարող է ընդհանրապես չվախենալ կամ չափազանց ուժեղ արձագանքել:

2.5. (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Երեխան ունի վախերի և տագնապայնության արտահայտման միջին աստիճանի դժվարություններ:** Երեխան արտահայտում է չափից ավելի կամ չափից դուրս քիչ վախ՝ համեմատած նույն իրավիճակում իրենից մեծ կամ իրենից փոքր երեխաների արտահայտած վախի հետ: Համեմատած իրենից մեծ կամ փոքր տարիքի երեխաների արտահայտած վախի և տագնապայնության՝ նույն իրավիճակում երեխան կարող է չափից ավելի շատ կամ չափից ավելի քիչ վախենալ:

3.5. (եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4.Երեխան ունի վախերի և տագնապայնության արտահայտման ծանր աստիճանի դժվարություններ:** Վախը մնում է նույնիսկ մի քանի անգամ կրկնվող վնասակար արդյունք ունենալու դեպքում: Ծայրահեղ դժվար է երեխային հանգստացնել կամ սփոփել: Երեխան կարող է ոչ համապատասխան վերաբերմունք ցուցաբերել վտանգի նկատմամբ, օրինակ՝ անծանոթ շների դեպքում, երբ նույն տարիքի երեխաները խուսափում են:

**XI. Խոսքային հաղորդակցում**

**Սահմանում:** Սա երեխայի խոսքի և լեզվի օգտագործման գնահատումն է: Հաշվի առեք ոչ միայն խոսքի առկայությունը կամ բացակայությունը, այլ նաև բոլոր տարրերի առանձնահատկությունները, տարօրինակությունները և երեխայի խոսքի արտասանությունը: Այսպիսով, երբ ցանկացած տեսակի խոսքն առկա է, ուշադրություն դաձրեք երեխայի բառապաշարին, նախադասության կառուցվածքին, տոնայնությանը, հնչեղությանը, արտասանման ռիթմին և այն հանգամանքին՝ արդյոք երեխայի խոսակցությունը համապատասխանու՞մ է տվյալ իրավիճակին, թե ոչ:

**Նկարագիր:** Դիտարկե՛ք յուրօրինակ կամ անհամապատասխան առոգանության հաճախականությունը, ինտենսիվությունն ու ծավալը: Նշե՛ք, թե ինչպես է երեխան խոսում, պատասխանում հարցերին և կրկնում բառերն ու հնչյունները, երբ նրանից դա պահանջվում է: Բանավոր հաղորդակցման խնդիրները ներառում են խոսքի բացակայություն, խոսել սովորելու ուշացում, դանդաղեցում, խոսքի՝ առանց որևէ իմաստի օգտագործում: Դիտարկե՛ք լեզվի առանձնահատկությունների այն երեք հատուկ տեսակները, որոնք հանդիպում են նախորդ տարիքում: Դա դերանունների փոփոխումն է, էխոլալիան և ժարգոնի օգտագործումը: Դերանունների փոփոխման օրինակները ներառում են նմանատիպ խոսքային կառույցներ. «Ուզու՞մ եք քաղցրավենիք», երբ նկատի ունի, որ ինքն է ուզում քաղցրավենիք, կամ երբ ասում է «Ես կերել եմ քաղցրավենիք», նա անդրադառնում է այն հանգամանքին, որ դուք եք կերել քաղցրավենիք: Էխոլալիան վերաբերում է հենց նոր ասվածը կրկնելուն կամ ընդօրինակելուն: Օրինակ՝ երեխան կարող է կրկնել հարցերը, այլ ոչ՝ պատասխանել դրանց: Երեխան կարող է նույնիսկ կրկնել անցյալում լսածը ոչ համապատասխան պահին: Դա հանդիսանում է որպես ուշացած էխոլալիա: Ժարգոնը վերաբերում է տարօրինակ կամ անիմաստ բառերի օգտագործմանը՝ առանց որևէ միտք հաղորդելու այդ բառերին: Բանավոր հաղորդակցման ժամանակ հիշե՛ք ուշադրություն դարձնել տոնայնության որակին, ռիթմին և ձայնի բարձրությանը:

**Գնահատում**

**1. Խոսքային հաղորդակցությունը համապատասխանում է երեխայի տարիքին և իրավիճակին:**

1.5 (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Խոսքային հաղորդակցության թեթև դժվարություններ:** Խոսքն ընդհանուր առմամբ ուշանում է: Խոսքի հիմնական մասն իմաստալից է, սակայն կարող են առկա լինել խոսքային կրկնություններ կամ դերանունների փոփոխություններ: Երբեմն կիրառում է անսովոր բառեր կամ ժարգոն:

2.5 (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Խոսքային հաղորդակցության միջին դժվարություններ:** Խոսքը կարող է բացակայել: Երբ բանավոր խոսքն առկա է, այն կարող է լինել որոշակի գիտակցված և արտասովոր խոսքի խառնուրդ, ինչպես օրինակ՝ ժարգոն, էխոլալիա և դերանունների փոփոխում: Արտասովոր խոսքի որոշ օրինակներից կարող է լինել խառնված խոսքը՝ հեռուստացույցով գովազդներից կամ եղանակի տեսության հաղորդումից վերցրած, կամ, օրինակ, երեխան միշտ հարցեր է տալիս կամ տարված է որոշակի թեմաներով:

3.5. (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4. Խոսքային հաղորդակցության ծանր դժվարություններ:** Իմաստավորված խոսքը բացակայում է: Երեխան կարող է ճչալ, անսովոր կամ կենդանական ձայներ արձակել: Երեխան կարող է նաև ցուցաբերել համառություն կամ օգտագործել որոշ անիրական բառեր կամ արտահայտություններ:

**XII. Ոչ խոսքային հաղորդակցում**

Սահմանում: Սա երեխայի ոչ խոսքային հաղորդակցման գնահատումն է, որն արտահայտվում է դիմախաղի, կեցվածքի, ժեստերի, մարմնի շարժումների միջոցով: Այն ներառում է նաև երեխայի արձագանքը մյուսների ոչ խոսքային հաղորդակցմանը: Եթե երեխան ունի

հիմնավորված բանավոր հաղորդակցման ունակություններ, ապա ոչ խոսքային հաղորդակցումը ավելի քիչ կարող է լինել, սակայն խախտված բանավոր խոսք ունեցող երեխան կարող է ունենալ կամ չունենալ զարգացած ոչ խոսքային հաղորդակցման միջոցներ:

**Նկարագիր:** Պատկերացրեք, երեխայի ոչ խոսքային հաղորդակցումը, երբ նա ունի հաղորդակցվելու կարիք կամ ցանկություն: Ինչպես նաև հաշվի առեք երեխայի արձագանքը մյուսների ոչ խոսքային հաղորդակցման նկատմամբ: Օգտագործում է երեխան ժեստեր կամ դիմային շարժումներ՝ ցույց տալու, թե ինչ է ուզում ուտել կամ ինչով է ուզում խաղալ, կամ փորձում է օգտագործել մեծահասակի ձեռքերը՝ որպես իր սեփական ձեռքերի շարունակություն: Արդյոք երեխան օգտագործու՞մ է ժեստեր՝ ցույց տալու որևէ մեկին ինչ-որ տեղ գնալ կամ հրում է նրան՝ ինչ-որ տեղ առաջնորդելու:

### Գնահատում

**1. Երեխայի խոսքային հաղորդակցությունը համապատասխանում է տարիքին:**

1.5 (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Ոչ խոսքային հաղորդակցության թեթև դժվարություններ:** Երեխայի ոչ խոսքային հաղորդակցման օգտագործումը անբավարար է, ոչ լիարժեք: Երեխան կարող է ոչ հստակ մատնանշել, թե ինչ է ուզում, մինչ նույն իրավիճակում գտնվող նույն տարիքի զարգացող երեխան սովորաբար կարող է ավելի հստակ ցույց տալ, թե ինչ է ուզում:

2.5. (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Ոչ խոսքային հաղորդակցության միջին դժվարություններ:** Երեխան հիմնականում անկարող է արտահայտել իր կարիքներն ու ցանկությունները ոչ խոսքային հաղորդակցման միջոցով և չի կարող հասկանալ մյուսների ոչ խոսքային հաղորդակցությունը: Նա կարող է բռնել մեծահասակի ձեռքը՝ առաջնորդելով նրան դեպի իր ուզած առարկան, բայց անկարող է ժեստերով կամ նշաններով մատնանաշել դա:

3.5. (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4. Ոչ խոսքային հաղորդակցության ծանր դժվարություններ:** Երեխան օգտագործում է միայն տարօրինակ կամ անսովոր ժեստեր, որոնք իմաստավորված չեն, այլև չի հասկանում այլ մարդկանց դեմքի արտահայտությունները կամ ժեստերը:

## XIII. Ակտիվության մակարդակ

**Սահմանում:** Գնահատում է երեխայի շարժունակությունը սահմանափակ և ոչ սահմանափակ իրավիճակներում: Այս գնահատման մի մասն է կազմում գերակտիվությունը կամ շարժումների արգելակումը:

**Նկարագիր:** Ուշադրություն դարձրեք, թե որքան շատ է երեխան շարժվում ազատ խաղի ժամանակ և ինչպես է արձագանքում, երբ պետք է նստի: Դիտարկե՛ք երեխայի ցուցաբերած համառության աստիճանը ակտիվության ժամանակ: Եթե չափազանց ակտիվ է, կարող եք նպաստել, որպեսզի երեխան հանգիստ նստի: Այս գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել երեխայի տարիքը, գնահատման վայրը և տևողությունը, երեխայի հոգնածության և ձանձրույթի գործոնները: Ուշադրություն դարձրեք նաև դեղորայքներին, որոնք կարող են ազդեցություն ունենալ երեխայի ակտիվության մակարդակի վրա:

### Գնահատում

**1. Երեխայի ակտիվության մակարդակը համապատասխանում է տարիքին և իրադրությանը:** Երեխան նույն իրավիճակում արտահայտում է նման ակտիվություն, ինչ իր հասակակիցները:

1.5. (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Ակտիվության մակարդակի թեթև դժվարություններ:** Երեխան կարող է լինել թեթևակի անհանգիստ կամ ,ալարկոտե և երբեմն՝ դանդաղաշարժ: Երեխայի ակտիվության մակարդակի խանգարումը չնչին է ազդում իր գործունեության վրա: Սովորաբար հնարավոր է աջակցել երեխային պատշաճ պահպանել իր ակտիվության մակարդակը:

2.5. (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Ակտիվության մակարդակի միջին դժվարություններ:** Երեխան կարող է լինել շատ ակտիվ և իրեն վերահսկելը շատ դժվար է: Երեխան կարող է ունենալ անսահման էներգիա և ունենալ քնելու ցանկության բացակայություն: Եվ հակառակը, կարող է լինել քնկոտ, ալարկոտ, և անհրաժեշտ լինի համառություն և մեծ ջանքեր գործադրել, որպեսզի նա շարժվի:

3.5. (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4. Ակտիվության մակարդակի ծանր դժվարություններ:** Երեխան ցուցաբերում է ծայրահեղ ակտիվություն կամ անտարբերություն և կարող է մի ծայրահեղությունից անցնել մյուսին: Կարող է շատ դժվար լինել կառավարել երեխային: Երբ առկա է գերակտիվություն, այն ազդում է հիմնականում երեխայի կյանքի բոլոր ոլորտների վրա և պահանջում է մեծահասակի մշտական հսկողություն: Եթե երեխան պասիվ է, չափազանց դժվար է նրան մոտիվացնել ինչ-որ գործունեության համար, և հարկավոր է մեծահասակի միջամտություն՝ առաջադրանքի կամ աշխատանքի կատարման նախաձեռնության համար:

## XIV. Մտավոր զարգացման մակարդակ

**Սահմանում:** Սա առնչվում է և՛ երեխայի մտավոր գործունեության ընդհանուր մակարդակի, և՛ մի հմտությունից մյուսին անցնելու հետևողականության և հավասարակշռության հետ: Շատ երեխաների մոտ մտավոր գործունեության ընթացքում հանդիպում է որոշակի անկայունություն: Սակայն այս բաժինը նախատեսված

է նաև չափազանց անսովոր կամ արտակարգ զարգացած հմտությունները հայտնաբերելու համար:

**Նկարագիր:** Ուշադրություն դարձրեք ոչ միայն լեզվի, թվերի, գաղափարների օգտագործման ու դրանք հասկանալու վրա, այլ նաև նրան, թե որքան լավ է երեխան հիշում լսածն ու տեսածը, կամ ինչքանով է ուսումնասիրում շրջակա միջավայրն ու պատկերացնում, թե ինչպես է այն աշխատում: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել նրան, արդյո՞ք երեխան իր մտավոր գործունեության ընդհանուր մակարդակի համեմատ դրսևորում է անսովոր հմտություն մեկ կամ մի քանի ոլորտներում: Արդյո՞ք երեխան ունի հատուկ տաղանդ, օրինակ, թվերի, հիշողության կամ երաժշտության ոլորտում, և արդյո՞ք երեխան ունի արտասովոր զարգացած հմտություններ:

**Գնահատում**

**1. Երեխայի ինտելեկտուալ արձագանքը համապատասխանում է տարիքին:** Ինտելեկտը տուժած չէ և զարգացած է հավասարաչափ տարբեր ոլորտներում: Երեխան չունի անսովոր հմտություններ կամ դժվարություններ:

1.5. (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Ինտելեկտուալ արձագանքի թեթև դժվարություններ:** Երեխան այդքան էլ խելացի չէ, բոլոր ոլորտներում ունի միանման հմտություններ:

2.5. (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Ինտելեկտուալ արձագանքի միջին դժվարություններ:** Երեխան այդքան էլ խելացի չէ իր հասակակիցների համեմատ, սակայն որոշ առանձին ոլորտներ կարող են համապատասխանել տարիքին:

3.5. (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4. Ինտելեկտուալ արձագանքի ծանր դժվարություններ:** Չնայած երեխան այնքան էլ խելացի չէ իր հասակակիցների համեմատ, սակայն որոշ առանձին ոլորտներում կարող է ցուցաբերել ավելի լավ արդյունք, քան հասակակիցները:

**XV. Ամփոփում**

**1. Աուտիզմ չէ: Երեխայի մոտ բացակայում են աուտիզմը բնութագրող համախտանիշները:**

1.5. (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**2. Թեթև աստիճանի աուտիզմ: Երեխայի մոտ նկատվում են առանձին ախտանիշներ:**

2.5. (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**3. Միջին աուտիզմ: Երեխայի մոտ առկա են որոշակի ախտանիշներ:**

3.5. (Եթե հարակից չափանիշների մեջտեղում է)

**4.Ծ անր աուտիզմ: Երեխան ցուցաբերում է բազմակի ախտանիշներ:**

15-30 - աուտիզմ չէ

30-37 - թեթև կամ միջին աստիճանի աուտիզմ

37-60 - ծանր աստիճանի աուտիզմի

## Վաղ մանկական աուտիզմի գնահատման սանդղակ

/արձանագրություն/

Հետազոտվող՝ ______________________________ Դպրոց՝ ______________

(անուն, հայրանուն, ազգանուն)

Ծննդյան օր, ամիս, տարի՝ ______________ Ծննդյան վկայական N ______________

Արձանագրման ամսաթիվը՝ ______________

**Փոխհարաբերությունները մարդկանց հետ** ______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Նմանակում** ______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Հուզական արձագանք** ______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Մարմնի տիրապետում** ______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Իրերի օգտագործում** ______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Հարմարվողականությունը փոփոխություններին** ______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Տեսողական արձագանք** ______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Լսողական արձագանք** ______________________________________________

______________________________________________

**Համի, հոտառության, շոշափման, հպման  արձագանք** ______________________________________________

______________________________________________

**Վախեր և տագնապայնություն** ______________________________________________

______________________________________________

**Խոսքային հաղորդակցում** ______________________________________________

______________________________________________

**Ոչ խոսքային հաղորդակցում** ______________________________________________

______________________________________________

**Ակտիվության մակարդակ** ______________________________________________

______________________________________________

**Մտավոր զարգացման մակարդակ** ______________________________________________

______________________________________________

**Ամփոփում** ______________________________________________

______________________________________________

Առաջարկություն՝

Գնահատման մասնակիցներ՝

## Վաղ մանկական աուտիզմի գնահատման սանդղակ

/գրանցման թերթիկ/

Հետազոտվող՝ ______________________________ Դպրոց՝ ______________

(անուն, հայրանուն, ազգանուն)

Ծննդյան օր, ամիս, տարի՝ ______________ Ծննդյան վկայական N ______________

| | **Բաժիններ** | **Միավոր** |
|---|---|---|
| 1 | Փոխհարաբերությունները մարդկանց հետ | |
| 2 | Նմանակում | |
| 3 | Հուզական արձագանք | |
| 4 | Մարմնի տիրապետում | |
| 5 | Իրերի օգտագործում | |
| 6 | Հարմարողականությունը փոփոխություններին | |
| 7 | Տեսողական արձագանք | |
| 8 | Լսողական արձագանք | |
| 9 | Համի, հոտառության, շոշափման, հպման արձագանք | |
| 10 | Վախեր և տագնապայնություն | |
| 11 | Խոսքային հաղորդակցում | |
| 12 | Ոչ խոսքային հաղորդակցում | |
| 13 | Ակտիվության մակարդակ | |
| 14 | Մտավոր զարգացման մակարդակ | |
| 15 | Ամփոփում/ ընդհանուր բալ | |

Անցկացման օր, ամիս, տարի ______________________________

Գնահատող ______________________________

# ARC - ի ինքնորոշման գնահատման սանդղակ[6]

**Նկարագրություն**

Arc-ի ինքնորոշման գնահատման սանդղակը նախատեսված է 13-17 տարեկան երեխաների համար: Գործիքի կիրառումը պահանջում է ուսումնական միջավայր: Այս գործիքը թույլ է տալիս վեր հանել երեխայի ինքնուրույն գործելու կարողությունը կյանքի տարբեր իրավիճակներում, ինչպես նաև տեղեկատվություն է տալիս նրա հետաքրքրությունների, համոզմունքների և նախընտրությունների վերաբերյալ:

Ինքնորոշման գնահատման սանդղակը բաղկացած է 3 բաժիններից/տիրույթներից

1. ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ
2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ
3. ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒՄ

**Կիրառման կարգ-** Arc-ի ինքնորոշման սանդղակն անց է կացվում հարցազրույցի միջոցով: Հարցազրույց վերցնողը պետք է գաղափար ունենա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առանձնահատկությունների վերաբերյալ:

Հարցազրույցն անց է կացվում երեխայի հետ և միայն երեխայի պատասխանները արձանագրելու միջոցով: Եթե երեխան տառաճանաչ է, ապա նա ինքն է կարդում հարցերը, իսկ հարցազրույց անցկացնողը արձանագրում է պատասխանները գրանցման թերթիկի համապատասխան վանդակներում/սյունակներում: Եթե երեխան տառաճանաչ չէ, կամ տվյալ պահին չի ցանկանում ընթերցել հարցերը, ապա հարցերն ընթերցվում են հարցազրույցը վերցնողի կողմից՝ գրանցման թերթիկում համապատասխանաբար նշելով երեխայի պատասխանները:

**Միավորների հաշվում**

**Մաս 1. ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ**

Ինքնավարություն/Անկախություն տիրույթն ունի ենթատիրույթներ.

Ա. Անկախություն. Անհատական խնամք
 և գործառույթներ ընտանիքում

Բ. Անկախություն. Փոխհարաբերություններ

Գ. Հանգիստ, ժամանց

Դ. Հասարակության մեջ ներգրավվածություն
 և փոխազդեցություն

Ե. Արտադպրոցական գործունեություն

Զ. Ինքնաարտահայտում/ինքնադրսևորում

Երեխան պատասխանում է ենթատիրույթների բոլոր հարցերին՝ ընտրելով տրված հինգ պատասխանների տարբերակներից որևէ մեկը՝ համապատասխան սյունակում նշելով (x)-ով: Երեխան ստանում է միավորներ՝ ըստ հետևյալ պատասխանների.

**0 միավոր՝** «միշտ» պատասխանի դեպքում

**1 միավոր՝** «հաճախ» պատասխանի դեպքում

**2 միավոր՝** «երբեմն» պատասխանի դեպքում

**3 միավոր՝** «հազվադեպ» պատասխանի դեպքում

**4 միավոր՝** «երբեք» պատասխանի դեպքում

Գրանցման թերթիկում տվյալ տիրույթն ունի ընդհանուր միավորի գրանցման համար նախատեսված ազատ տող, որտեղ արձանագրողը, հաշվելով բոլոր ենթատիրույթների միավորներ գումարը, գրանցում է տվյալ տիրույթի ընդհանուր միավորների արդյունքը: Ցածր միավորները ներկայացնում են ինքնավարության ցածր մակարդակ, ավելի բարձր միավորները ցույց են տալիս ինքնավարության բարձր մակարդակ:

**Մաս 2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ**

Այս տիրույթը կազմված է 16 կետից, որոնցից յուրաքանչյուրն ունի 2 տարբերակ՝ Ա, Բ: Երեխան այդ 2 տարբերակներից պետք է ընտրի միայն մեկ տարբերակ, որը լավագույնս կնկարագրի իրեն: Արձանագրողը գրանցման թերթիկում շրջանակի մեջ է վերցնում այն տարբերակը, որը երեխան է նշում:

Գրանցման թերթիկում տվյալ տիրույթն ունի ընդհանուր միավորի գրանցման համար նախատեսված ազատ տող, որտեղ արձանագրողը հաշվում և արձանագրում է տվյալ տիրույթի վերջնական միավորը: Տարբերակները, որոնք արտացոլում են հոգեբանական հասունություն (օր.՝ հավատ սեփական կարողությունների, պատկերացումների, հնարավորությունների վերաբերյալ) գնահատվում են 1 միավորով: Տարբերակները, որոնք չեն արտացոլում հոգեբանական հասունություն, գնահատվում են 0 միավորով: Ստացված միավորները կարող են հասնել մինչև 16-ի, ինչը համապատասխանում է 100%-ին:

[6]The Arc's Self-Determination Scale, https://www.thearc.org/document.doc?id=3671

**Պատասխանների տարբերակներ.**

| տարբերակ | Ա | Բ |
|---|---|---|
| | 0 միավոր | 1 միավոր |
| | 1 միավոր | 0 միավոր |
| | 0 միավոր | 1 միավոր |
| | 1 միավոր | 0 միավոր |
| | 1 միավոր | 0 միավոր |
| | 0 միավոր | 1 միավոր |
| | 1 միավոր | 0 միավոր |
| | 0 միավոր | 1 միավոր |
| | 1 միավոր | 0 միավոր |
| | 0 միավոր | 1 միավոր |
| | 1 միավոր | 0 միավոր |
| | 1 միավոր | 0 միավոր |
| | 1 միավոր | 0 միավոր |
| | 0 միավոր | 1 միավոր |
| | 1 միավոր | 0 միավոր |
| | 0 միավոր | 1 միավոր |

**Մաս 3. ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒՄ**

Այս տիրույթը ցույց է տալիս անհատի ինքնագիտակցման հմտությունների զարգացման աստիճանը: Այստեղ պատասխանները գնահատվում են 0-ից 4 միավորներով՝ հիմնվելով պատասխանի տարբերակների վրա: Այս տիրույթը բաղկացած է 15 հարցից: Յուրաքանչյուր հարցի համար երեխան ընտրում է պատասխանի տարբերակներից մեկը, իսկ արձանագրողը գրանցման թերթիկի համապատասխան սյունակում նշում է (x)-ով:

Պատասխանի տարբերակներ.

**0 միավոր՝** «լիովին համաձայն եմ» պատասխանի դեպքում

**1 միավոր՝** «համաձայն եմ» պատասխանի դեպքում

**2 միավոր՝** «համաձայն եմ որոշ չափով» պատասխանի դեպքում

**3 միավոր՝** «համաձայն չեմ» պատասխանի դեպքում

**4 միավոր՝** «բոլորովին համաձայն չեմ» պատասխանի դեպքում

Բոլոր միավորները գումարվում են և ամփոփվում ընդհանուր միավոր տողում:

Բարձր միավորները արտացոլում են բարձր, զարգացած ինքնագիտակցում:

# ARC- ի ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Երեխայի անուն, հայրանուն, ազգանուն՝ ______________________________

Ծննդյան օր, ամիս, տարի՝ ______________________________

Գնահատման ամսաթիվ ___/___/___

## Մաս 1.
## ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

**Հուշում**
Յուրաքանչյուր հարցի համար ընտրեք այն պատասխանը, որը լավագույնս է նկարագրում Ձեզ:

| **1Ա. Անկախություն. Անհատական խնամք և գործառույթներ ընտանիքում** | միշտ | հաճախ | երբեմն | հազվադեպ | երբեք |
|---|---|---|---|---|---|
| 1. Ես ինքնուրույն եմ պատրաստում իմ սեփական կերակուրը կամ նախաճաշը: | | | | | |
| 2. Ես հոգ եմ տանում իմ հագուստի մասին: | | | | | |
| 3. Ես կատարում եմ տնային գործեր: | | | | | |
| 4. Անհրաժեշտության դեպքում կարողանում եմ ինքս ինձ ցուցաբերել առաջին օգնություն: | | | | | |
| 5. Ես հետևում եմ իմ անձնական հիգիենային: | | | | | |
| **1Բ. Անկախություն. Փոխհարաբերություններ** | միշտ | հաճախ | երբեմն | հազվադեպ | երբեք |
| 6. Ես ընկերանում եմ իմ հասակակիցների հետ: | | | | | |
| 7. Ես օգտվում եմ իմ էլ. փոստից /կարողանում եմ ուղարկել կարճ հաղորդագրություններ կամ գրել էլեկտրոնային նամակներ/: | | | | | |
| 8. Ես կարողանում եմ նախապես պլանավորել իմ օրը: | | | | | |
| **1Գ. Հանգիստ, ժամանց** | միշտ | հաճախ | երբեմն | հազվադեպ | երբեք |
| 9. Ես իմ ազատ ժամանակը անց եմ կացնում՝ ելնելով իմ հետաքրքրություններից: | | | | | |
| 10. Ես պլանավորում եմ իմ հանգստյան օրերը, ինչպես ինքս եմ ցանկանում: | | | | | |
| 11. Ես ներգրավված եմ դպրոցական և համայնքային միջոցառումներին: | | | | | |
| 12. Ես և իմ ընկերները ինքներս ենք ընտրում, թե ինչպես պետք է անցկացնենք մեր հանգիստը: | | | | | |
| 13. Ես լսում եմ միայն իմ նախընտրած երաժշտությունը: | | | | | |
| **1Դ. Հասարակության մեջ ներգրավվածություն և փոխազդեցություն** | միշտ | հաճախ | երբեմն | հազվադեպ | երբեք |
| 14. Ես ինքնակամ մասնակցում եմ այն միջոցառումներին, որոնցում հետաքրքրված եմ: | | | | | |
| 15. Ես գնում եմ կինոթատրոն, համերգների, պարերի և այլ ժամանցային վայրեր: | | | | | |
| 16. Ես երիտասարդական խմբի անդամ եմ: | | | | | |
| **1Ե. Արտադպրոցական գործունեություն** | միշտ | հաճախ | երբեմն | հազվադեպ | երբեք |
| 17. Ես աշխատում եմ կենտրոնանալ դպրոցական այն առարկաների վրա, որոնք նպաստում են իմ մասնագիտական կողմնորոշմանը, կատարելագործում են իմ կարիերայի հնարավորությունները: | | | | | |
| 18. Ես կազմում եմ մասնագիտական կարիերայի պլաններ ապագայի համար: | | | | | |
| 19. Ես աշխատում եմ կամ աշխատել եմ, որպեսզի գումար վաստակեմ: | | | | | |
| 20. Ես մասնակցում եմ կամ մասնակցել եմ որոշ մասնագիտական դասընթացների կամ պարապմունքների: | | | | | |
| 21. Ես փնտրում եմ աշխատանքային հետաքրքրություններ՝ այցելելով աշխատանքային կայքեր: | | | | | |
| **1Զ. Ինքնաարտահայտում/ինքնադրսևորում** | միշտ | հաճախ | երբեմն | հազվադպ | երբեք |
| 22. Ես ինքս եմ ընտրում իմ հագուստը և անձնական իրերը: | | | | | |
| 23. Ես ինքս եմ ընտրում իմ սանրվածքը: | | | | | |
| 24. Ես ինքս եմ ընտրում նվերներ իմ ընտանիքի և ընկերների համար: | | | | | |
| 25. Ես ինքս եմ ձևավորում իմ սենյակը: | | | | | |
| 26. Ես ինքս եմ որոշում, թե ինչպես ծախսեմ իմ անձնական գումարը: | | | | | |

**Մաս 1. ընդհանուր միավոր** ______________

# Մաս 2.
# ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ

**Հուշում**
Նշվածներից ընտրեք այն տարբերակը, որը լավագույնս է նկարագրում Ձեզ:
Յուրաքանչյուր համարի համար ընտրեք միայն մեկ տարբերակ:

| | |
|---|---|
| **1.**<br>Ա. Ես սովորաբար անում եմ այն, ինչ իմ ընկերներն են ցանկանում:<br>Բ. Ես ասում եմ ընկերներիս, որ ես չեմ ցանկանում անել այն, ինչ իրենք են անում: | **2.**<br>Ա. Ես բարձրաձայնում եմ, երբ ունենում եմ նոր մտքեր և կարծիքներ:<br>Բ. Ես սովորաբար համաձայնում եմ այլ մարդկանց մտքերի կամ կարծիքների հետ: |
| **3.**<br>Ա. Ես սովորաբար համաձայնում եմ մարդկանց հետ, երբ նրանք ինձ ասում են, որ ես չեմ կարող անել ինչ-որ մի բան:<br>Բ. Ես ասում եմ մարդկանց, որ կարող եմ անել այն, ինչը նրանք ասում են, որ չեմ կարողանա անել: | **4.**<br>Ա. Երբ ինձ ինչ-որ մեկը վիրավորում է, ես ասում եմ նրան այդ մասին:<br>Բ. Ես վախենում եմ ասել մարդկանց այն մասին, որ իրենք վիրավորում են ինձ: |
| **5.**<br>Ա. Ես կարող եմ ինքնուրույն որոշումներ կայացնել:<br>Բ. Այլ մարդիկ են իմ փոխարեն որոշումներ կայացնում: | **6.**<br>Ա. Դպրոցում շատ աշխատելը ոչ մի արդյունք չի տա ինձ:<br>Բ. Դպրոցում շատ աշխատելը կօգնի ինձ լավ աշխատանք գտնելու հարցում: |
| **7.**<br>Ա. Ես կարող եմ ստանալ այն ամենը, ինչ ուզում եմ՝ շատ աշխատելով:<br>Բ. Ես պետք է հաջողակ լինեմ, որ ստանամ այն ամենը, ինչ ուզում եմ: | **8.**<br>Ա. Ոչ մի օգուտ չկա շարունակել ինչ-որ բան փորձել, որովհետև ոչ մի բան չի փոխվի:<br>Բ. Ես շարունակում եմ փորձել ինչ-որ բան անել, թեկուզ կարող է սխալ եմ անում: |
| **9.**<br>Ա. Ես կարող եմ անել այն աշխատանքը, որը ցանկանում եմ ինքս:<br>Բ. Ես չեմ կարող անել այն աշխատանքը, որը ցանկանում եմ ինքս: | **10.**<br>Ա. Ես չգիտեմ, թե ինչպես են ձեռք բերում ընկերներ:<br>Բ. Ես գիտեմ, թե ինչպես են ձեռք բերում ընկերներ: |
| **11.**<br>Ա. Ես կարող եմ աշխատել մյուսների հետ:<br>Բ. Ես չեմ կարող աշխատել այլ մարդկանց հետ: | **12.**<br>Ա. Ես չեմ կարողանում կատարել ճիշտ ընտրություն:<br>Բ. Ես կարողանում եմ կատարել ճիշտ ընտրություն: |
| **13.**<br>Ա. Եթե ես ունենամ հնարավորություն, ես կկարողանամ ունենալ այն աշխատանքը, որը ցանկանում եմ:<br>Բ. Երևի ես չեմ կարողանա ունենալ այն աշխատանքը, որը ցանկանում եմ՝ թեկուզև ունենամ հնարավորություն: | **14.**<br>Ա. Ես դժվարությամբ եմ նոր ընկերներ ձեռք բերում:<br>Բ. Ես կարողանում եմ ձեռք բերել ընկերներ՝ նոր իրավիճակներում: |
| **15.**<br>Ա. Եթե ինձ պետք է, ես կկարողանամ աշխատել մյուսների հետ<br>Բ. Ես չեմ կարողանա աշխատել մյուսների հետ՝ թեկուզև ինձ պետք է: | **16.**<br>Ա. Ես չեմ կարողանում կատարել ընտրություն:<br>Բ. Ես կարողանում եմ կատարել ընտրություն: |
| **Մաս 2. ընդհանուր միավոր** ____________________ | |

## Մաս 3.
## ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒՄ

Յուշում
Յուրաքանչյուր հարցի համար ընտրեք այն պատասխանը, որը լավագույնս է նկարագրում Ձեզ:

| Պատասխանների տարբերակներ | լիովին համաձայն եմ | համաձայն եմ | համաձայն եմ որոշ չափով | համաձայն չեմ | բոլորովին համաձայն չեմ |
|---|---|---|---|---|---|
| 1. Ես չեմ ամաչում իմ հույզերից: | | | | | |
| 2. Ես չեմ ընդունում իմ առջև դրվող սահմանափակումները: | | | | | |
| 3. Ես կարող եմ զայրանալ այն մարդկանց վրա, որոնց մասին հոգ եմ տանում: | | | | | |
| 4. Ես զգում եմ, որ շատ բաներ չեմ կարողանում անել: | | | | | |
| 5. Ես կարողանում եմ արտահայտել իմ զգացմունքները: | | | | | |
| 6. Ես սիրում եմ ինքս ինձ: | | | | | |
| 7. Ես կարող եմ սիրել մարդկանց՝ չնայած այն բանին, որ կարող եմ համաձայն չլինել նրանց հետ: | | | | | |
| 8. Ես կարևոր մարդ չեմ: | | | | | |
| 9. Ես վախենում եմ, որ կարող եմ սխալ քայլեր անել: | | | | | |
| 10. Ես գիտեմ, թե ինչպես կարող եմ վերացնել իմ առջև դրված սահմանափակումները: | | | | | |
| 11. Ավելի լավ է լինեմ ինքս ինձ նման, քան նմանվել, օրինակ, հանրաճանաչ որևէ մեկին: | | | | | |
| 12. Մարդիկ սիրում են ինձ: | | | | | |
| 13. Ես սիրված եմ, որովհետև սիրում եմ: | | | | | |
| 14. Ես վստահ եմ իմ ունակությունների վրա: | | | | | |
| 15. Ես գիտեմ, թե ինչն է ինձ մոտ ամենից լավ ստացվում: | | | | | |
| **Մաս 3. ընդհանուր միավոր** ____________________ | | | | | |

## ARC-ի ինքնորոշման սանդղակ

/գրանցման թերթիկ/

Անուն, հայրանուն, ազգանուն՝ ____________________

Ծննդյան օր, ամիս, տարի՝ ____________________ ծննդյան վկայական՝ ____________________

Ուսումնական հաստատություն՝ ____________________

Անցկացման օր, ամիս, տարի՝ _____ /_____ /_______ Գնահատողներ՝ ____________________

| **1Ա. Անկախություն. Անհատական խնամք և գործառույթներ ընտանիքում** | Միշտ/0 | Հաճախ/1 | Երբեմն/2 | Հազվադեպ/3 | Երբեք/4 |
|---|---|---|---|---|---|
| **1** | | | | | |
| **2** | | | | | |
| **3** | | | | | |
| **4** | | | | | |
| **5** | | | | | |
| **1Գ. Հանգիստ, ժամանց** | | | | | |
| **9** | | | | | |
| **10** | | | | | |
| **11** | | | | | |
| **12** | | | | | |
| **13** | | | | | |
| **1Ե. Արտադպրոցական գործունեություն** | | | | | |
| **17** | | | | | |
| **18** | | | | | |
| **19** | | | | | |
| **20** | | | | | |
| **21** | | | | | |

| **1Բ. Անկախություն. Փոխհարաբերություններ** | Միշտ/0 | Հաճախ/1 | Երբեմն/2 | Հազվադեպ/3 | Երբեք/4 |
|---|---|---|---|---|---|
| **6** | | | | | |
| **7** | | | | | |
| **8** | | | | | |
| **1Դ. Հասարակության մեջ ներգրավվածություն և փոխազդեցություն** | | | | | |
| **14** | | | | | |
| **15** | | | | | |
| **16** | | | | | |
| **1Զ. Ինքնարտահայտում/Ինքնադրսևորում** | | | | | |
| **22** | | | | | |
| **23** | | | | | |
| **24** | | | | | |
| **25** | | | | | |
| **26** | | | | | |

Ընդհանուր միավոր__________

| գնահատում | 79-104 | 53-78 | 27-52 | 5-26 | 0-4 |
|---|---|---|---|---|---|
| | 4 | 3 | 2 | 1 | 0 |

### 2. Հոգեբանական հասունություն

| | Տարբերակ Ա | Տարբերակ Բ | | Տարբերակ Ա | Տարբերակ Բ | | Տարբերակ Ա | Տարբերակ Բ | | Տարբերակ Ա | Տարբերակ Բ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1.** | 0 | 1 | **5.** | 1 | 0 | **9.** | 1 | 0 | **13.** | 1 | 0 |
| **2.** | 1 | 0 | **6.** | 0 | 1 | **10.** | 0 | 1 | **14.** | 0 | 1 |
| **3.** | 0 | 1 | **7.** | 1 | 0 | **11.** | 1 | 0 | **15.** | 1 | 0 |
| **4.** | 1 | 0 | **8.** | 0 | 1 | **12.** | 1 | 0 | **16.** | 0 | 1 |

**Ընդհանուր միավոր _________ /ստացված միավորը կարող է հասնել մինչև 16-ի, ինչը կհամապատասխանի 100%/**

| Գնահատում | 0-1 | 2-4 | 6-8 | 9-12 | 13-16 |
|---|---|---|---|---|---|
| | 4 | 3 | 2 | 1 | 0 |

### 3. Ինքնագիտակցում

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | 4. | | 7. | | 10. | | 13. | |
| 2. | | 5. | | 8. | | 11. | | 14. | |
| 3. | | 6. | | 9. | | 12. | | 15. | |

| **Միավորներ** | 4 - բոլորովին համաձայն չեմ | 3 - համաձայն չեմ | 2 - համաձայն եմ ինչ-որ չափով | 1 - համաձայն եմ | 0 - լիովին համաձայն եմ |
|---|---|---|---|---|---|

Ընդհանուր միավոր_______________

| **Գնահատում** | 49-64 | 33-48 | 17-32 | 5-16 | 0-4 |
|---|---|---|---|---|---|
| | 4 | 3 | 2 | 1 | 0 |

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


**1.** Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն (մարդիկ, թվեր, փաստեր), Հատուկ կրթության գիտամեթոդական տեղեկատու.- Մաս 5. - Եր.:2011.-108էջ

**2.** Խոսքը ներառման մասին է. Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիությունը Հայաստանում. - Եր.: .ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2012.

**3.** ԿԱՐԳ՝ կրթության կազմակերպման մանկավարժա-հոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման (հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2014թ-ի ապրիլի 13-ի N370-Ն հրամանով):

**4.** Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին: Եր., 2011: 51 էջ

**5.** ՀՀ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ,Հանրակրթության մասինե ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասինե ՀՀ օրենք (ՀՕ-200-Ն) http://edu.am/index.php/am/about/view/107

**6.** How do we identify and assess children with SEN? http://www.victorialane.durham.sch.uk/send/sen-provision/how-do-we-identify-and-assess-children-with-sen/

**7.** International Classification of Functioning, Disability and Health: Children & Youth version: ICF-CY - Switz.: World Health Organization, 2007. - p.351

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

**Ձ ե ռ ն ա ր կ**